ՔՐԻՍՏՈՍԱ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԱՅՈՒԹՅՈՒՆ

Բարրի Սանկտ Քլեյր

«Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայություն»

Հեղինակային իրավունքը՝ 2010 թ. «Ռիչ առաք մինիսթրիս» կազմակերպության և Բարրի Ս. Քլեյրի

Հրատարակվել է «Երիտասարդների ավետարանչության միջոցներ» կազմակերպության նախաձեռնությամբ, www.reach-out.org

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարելի վերահրատարակել, պահպանել ուրիշ կրիչներում կամ փոխանցել որևէ կերպ առանց «Ռիչ առաք մինիսթրիս» կազմակերպության գրավոր թույլտվության:

Առաջին անգլերեն հրատարակությունը՝ 2002թ.

Խմբագիր՝ Գայանե Ալավերդյան

Թարգմանիչ՝ Հովհաննես Թովմասյան

Հայերեն հրատարակության աստվածաշնչյան մեջբերումները՝ «Արարատ» թարգմանությունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Դաս 1-ին. Մեծ պատկեր	9
Դաս 2-րդ. Մտերմություն Քրիստոսի հետ	19
Դաս 3-րդ. Ջերմեռանդ աղոթք	31
Դաս 4-րդ. Առաջնորդների վերապատրաստում	41
Դաս 5-րդ. Ուսանողների վերապատրաստում	55
Դաս 6-րդ. Սովորողների միջավայր	67
Դաս 7-րդ. Ավետարանչության հնարավորություններ	77
Կրկնություն	89
Հաճախակի տրվող հարցեր	101

«Երիտասարդների ավետարանչության միջոցներ» կազմակերպությունն ընձեռում է բոլոր այն ժամանակակից միջոցները, որոնք անհրաժեշտ են Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայության համար:

Նյութերն օգտակար կարող են լինել.

- հովիվների (այդ թվում նաև երիտասարդական ծառայության),
- ծնողների,
- մանուկների հետ աշխատողների,
- կամավորների
- ուսանողների համար:

Մեր տեսլականը

Հիսուսը՝ հաջորդ սերնդի համար

Մեր առաքելությունը

Ամբողջ աշխարհում բազմապատկել առաջնորդների թիվը և անհրաժեշտ տարրերով զինել նրանց, ովքեր երիտասարդ սերնդին կմղեն Հիսուսին հետևելու:

Մեր ռազմավարությունը

Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայությունը լուրջ փոփոխություն է առաջարկում երիտասարդական ծառայության մեջ՝ տանելով.

- Քրիստոսի հետ առավել խորությամբ մտերմանալու,
- Աստծո ներկայության ու զորության համար արվող ջերմեռանդ աղոթքի,
- խորացված և երկարաժամկետ ծառայության համար առաջնորդների վերապատրաստման,
- ուսանողների վերապատրաստման, որը միտված է Քրիստոսի մեջ հասունանալուն,
- շփումների միջոցով սովորողների միջավայր մուտք գործելու,
- ավետարանչական այնպիսի ծրագրերի մշակման, որի արդյունքում սովորողները կգտնեն Հիսուսին:

Մեր ծառայության ընդգրկման շրջանակները

Համաշխարհային մասշտաբով - Ավետարանչության մեր ծառայություններից օգտվում են աշխարհի ավելի քան երեսուն երկրում:

Ազգային – Ավետարանչության մեր ծառայությունը վերապատրաստում և օգտակար նյութեր է տրամադրում տարբեր երկրների քաղաքներում (թե՛ կենտրոնում, թե՛ արվարձաններում), ինչպես նաև գյուղական համայնքներում գործող եկեղեցիներին և եկեղեցական միություններին:

«Երիտասարդների ավետարանչության միջոցներ» կազմակերպության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող ես այցելել **www.reach-out.org** համացանցային կայքը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մատաղ սերունդն Աստծո սրտի մեջ իր տեղն ունի

Աստված քո սրտի մեջ էլ է տեղ բացել այդ սերնդի համար: Գիտենք, որ երիտասարդների դարձի գալը, հոգևոր աճն ու հաղթական կյանքը եկեղեցու համար առաջնային նշանակություն ունեն: Իսկ ինչպե՞ս կատարենք այս առաքելությունը, որպեսզի համահունչ լինի Հիսուսի ծառայության օրինակին. Հիսուսակենտրոն երիտասարդական ծառայության միջոցով, այսինքն՝ իրագործելով այնպիսի ծառայություն, որի առանցքը Հիսուս Քրիստոսն է:

«Ոչ ոք ուրիշ հիմք չի կարող դնել, քան ինչ որ դրված է, որ է՝ Հիսուս Քրիստոսը»:

Ա Կոր. 3.11

«Նրա մոտ երեխաներ էին բերում, որ դիպչի նրանց, բայց աշակերտները սաստում էին բերողներին: Իսկ երբ Հիսուսը տեսավ, բարկացավ ու ասաց նրանց. «Երեխաներին թո՛ւյլ տվեք, որ ինձ մոտ գան, ու մի՛ արգելեք նրանց, քանի որ Աստծո արքայությունն այդպիսիներինն է: Ճշմարիտ եմ ասում ձեզ. ով որ Աստծո արքայությունը երեխայի պես չընդունի, նա այնտեղ չի մտնի»: Եվ նրանց գիրկն առավ, ձեռքը նրանց վրա դրեց և օրհնեց նրանց»:

Մարկոս 10.13-16

Ինչպե՞ս առավելագույնս արդյունավետ գործել

Հույս ունենք, որ «Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայություն» ձեռնարկից օգտվելով՝ քո ծառայությունն ամբողջովին յուրահատուկ կդառնա: Մեր ցանկությունն այն չէ, որ այս ձեռնարկից բոլոր օգտվողների ծառայությունները միանման լինեն: Ընդհակառակը՝ մեր երազանքն այն է, որ քո ծառայության վրա լինի Աստծո յուրահատուկ առաջնորդությունը, որ ոչ մի ուրիշ ծառայություն դրան չնմանվի, որպեսզի Աստված առանձնահատուկ կերպով դրսևորվի քո և քո եկեղեցու միջոցով:

«Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայություն» ձեռնարկն ի ցույց է դնում Քրիստոսի ծառայության «մեծ պատկերը» և ուղղորդում, թե ինչպես պետք է Հիսուսի սկզբունքները կիրառել ծառայության մեջ: Այլ կերպ ասած՝ տալիս ենք կմախքը, որի վրա ինքդ ես «միս ու արյուն» դնելու, տալիս ենք տունը, որն ինքդ ես վերանորոգելու, «կախիչները», որոնց վրա կարող ես «կախել» ողջ ծառայությունդ:

Եթե մեր նյութերից չեք օգտվել կամ ծանոթ չեք մեր մոտեցմանը, վստահեցնում ենք՝ ինչի կարիքն ունենաք, կգտնեք այստեղ: Իսկ եթե ծանոթ եք մեր նյութերին, մասնակցել եք մեր վերապատրաստման դասընթացներին, ապա այս ձեռնարկը ձեզ համար կարող է որպես ուղեցույց ծառայել: Այն կօգնի կարևորն անկարևորից զատելու, գործի մեջ հաստատվելու և ծառայությունն ավելի արդյունավետ դարձնելու: Եթե լրջորեն եք վերաբերվում երիտասարդական մյուս առաջնորդներին, ապա այս ձեռնարկը, որպես վերապատրաստման օգտակար միջոց, կարող եք փոխանցել նաև նրանց:

Ինչպե՞ս ինքնուրույն յուրացնել այս նյութը

1. Նախ՝ որոշի՛ր, թե ինչ հաճախականությամբ կարող ես զբաղվել այս նյութերով. հարկավոր է ընդամենը ութ ժամ տրամադրել՝ մեկական ժամով: Կարող ես անդրադառնալ շաբաթը մեկ կամ ամեն օր, կամ, եթե մարաթոնյան վազքի տրամադրվածություն ունես, կարող ես երկու-երեք օրում ավարտել ողջ նյութը: Ի՛նքդ քեզ համար ժամեր նշանակիր և հավատարմաբար պահի՛ր դրանք:

2. Խորասուզվի՛ր նյութի մեջ: Ամեն անգամ, երբ նստես ուսումնասիրելու այն, անջատի՛ր հեռախոսդ, թող քեզ շեղող ոչ մի բան չմնա: Ապա, ժամանակ առ ժամանակ աղոթելով, կարդա՛ յուրաքանչյուր դասի նյութը սկզբից մինչև վերջ՝ նպատակներից մինչև գործողությունների պլանը: Փորձի՛ր լսել, թե ինչ է Աստված շշնջում հոգուդ մեջ: Նշումներ արա: Օրագի՛ր պահիր և այնտեղ գրառի՛ր այդ ընթացքում ծնված մտքերդ ու աղոթքներդ: Ուսումնառության այս գործընթացով հապշտապ մի՛ անցիր:

3. Մեր համացանցային www.reach-out.org կայքից անվճար ներբեռնի՛ր երեք սկավառակների նյութերը: Մի քանի անգամ լսի՛ր դրանք:

4. Գործողությունների պլանի օգնությամբ որոշի՛ր անելիքներդ և իրականացրո՛ւ: Այս ձեռնարկը մտքի վարժանքի համար չէ, այլ, հեռանկարներ տալով, այն քեզ մղում է

գործողության, որպեսզի կարողանաս իրական և չափելի քայլերով հասնել նպատակիդ:

5. Անմիջապես սկսի՛ր կատարել մեկ կամ երկու առաջնահերթ գործեր. այն ամենը, ինչը տվյալ պահին կարևորագույնն ես համարում:

Այս ձեռնարկով ինչպե՞ս առաջնորդել մյուսներին

«Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայություն» ձեռնարկն ի սկզբանե ցույց է տալիս, որ ծառայությանդ կարևորագույն հիմքերից մեկը առաջնորդների խումբ կազմավորելն է: Վերապատրաստման այս նյութերը կարող ես հեշտությամբ վերածևակերպել, որպեսզի դրանք առավել օգտակար լինեն քո լծակիցների համար և ուղղորդեն նրանց:

Դասընթացը կարելի է անցկացնել խմբով՝ մի հանգիստ տեղ հավաքվելով, մի քանի առանձին դասերով, որոնց ընթացքում հնարավորություն կունենաս հայտնելու երիտասարդական ծառայության քո տեսլականը և նպաստելու, որ լծակիցներդ նույնպես ձևավորեն իրենց տեսլականը: Նյութը կամավորներին, ծնողներին, ուսանողներին ներկայացնելու համար հաշվի՛ առ հետևյալ հանգամանքները.

1. Լա՛վ ծանոթացիր այս նյութերին: Նշումնե՛ր կատարիր և այդ ամենը լրացրո՛ւ սեփական պատմություններով և օրինակներով:

2. Որոշի՛ր դասընթացի վայրը: Լավ կլինի հավաքվեք ձեր կամ կամավորներից մեկի տանը, որովհետև հյուրասենյակի ոչ պաշտոնական մթնոլորտը կամ ճաշասենյակի սեղանի շուրջ ստեղծվող բարեկամական միջավայրն ուսումնառությունն առավել մատչելի կդարձնի:

3. Սահմանի՛ր յուրաքանչյուր հանդիպման սկիզբն ու վերջը, այնպես, որ ամեն դասի տևողությունը լինի 1-1.5 ժամ՝ ոչ ավելի, ընդ որում՝ 15 րոպե աղոթելու, կրկնելու կամ միմյանց ինչ-որ տեղեկություն հայտնելու, 45 րոպե՝ օրվա թեմայի ներկայացման ու քննարկման համար. վերջում 15 րոպե տրամադրեք ուսանողների համար աղոթելուն:

4. Նյութե՛ր տուր մյուսներին: Ուսանողների համար գնի՛ր «Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայություն» ձեռնարկի լրացուցիչ օրինակներ. սույն ձեռնարկը, ինչպես նաև մի շարք այլ նյութեր, կարող ես պատվիրել մեր համացանցային www.reach-out.org կայքից:

5. Լա՛վ նախապատրաստվիր: Նախօրո՛ք որոշիր, թե ինչն ինչից հետո ես անելու, ում ինչ ես ասելու և այլն:

6. Սկսի՛ր ժամանակին: Մի՛ չարաշահի՛ր մյուսների տրամադրած ժամանակը:

7. Թույլ մի՛ տուր, որ մասնակիցները քննարկումներից շեղվեն: Հարցերը տո՛ւր կարճ ու

կոնկրետ: Հարգի՛ր յուրաքանչյուր մասնակցի կարծիքը: Սուրբ գրքին մո՛տ մնա: Թույլ մի՛ տուր, որ մակերեսային ու անիմաստ խոսքերն անցնեն աննկատ: Ի՞նքդ հարցեր տուր: Եվ ամեն ինչ արա՛, որ բոլորը մասնակցեն:

8. Շեշտի՛ր գործնականի կարևորությունը: Յուրաքանչյուր դասի ավարտին բավականին ժամանա՛կ տրամադրիր, որպեսզի մասնակիցները կարողանան «Գործողությունների պլան» բաժնում գրի առնել այն ամենը, ինչ պատրաստվում են կատարել: Այնուհետև նրանց հնարավորությո՛ւն տուր ասելու, թե ինչ են ուզում անել: Հատկապես թող ասեն մի կոնկրետ գործողություն, որը մտադիր են իրականացնել եկող շաբաթվա ընթացքում: Լավ կլինի, որ ամեն մեկն ունենա իր կատարելիք գործողությունների համար հաշվետվություն պահանջող ընկեր:

Առաջնորդների համար հաջորդ ներդրումը կլինի «Առաջնորդների վերապատրաստում» շարքի եռահատոր ձեռնարկը, որոնցից առաջինը կոչվում է «Հիսուս Քրիստոսի հետ անձնական ընթացք», երկրորդը՝ «Կյանքի և ծառայության տեսլականը» և երրորդը՝ «Ուսանողներին առաջնորդելու անհրաժեշտ միջոցները»: Տե՛ս www.reach-out.org կայքը:

Իմ աղոթքը քեզ համար

Աղոթում եմ, որ «մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածը՝ փառքի Հայրը, իրեն ճանաչելու համար ձեզ իմաստության և հայտնության հոգի տա, որ ձեր սրտերի աչքերը լուսավորվեն, և ճանաչեք, թե ի՞նչ է նրա կոչման հույսը, ի՞նչ է սրբերի մեջ իր ժառանգության փառավոր մեծությունը, և ի՞նչ է նրա զորության գերազանց մեծությունը մեզանում, որ հավատացինք իր կարող զորության հաջողության պես»:

Եփես. 1.17-19

ՄԵԾ ՊԱՏԿԵՐ

ԴԱՍ 1-ԻՆ

Հետևենք Հիսուսի օրինակին

Ուսումնասիրելով Ավետարանները՝ տեսնում ենք Հիսուսի ծառայությանը բնորոշ մի գիծ. այդ մասին Հիսուսը բացատրեց այն բանից հետո, երբ փարիսեցիները նրան մեղադրեցին շաբաթ օրը բժշկություն անելու, ապա նաև իրեն Աստծուն հավասար դասելու համար:

> *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. Որդին իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ նա անում է, հենց Որդին էլ այդ բանը նրա նման է անում»:*
>
> *Հովհ. 5.19*

Հոր հետ մտերիմ հաղորդակցության մեջ լինելով՝ Հիսուսը տեսնում և սովորում էր այն ամենը, ինչ պիտի աներ: Դրա շնորհիվ էլ նրա օրերը ոչ միայն բովանդակալից էին, այլ նաև յուրաքանչյուր օրը յուրահատուկ էր: Կարող ենք վստահաբար ասել, որ Աստված ուզում է, որ մեր ծառայությունները նույնպես բովանդակալից ու յուրահատուկ լինեն՝ հիմնված լինելով իր հետ մեր մտերիմ հարաբերության վրա: Ուստի և «Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայություն» դասընթացը ոչ թե նմանեցնում է բոլորի ծառայությունները, այլ նպաստում է բովանդակալից ու յուրահատուկ ծառայություն ծավալելուն, որի առաջնորդիչ ուժը Հիսուսին ջերմեռանդորեն հետևելու փափագն է: Այսինքն՝ **նախ և առաջ հարկավոր է մի սիրտ, որը փափագում է տեսնել Հոր գործերը և ապա կատարել դրանք:**

Հիսուսը նայում էր Հորը, մենք էլ՝ Հիսուսին: Իսկ ի՞նչ ենք տեսնում Հիսուսին նայելով: Տեսնում ենք բնորոշ գծեր, տեսնում ենք սկզբունքներ, որոնցով առաջնորդվում էր Տերը, և որոնցով ինքներս պիտի ուղղորդվենք: Հորը երբեք չսահմանափակելով սեփական ընկալման կաղապարի մեջ, երբեք չանտեսելով հարափոփոխ իրավիճակների հրամայականը՝ Հիսուսը, այնուամենայնիվ, որոշակի ռազմավարությամբ էր առաջնորդվում: Ինչ-պիսի՞ն էր այն:

Հիսուսը հնազանդվում էր Հորը: Գեթսեմանիի պարտեզում Հիսուսի հոգեկան տառապանքներ կրելը նրա հնազանդության վառ օրինակներից է, որն այսօր էլ մեզ է հնազանդության կոչ անում:

Հիսուսն իր աշակերտների համար շատ բան արեց: Անգամ հպանցիկ հայացքով դիտարկելիս պարզ է դառնում, թե որքան մեծ էր այդ ներդրումը Տասներկուսի կյանքում: Երեք տարի շարունակ աշակերտները կատարելագործման մի յուրօրինակ դասընթաց էին անցնում: Հիսուսի առաջնորդությամբ էր, որ անձնականից հրաժարվեցին և Սուրբ Հոգով լցվեցին, ազատ ունկնդրի ու դիտորդական կարգավիճակից անցան ծառայություն առաջնորդելուն: Աստիճանաբար սկսեցին Ավետարանի Բարի Լուրը տարածել, կոտրված սրտերով մարդկանց մխիթարել, «կապվածներին» ազատագրել և, ի վերջո, շարունակել այն ծառայությունը, որի ականատեսն էին եղել այդ տարիների ընթացքում: Արդյունքում՝ Հիսուսը կազմավորեց առաջնորդների մի խումբ, որն աշխարհը տակնուվրա արեց:

Հիսուսի աշակերտներն էլ զգալի չափով նվիրվեցին ուրիշներին: Թե՛ Հիսուսի, և թե՛ վաղ շրջանի եկեղեցու ծառայության առանցքում մարդկանց աշակերտ դարձնելն էր, որն ուներ բազմապատկվելու մի հետաքրքիր առանձնահատկություն: Մարդիկ նվիրվում էին ուրիշներին՝ հանուն Աստծո արքայության: Եկեղեցին նոր թափով առաջ էր ընթանում և փոխում շրջապատի մարդկանց կյանքը: Հիսուսին հետևողների մի փոքր խմբի նվիրվելը և նրանց աշակերտ դարձնելը տակավին մնում է բոլոր հնարավոր ծառայություններից լավագույնը: Եվ եթե աշակերտ դարձնելու այս ծառայությունն արվի Հիսուսի ծառայության պես, ապա կփոխվեն ոչ միայն տվյալ խմբի անդամները, այլ նաև բոլոր այն մարդիկ, որոնց նրանք կծառայեն:

Ավետարանի Բարի Լուրն աշխարհով մեկ տարածելը դարձավ աշակերտների կյանքի իմաստը, քանի որ նրանք ականատես էին եղել, թե որքան էր ինքը՝ Հիսուսը, կարևորում դա: Նա անցավ մարդկային բոլոր շինծու սահմաններից ու բոլորին հավասար համարեց. բարձրացրեց անառակների, բորոտների, չքավորների, կաղերի ու կույրերի արժանապատվությունը: Հիսուսն աշակերտներին բերեց հասունության մի նոր մակարդակի, որ նրանք ի զորու լինեն ծառայելու. նույնը պիտի և մենք անենք, և ծառայելն էլ պիտի լինի եկեղեցու պատերից դուրս:

Հիսուսի ծառայությունը գրավիչ էր բազմության համար. ինչ էլ որ աներ՝ ուսուցաներ, բժշկեր, քարոզեր, դևեր հաներ, հինգ հացով ու երկու ձկով հազարավոր մարդկանց կերակրեր, ուշադրության կենտրոնում ինքն էր: Կարևորը ո՛չ աշակերտներն էին, ո՛չ ուսուցանելու մոտեցումները, ո՛չ զարմանահրաշ գործերը, ո՛չ խորիմաստ ուսմունքը, ո՛չ էլ որևէ այլ բան. կարևորը Հիսուսն էր՝ այն, թե ով էր Նա և ինչու էր եկել: Եվ այսօր էլ հենց դրա՝ Հիսուսին կարևորող երիտասարդական ծառայությունների կարիքն ունենք եկեղեցիներում: Եթե ծառայության կենտրոնում որևէ այլ բան կա, եթե ծառայությունը սևեռված չէ Հիսուսի վրա, ապա վաղ թե ուշ կտեսնենք մեր ձեռնունայն ու ապարդյուն վիճակը, իսկ եթե Հիսուսի պես ձգտում ենք հավիտենական հետք թողնելու, ապա մեր ծառայության մեջ Հիսուսին պիտի տրվի իրեն արժանի կենտրոնական տեղն ու առաջնությունը:

ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐ

Հեշտ չէ անկեղծորեն գնահատել սեփական վիճակը, սակայն հենց դա է անհրաժեշտ այն վիճակին հասնելու համար, որին ձգտում ենք: Ուստի համարձակվի՛ր պատասխանել այս բարդ հարցերին, որպեսզի պարզես, թե որքան ես կենտրոնացած Հիսուսի վրա: Շրջանակի մեջ առ 1-10 թվանշաններից մեկը, որտեղ 1-ն ամենահեռուն է, 10-ը՝ ամենամոտը:

1. Որքա՞ն եմ ուշադրություն դարձնում և ժամանակ տրամադրում Հիսուսի հետ մտերմանալուն:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

2. Որքա՞ն ժամանակ եմ տրամադրում և ի՞նչ պարբերականությամբ եմ հանդիպում ծառայության անդամների և ծնողների հետ՝ աղոթելու նրանց հետ և նրանց համար, աղոթելու բոլոր նրանց համար, ովքեր Հիսուսի կարիքն ունեն:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

3. Որքանո՞վ է լուրջ կամավորների վերաբերմունքը Հիսուսի, միմյանց և սովորողներին ծառայելու կոչի հանդեպ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

4. Քո ծառայության անդամներից քանի՞ տոկոսն է ընդգրկված աշակերտությանը Բարի Լուրը ավետող նպատակասլաց որևէ խմբում:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

5. Քո կամավորների և ուսանողների քանի՞ տոկոսն է իրեն համարում կրթօջախներում Հիսուսի մասին ակտիվորեն վկայելու պատրաստ մարդ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

6. Քո ավետարանչության վերջին ծառայությանը եկած ուսանողների քանի՞ տոկոսն էր աշխարհիկ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

Այս հարցերի անկեղծ պատասխանները կնպաստեն պատկերացում կազմելու քո երիտասարդական ծառայության ներկա վիճակի մասին: Հուսով ենք, որ դրանք քո մեջ փոփոխություններ անելու ցանկություն կառաջացնեն: Հետագա ամեն դասում կլինեն տվյալ թեմայից բխող հավելյալ հարցեր, որոնք նախատեսված են մտածել տալու համար:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպե՞ս պատկերացնել «Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայության» տեսլականը:

Տեսլականը պարզ պատկերացնելու համար կարդանք Մատթեոս 9.35-38 խոսքերը, որտեղ ակնարկվում է մեր ծառայության տեսլականի մասին:

> *«Հիսուսը ման էր գալիս բոլոր քաղաքներում ու գյուղերում, ուսուցանում նրանց ժողովարաններում, արքայության Ավետարանը քարոզում, ժողովրդի մեջ ամեն ցավ ու ամեն հիվանդություն բժշկում: Եվ նա, ժողովուրդներին տեսնելով՝ գթաց նրանց, որ հոգնել ու ցիրուցան էին եղել, ինչպես ոչխարները, որ հովիվ չունեն: Այն ժամանակ իր աշակերտներին ասաց. «Հունձը շատ է, բայց մշակները՝ քիչ: Արդ՝ հնձի Տիրոջն աղաչեցե՛ք, որ իր հունձի համար մշակներ ուղարկի»:*
>
> *Մատթեոս 9.35-38*

Հիսուսն ինչպե՞ս էր մարդկանց հետ վարվում՝ ըստ վերոնշյալ (9.35-36) խոսքերի:

Հիսուսն ի՞նչ հուշեց իր աշակերտներին իր տեսլականի մասին (9.37-38):

Մակերեսորեն նայենք, թե խորությամբ ուսումնասիրենք չորս Ավետարանները, միևնույն է, կտեսնենք այն մոտեցումը, որով Հիսուսն իրականացնում էր իր ծառայությունը:

Նկարագրենք երիտասարդ սերնդին

Ինչպե՞ս նկարագրեց Հիսուսն իր մոտ հավաքված բազմությանը Մատթեոս 9.37-ում:

Ինչպե՞ս կնկարագրես այսօրվա բազմությանը:

- Հոգնած
- Ցիրուցան եղած
- Ինչպես ոչխարներ, որ հովիվ չունեն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հիսուսի նկարագրությունն արդիական է ցայսօր:

Յուրաքանչյուր 24 ժամվա ընթացքում

17,297 երեխայի՝ դպրոցից հեռացնելու գործերն են քննում,

367 երեխա ձերբակալվում է թմրամիջոցներ օգտագործելու պատճառով,

7,883 երեխա խոշտանգումների է ենթարկվում կամ տնից դուրս վռնդվում,

180 երեխա ձերբակալվում է բռնարարքներ գործելու պատճառով,

4,248 երեխայի ձերբակալում են,

9 երեխա դառնում է մարդասպանության զոհ,

2,861 երեխա դպրոցից դուրս է մնում,

5 երեխա ինքնասպանություն է գործում,

1,329 երեխա ծնվում է դեռահաս աղջիկներից,

1 երեխա մահանում է ՄԻԱՎ-ից:

* Ուսումնական տարվա 180 օրերի, օրական յոթ ժամերի հաշվարկով. (c) Երեխաների պաշտպանության հիմնադրամ (Children's Defense Fund):

Համարներին անուններ տանք

Գտի՛ր Մատթ. 9.36-ում առկա այն բառը, որն ասում է, թե Հիսուսն ինչ զգաց բազմության հանդեպ:

Գրի՛ր մի երիտասարդի կամ պատանու անուն, ով համապատասխանում է Հիսուսի նկարագրությանը:

Ինչպիսի՞ն են նրա կենսակերպը, վերաբերմունքը, սովորությունները, նախընտրությունները և զբաղմունքները:

Արդյո՞ք այդ մարդու հանդեպ զգում ես այն, ինչ Հիսուսն էր զգում իրեն շրջապատող բազմության հանդեպ:

Գրի՛ առ այդ մարդու համար արված քո աղոթքը:

Այս ձեռնարկում ինչ որ սովորես, կիրառի՛ր տվյալ մարդու օգտին և ոչ միայն նրա համար, այլ նաև հանուն Քրիստոսի:

Տեսնենք, թե ինչի ենք հասնում

Ավելի՛ ուշադիր կարդա Մատթ. 9.38 խոսքը: Իր աշակերտներին Հիսուսը պարզ ու հստակ կերպով հայտնում է այն մոտեցումը, որ հարկավոր է ունենալ «հոգնած ու ցիրուցան եղած, առանց հովվի մնացած ոչխարների» պես մարդկանց հանդեպ: Նկատի՛ր, թե ինչ պարզ է այս մոտեցումը:

Հիսուս. «Աղաչեցե՛ք հունձքի Տիրոջը... որ մշակներ հանի... իր հունձի մեջ»:

Գործողություն	ԱՂՈԹԵԼ Հետևել Հիսուսին	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԵԼ Բազմապատկել առաջնորդների թիվը	ԱՎԵՏԱՐԱՆԵԼ Հասնել մարդկանց
Ռազմավարություն	Մտերմություն Քրիստոսի հետ Ջերմեռանդ աղոթք	Առաջնորդների վերապատրաստում Ուսանողների վերապատրաստում	Մուտք գործել սովորողների միջավայր Ավետարանչական ծրագրեր մշակել

Պատկերացնել «մեծ պատկերը»

Երբ կարողանանք «մեծ պատկերը» պարզորոշ կերպով պատկերացել, ոչ միայն կիմանանք, թե ինչպես պետք է զարգացնել եկեղեցու համապատասխան ծառայությունը, այլ նաև այն, թե ինչպես է հնարավոր նպատակին հետամուտ լինել՝ ամեն ուսումնական հաստատության ամեն սովորողի կյանքը փոխել՝ նրան ծանոթացնելով Հիսուսի հետ:

Խորհի՛ր մեծ պատկերի մասին

Մատթեոս 9.35-38 խոսքերից բխող ռազմավարությունը հենված է վեց էական տարրերի վրա, որոնք Հիսուսը հետևողականորեն դրսևորում է բոլոր չորս Ավետարաններում: Խորհի՛ր, թե ինչպես կարող են այդ տարրերը հիմնավորվել քո կյանքում և քո ծառայության մեջ:

Քրիստոսի հետ առավել խորությամբ մտերմանալ.

Ինչպե՞ս խորացնենք մեր հարաբերությունը Քրիստոսի հետ: *Զգտի՛ր Հիսուսի հետ մտերիմ կապ ունենալ և ըստ դրա՛ ապրիր. հնազանդվի՛ր Քրիստոսին, հենց դրանով էլ քո շրջապատի մարդկանց ցույց կտաս նրա վերաբերմունքը (Մարկ. 1.7-8):*

Ջերմեռանդ աղոթք.

Ինչպե՞ս ես աղոթում, որ Աստծո ներկայությունն ու զորությունը դրսևորվի քո ծառայության մեջ: *Հավաքական աղոթքի մի այնպիսի՛ մոտեցում մշակիր, որ աղոթես կամավորներիդ, ծնողներիդ և ուսանողներիդ հետ մեկտեղ (Մատթ. 18.18-20):*

Առաջնորդների վերապատրաստում.

Ինչպե՞ս պետք է ի հայտ բերել բանիմաց և լուրջ առաջնորդների՝ երկարաժամկետ ծառայության համար: *Տուր ամեն անհրաժեշտն այն մարդկանց, ովքեր երիտասարդներին ավետարանելու և աշակերտ դարձնելու կամեցողություն ու կարողություն ունեն (Մարկ. 1.16-20):*

Ուսանողների վերապատրաստում.

Ինչպե՞ս պետք է աշակերտ դարձնել երիտասարդներին, որպեսզի ձգտեն հոգևոր կյանքով ապրելու և իրենց ընկերական շրջապատում դրական ազդեցություն թողնելու: *Փոքր խմբերում պարբերաբար հավաքվելու միջոցով ուսանողներին կո՛չ արա առավել լրջորեն վերաբերվել Հիսուսի հետ ունեցած իրենց հարաբերություններին (Մարկ. 3.13-15):*

Մուտք գործել երիտասարդական միջավայր.

Ինչպե՞ս է պետք շահագրգռել առաջնորդներին, ծնողներին ու երիտասարդներին, որպեսզի մուտք գործեն ուսանողական միջավայր: *Ժամանա՛կ անցկացրու նրանց հետ, նրանց «դաշտում» և պահը ճի՛շտ օգտագործիր նրանց օգնելու համար (Մարկ. 1.40-42):*

Ավետարանչական ծրագրերի մշակում.

Ինչպե՞ս պետք է ավետարանչական ծրագրեր կազմել, որպեսզի կամավոր երիտասարդները գործեն իրենց ընկերական շրջապատում: *Այս հարցում խիստ կարևոր է հաշվի առնել ազգային առանձնահատկությունները. ինչպե՞ս է ընդունված անհավատ ընկերներին ներկայացնել Հիսուսի Բարի Լուրը (Մարկ. 4.1-2):*

Գործնական քայլեր

«Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայության» «մեծ պատկերն» ըմբռնելը նշանակում է, որ հասկացել ես հիմնական նյութը: Կատարի՛ր հետևյալ քայլերը, որպեսզի ավելի պարզ տեսնես քո տեսլականը:

- Անգի՛ր սովորիր Մատթեոս 9.35-38 հատվածը: Այնքա՛ն ասա, որ այդ խոսքերը մխրճվեն մտքիդ ու սրտիդ մեջ:
- Հիշի՛ր այն ուսանողին, ում մասին ասացիր, թե «հոգնած ու ցիրուցան եղած, հովիվ չունեցող ոչխարի պես» է, և նրա նկարը դի՛ր այս գրքույկի մեջ, որպեսզի մտապահես, թե ինչ մարդկանց ես ծառայելու:
- Լրացրո՛ւ հետևյալ էջի աղյուսակը, որպեսզի պարզ լինի, թե քո ընթացիկ ծառայության որ գործողություններն են համապատասխանում «Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայության» տարրերին և որոնք՝ ոչ: Կազմի՛ր ընթացիկ գործողությունների ցանկ, ապա նշո՛ւմ արա կա՛մ «համապատասխանում է», կա՛մ «չի համապատասխանում» սյունակում:

2-7-րդ դասերում առավել հանգամանորեն կքննարկվի «Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայության» յուրաքանչյուր տարրը, դա կնպաստի քո ծառայության համար տեսլականի առաջացմանն ու իրականացմանը:

ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրեր և ծառայություններ	Աղոթք		Վերապատրաստում		Ավետարանչություն		
	Ստերմություն Քրիստոսի հետ	Ջերմեռանդ աղոթք	Առաջնորդների վերապատրաստում	Ուսանողների վերապատրաստում	Սովորողների միջավայր	Ավետարանչության հնարավորություններ	Չի հայտնատեսանվում

Հետևենք Հիսուսի օրինակին

Հայրը, Որդին և Սուրբ Հոգին մեզ մտերմանալու կոչ են անում:

Հայր Աստված. «Սկզբում Աստված...». այս խոսքերով է սկսվում Աստվածաշունչը: Ժամանակից առաջ **Աստված կար**: Երբ ժամանակը եղավ, Նա ամեն բան արարեց՝ «ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծննդ. 1.1): **Աստված կա**, գոյությունուն ունի և արարումից ի վեր իր արարչագործության տերն է ու տիրակալը: Սաղմոսերգուն ասում է. «ՏԵՐԸ երկնքում հաստատեց իր աթոռը, և նրա թագավորությունը տիրում է բոլորին» (Սաղմոս 103.19): Աստվածաշնչում ծայրից ծայր կրկնվում է այս մասին: Օրինակ, եփեսացիներին Պողոսն ասում է, որ նա է «մեկ Աստվածը և ամենքի Հայրը, որ ամենքի վրա և ամենքի հետ ու ձեր ամենքի մեջ է» (Եփես. 4.6): Բազմիցս գրված է նաև, որ **Աստված լինելու է առհավետ**: Ապագայում տիրելու է, ինչպես տիրել է և տիրում է: Հովհաննես առաքյալն իր հայտնության մասին վկայում է՝ ասելով. «Եվ ամեն արարած, որ երկնքում է և երկրի վրա, երկրի ընդերքում և ծովում, նրանք բոլորը, որ նրա մեջ են, լսեցի, որ ասում էին. «Գահի վրա նստողին ու Գառանը լինի օրհնությունը, փառքն ու կարողությունը հավիտյանս հավիտենից»» (Հայտն. 5.13): Աստված իշխում ու թագավորում է իր արարչագործության ու իր արարածների վրա:

Որդի Աստված. Հայր Աստված իր ամբողջ իշխանությունը տվել է Հիսուսին: Հիսուսն է այդ մասին վկայում՝ ասելով. «Երկնքում ու երկրիս վրա ամբողջ իշխանությունն ինձ տրվեց» (Մատթ. 28.18): Պողոս առաքյալը հաճախ էր հաստատում Հիսուսի գերակա իշխանությունը: Այդ իշխանական զորության մասին այսպես է նշում եփեսացիներին գրելիս.

> *«Եվ ինչ է նրա զորության գերազանց մեծությունը մեր մեջ, որ հավատացինք իր կարող զորության հաջողության պես, որ Քրիստոսի մեջ գործադրեց՝ նրան մեռելների միջից հարություն տալով, և նրան իր աջ կողմը նստեցրեց երկնավորներում: Ամեն իշխանությունից և պետությունից, զորությունից և տերությունից վեր, և ամեն անունից էլ վեր, որ անվանվում է ոչ միայն այս աշխարհում, այլ նաև այն՝ հանդերձյալում: Եվ ամեն*

բան հնազանդեցրեց նրա ոտքերի տակ, նրան եկեղեցու գլուխ դրեց՝ բոլոր բաների վրա»:

(Եփեսացիս 1.19-22)

Փորձելով ներկայացնել Հիսուսի իսկությունը՝ եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը գրում է (1.3), որ Նա.

- Ժառանգ է. Աստված Որդուն «ամեն բանի ժառանգ դրեց»:
- Արարիչ է. Աստված Որդու միջոցով «աշխարհը ստեղծեց»:
- Արտացոլող է. Որդին Աստծո «փառքի լույսն է», Հիսուսն Աստծո հայելային պատկերն է, «նրա էության նկարագիրը»:
- Պահպանող է. Որդին յուրաքանչյուր վայրկյան տիեզերքի ամեն մի համակարգ «կրում է իր զորության խոսքով»,
- Մաքրագործող է. Որդին խաչելության ենթարկվեց «մեր մեղքերը մաքրելու» համար,
- Իշխող է. Հարությունից հետո Որդին «նստեց Աստծո մեծության աջ կողմում՝ բարձունքներում», որտեղից իշխում ու թագավորում է:

Անկասկած՝ Հիսուսը Տեր է: Եվ մի օր պիտի «Հիսուսի անունին ծնրադրեն երկնավորները և երկրավորները, և ամեն լեզու դավանի, որ Հիսուս Քրիստոսը Տեր է Հոր՝ Աստծու փառքի համար» (Փիլիպ. 2.10-11):

Սուրբ Հոգի Աստված. Որդին ճանապարհ է հարթում, որ Հոգին բնակվի մեր մեջ, որպեսզի ճանաչենք Աստծուն, գիտակցենք, թե Հիսուսն ինչ է կատարել մեզ համար և ապրենք Հոգու զորությամբ: Պողոս առաքյալն ասում է. «Քանի որ դուք որդիներ եք, Աստված ձեր սրտերի մեջ իր Որդու Հոգին ուղարկեց, որ աղաղակում է «Աբբա» (Հայրի՜կ)» (Գաղ. 4.6): Ու քանի որ որդիներ ենք, այլևս մեղքի ստրուկներ չենք: Ավելին. «Քրիստոսով Աստծո ժառանգ ենք» (Գաղ. 4.7): Բնակվելով մեր մեջ՝ Սուրբ Հոգին մշտապես **փափագ** է բորբոքում Հիսուսի հանդեպ, մեզ **զորություն** է տալիս ապրելու այնպես, ինչպես նա է կամենում և **խոստանում**, որ հավիտյան նրա հետ պիտի լինենք: Այդ պատճառով Պողոս առաքյալը մեզ հորդորում է. «Հոգո՛վ գնացեք ու մարմնի ցանկությունը չեք կատարի... եթե Հոգով ենք ապրում, Հոգո՛վ վարվենք» (Գաղ. 5.16, 25):

Կարող ենք եզրակացնել, որ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին հավետ իշխում են տիեզերքում, ընդ որում՝ նաև մեզ վրա: Որպես Աստծո ուստրեր ու դուստրեր՝ նրա հետ մտերիմ կապի մեջ լինելով՝ մենք նախընտրում ենք ապրել Աստծո իշխանության ներքո՝ Քրիստոսի տիրակալության տակ: Մեր առօրյա որոշումներում ընդունում ենք այս իրողությունն ու ասում. «Դու Աստված ես, ես՝ ոչ»: Մենք ձգտում ենք Քրիստոսին հանձնել մեր խոհերն ու հույզերը, տրամադրությունն ու գործերը:

Աստծո շնորհը. Հիսուսը մեր Տերն է և փափագում է մեզ հետ մտերիմ լինել: Այդ

հնարավորությունն ըստ արժանվույն ընդունելու համար պետք է հնազանդվենք նրան: Երբ ամեն օր նրան ենք հանձնում մեր հույսերը, երազանքները, ցանկություններն ու որոշումները, ապա կարող ենք նրա ներկայության մեջ ապրել ամեն պահի, նրա սերը վայելել ամեն օր:

Պողոս առաքյալը պարզորոշ կերպով ներկայացնում է, թե ինչ է նշանակում Հիսուսին հնազանդ կյանքով ապրելը: Պողոսն ուներ իրեն տանջող մի ցավ՝ «խայթ»: Ծանոթ է, չէ՞: Սա գուցե ֆիզիկական թուլություն է, հիասթափություն, սիրելիի կորուստ կամ սովորություն դարձած մի մեղք: Ամեն մեկս գիտենք մեր «խայթը»: Աստված Պողոսի «խայթով» նրա մեջ հարատև կոտրվածություն է առաջացնում: Աստված ուզում է, որ մենք էլ կոտրված լինենք, քանզի միայն կոտրված լինելու դեպքում կկարողանանք լիարժեք հանձնվել Քրիստոսին: Պողոսն Աստծուն շատ էր խնդրել, որ այդ «խայթը» հեռացնի իրենից: Իսկ Աստված չհեռացրեց, այլ միայն ասաց. «Բավական է քեզ իմ շնորհը, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է իրագործվում» (Բ Կոր. 12.9):

Սեփական ուժերով անկարող ենք քրիստոնեական կյանք ապրել: Դա հնարավոր է միայն Աստծո շնորհիվ՝ Նրա խաչի ու հարության արդյունքում մեզ համար տրված գերբնական կարողությամբ: Կոտրված ու տկար վիճակում է, որ սովորում ենք ապրել նրա շնորհով: Այդ շնորհով է, որ Աստված մեզ զորություն է տալիս և օգնում, որ Պողոսի պես կարող լինենք ասելու.

> *«Արդ ավելի հոժարությամբ իմ տկարություններով կպարծենամ, որպեսզի Քրիստոսի զորությունն իմ մեջ բնակվի: Ուստի Քրիստոսի համար գոհունակությամբ համբերում եմ տկարությունների, թշնամանքների, վշտերի, հալածանքների և նեղությունների, որովհետև երբ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ»:*
>
> *Բ Կոր. 12.9-10*

Կոտրված լինելով է, որ ընդունում ենք Քրիստոսի ներկայությունն ու զորությունը:

> *«Օ,՜ Աստվա՛ծ իմ, ես ճաշակել եմ քո քաղցրությունը, և այն հագեցրել է ինձ, բայց և ավելին ուզելու ցանկություն առաջացրել: Մ՛խ ցավով եմ ասում, թե որքան շատ ունեմ քո շնորհի կարիքը: Ամաչում եմ, թե որքան քիչ եմ ցանկացել: Օ,՜ Աստված իմ, Եռամի՛ Աստված, կարոտել եմ քեզ, կարոտել եմ քեզ կարոտելուն, ծարավ եմ առավել ծարավ լինելուն»:*
>
> *Ա. Թոզեր*

Մտերմության հրավեր. Աստված, որ համայն տիեզերքի տերն ու տիրակալն է, խորապես սիրում է մեզ և մեզնով ուրախանում: Հենց այս պահին անգամ խանդավառությամբ հետևում է մեզ: Նա Քրիստոսի միջոցով մեզ իրեն մոտենալու հնարավորություն է ընձեռել. մեզ տվել է այն ամենը, ինչ անհրաժեշտ է իրեն ճանաչելու և սիրելու համար: Նա ամեն մեկիս իրեն սիրելու կոչ է անում՝ ասելով. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով» (Մատթ. 22.37): Նա սիրելու հորդոր է անում ամեն օր, մեզ է տենչում և մեզ իրեն ձգտելու հնարավորություն է տալիս: Եթե ամեն օր ապրենք նրան ավելի լավ ճանաչելու և ավելի ինքնամոռաց սիրելու փափագով, ապա ավելի ու ավելի շատ կճանաչենք Հիսուսին:

Անձնուրացության աղոթք

Հայ՛ր, անձնատուր եմ լինում քեզ. արա՛ ինչ ուզում ես,
Ինչ անես՝ շնորհակալ կլինեմ:
Պատրաստ եմ ամեն բանի, ընդունում եմ ամեն բան:
Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին
Իմ սրտի ամբողջ սիրով, որովհետև սիրում եմ քեզ, Տե՛ր:
Ինձ պետք է հանձնվել քեզ, անձնատուր լինել քեզ՝ անմնացորդ
Եվ անսահման վստահությամբ,
Քանզի դու իմ Հայրն ես:
Ամե՛ն:

Չարլզ դե Ֆուկոլդ

ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐ

Պատասխանի՛ր այս հարցերին՝ շրջանակի մեջ առնելով 1-10 թվանշաններից մեկը, որտեղ 1-ն ամենահեռուն է, 10-ը՝ ամենամոտը: Դրանից հետո գրի՛ր մի կարճ շարադրություն այն մասին, թե Հիսուսի հետ ավելի խորությամբ մտերմանալու համար ինչ որոշումներ ընդունելու կարիք ունես:

1. Որքա՞ն է քո փափագն առ Աստված:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

2. Որքա՞ն է Աստծո փափագը քո նկատմամբ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

3. Որքա՞ն է, քո անկեղծ կարծիքով, Աստված սիրում քեզ՝ իմանալով քո մասին ամեն ինչ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

4. Որքա՞ն են մաքուր սիրտդ, միտքդ, կյանքդ ու շփումներդ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

5. Աստծո տեսանկյունից դու որքանո՞վ ես սուրբ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

6. Որքա՞ն ես մտերիմ Աստծո հետ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

Իմ անկեղծ, կոնկրետ որոշումները Հիսուսի հետ ունեցած իմ հարաբերության մասին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ինչպե՞ս հետամուտ լինենք Հիսուսի հետ մտերիմ հարաբերություններ ունենալուն, որով և ավելի խորությամբ կսիրենք նրան:

Նպատակը սերն է

Երեք անգամ կարդա՛ Ա Տիմոթեոս 1.5-ը. փորձի՛ր սահմանել նշված բառերը: Ամեն անգամ այս խոսքերը կարդալիս մի նոր նշո՛ւմ արա, մի նոր մի՛տք գրիր: Այս խոսքերն իրոք կարող են նպաստել Հիսուսի հետ մտերմանալու մեր փորձերին:

«Պատվիրանի վախճանը (նպատակը) սերն է սուրբ սրտից, բարի խղճմտանքից ու անկեղծ հավատից»:

Սերը գալիս է՝

- սուրբ սրտից,
- բարի խղճմտանքից,
- անկեղծ հավատից:

ՀԱՆՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՀԵՏ ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ

Ինքդ քեզ այս հարցերը տո՛ւր և խորհի՛ր սուրբգրային խոսքերի մասին, որպեսզի հարթես Հիսուսին մերձենալու ճանապարհդ:

Սուրբ սիրտ

1. Ունե՞մ արդյոք պիղծ մտքեր հակառակ սեռի մարդկանց նկատմամբ (Բ Տիմ. 2.22):

2. Արդյո՞ք տրտնջում եմ, բողոքում, ուրիշներից դժգոհում (Փիլ. 2.14-15):

Բարի խղճմտանք

1. Իսկապես հարգում ու պատվո՞ւմ եմ ծնողներիս, ընտանիքիս մյուս անդամներին (Եփես. 6.1-4):

2. Ատելությունն ու վիրավորանքն ինձ թույլ չե՞ն տալիս ներել ինչ-որ մեկին (Մատթ. 6.14-15):

3. Սխա՞լ եմ վարվել ինչ-որ մեկի հետ (Մատթ.5 23-24):

Անկեղծ հավատ

1. Արդյո՞ք ստում, գողանում կամ խաբում եմ (Կող. 3.9):

2. Կա՞ արդյոք իմ կյանքում որևէ ոլորտ, որում Հիսուսն առաջինը չէ (Մատթ. 6.33):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

- Այսօր 15 րոպե առանձնացի՛ր ու խորհելով գրի՛ առ այն ամենի մասին, ինչով, ըստ քեզ, հաճելի ես Աստծուն:
- Նախորդ էջից, որ գրել էիր քեզ անհանգստացնող բաների մասին, ընտրի՛ր մեկը՝ ամենադժվարը, և գտի՛ր այն քայլը, այն վճռական գործողությունը, որ պիտի անես՝ ի հնազանդություն Աստծո: Այդ հարցում քո անվարան հնազանդությունը քեզ է՛լ ավելի կմոտեցնի Քրիստոսին:
- Աստծուն խնդրի՛ր, որ քեզ հուշի, թե ինչ է պետք անել և այդ բանն անելու ուժ տա: Այսպես կրկնի՛ր ու հաղթակա՛ն եղիր քեզ տանջող բոլոր հարցերի նկատմամբ:
- «Հաճախակի տրվող հարցեր» կոչվող բաժնում կարդա՛ Քրիստոսի հետ առավել խորությամբ մտերմանալուն վերաբերող հինգ հարցերն ու պատասխանները: Այստեղ կգտնես ներում ընդունելու և ներելու, վատ սովորություններին վերջ տալու, կյանքի պահանջների հանդեպ ճիշտ դիրքորոշում ունենալու և Հիսուսին ավելի լավ ճանաչելու մասին կարևոր մտքեր:
- Շարունակի՛ր Աստծո հետ քո առանձնության պահերը: Ժամանակի ընթացքում դա կդառնա քո ամենանվիրական ժամանցն ու ամենակարևոր սովորությունը:

«Հոգևոր հասունության ոսկե կանոնը ոչ թե իմացությունն է, այլ հնազանդությունը: Հնազանդության քայլի հետևում Ամենակարող Աստծո իրականությունն է»:

Օսվալդ Չամբերս

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ ԱՌԱՎԵԼ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՄՏԵՐՄԱՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

«ՀԻՍՈՒՍԻՆ ՀԱՎԱՍԱՐԸ ՉԿԱ»

Բարրի Ստ. Քլեյրը քեզ մի հետաքրքրաշարժ ու հիանալի ճամփորդության է հրավիրում, որտեղ պիտի հանդիպես Աստծո Որդուն: Կճանաչես Հիսուսին՝ ինչպես որ է: Իրոք, որ հաճելի է Հիսուսի ընկերը լինելն ու նրա հետ քայլելը: «Հիսուսին հավասարը չկա» ամսագրում ճամփորդությունը շարունակվում է 40 օր ու գիշեր: Այդ ընթացքում պիտի անցնես Հիսուսի կյանքի ու մահվան, հարության, համբարձման ու երկրորդ գալստյան հետ կապված եղելություններով: Հարցականի տակ պիտի դրվեն Հիսուսի մասին քո բոլոր պատկերացումները, և արդյունքում պիտի փոխվես հենց դու:

«ԱՍՏՇՈ ՀԵՏ ԱՌԱՆՁՆԱՆԱԼՈՒ ԲԵՐԿՐԱՆՔԸ»



Ինչպե՞ս կարող ես առավել խորությամբ մտերմանալ Հիսուսի հետ: Դրա համար հարկավոր է ժա՛մ-մա՛նակ: Ինչպես մարդկանց, այնպես էլ Հիսուսին ճանաչելու համար պետք է նրա հետ լինես՝ որքան շատ, այնքան լավ: Եվ ինչքան շատ ես ձգտում նրան մոտենալ, այնքան նա ավելի ու ավելի է մոտենում քեզ: «Աստծո հետ առանձնանալու բերկրանքը» գիրքը կօգնի Հիսուսին հանդիպելու, եթե դու ամեն օր.

- Աստվածաշունչ ես սերտում,
- սուրբգրային խոսքեր ես անգիր անում,
- աղոթքի մեջ նրան ես փնտրում,
- փառաբանում ես նրա մեծությունը,
- գոհանում ես նրա բարության համար,
- մեղքերդ ես խոստովանում,
- քեզ համար մի բան ես խնդրում,
- ուրիշների համար բարեխոսություն ես անում...

Անհրաժեշտ նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

«ԿԱՐԵՎՈՐԵՆՔ ԿԱՐԵՎՈՐԸ»

«Կարևորենք կարևորը» գրքի ամեն էջից պարզ երևում է, որ հեղինակը՝ Դեյվ Բասբին, ամբողջ կյանքում Աստծուն է փնտրել: Այս գիրքը նա գրել է իր մահից չորս տարի առաջ: Գիրքը մեծ հաջողություն է ունեցել. ավելի քան 50,000 օրինակ վաճառվել է: Այժմ իր կնոջ՝ Լոաննայի լրամշակմամբ այն վերահրատարակվել է: Այս նոր հրատարակության մեջ յուրաքանչյուր գլխից առաջ Դեյվի անտիպ օրագրերից հատվածներ են մեջբերված, իսկ յուրաքանչյուր գլխից հետո քննարկման ու ինքնաքննության հարցեր են տրված: Դեյվ Բասբին մի իսկական առեղծված էր: Չնայած իր ֆիզիկական տկարություններին՝ շաքարախտին, սրտի, լյարդի ու մի շարք այլ հիվանդություններին, նա մի աննկարագրելի ուժ էր ստանում և սեփական կյանքով ապացուցում Բ Կորնթացիս 12.10-ի ճշմարտացիությունը, որն ասում է. «Երբ որ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ»: Ասել, թե Հիսուսը Դեյվի միակ հույսն էր, ոչ թե գեղեցիկ խոսք կլինի, այլ ամենօրյա իրականություն: Չզարմանաս, որ Աստծո ներկայությունը համակի քեզ այդ տողերը կարդալիս ու դրանց մասին խորհելիս, կարևորը կարևորելիս:

Խորհուրդ ենք տալիս կարդալ նաև.

- Բրեննան Մաննիգի «Աբբայի զավակը»,
- Բիլ Թրոլի, Բրուս Մաք-Նիկոլի և Ջոն Լինչի «Ճշմարիտ դեմքը»,
- Փիտր Սկազզերոյի «Զգացմունքային առումով առողջ հոգևոր կյանք»,
- Բրենտ Կուրտիսի և Ջոն Էլդրեջի «Սրբազան սիրավեպ» գրքերը:

Այս նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում Քրիստոսի հետ առավել խորությամբ մտերմանալու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է քեզ համար Քրիստոսի հետ մտերմանալը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու նրան առավել լավ ճանաչելու համար:

Ո՞ւմ առջև պատասխանատու կլինես քո առաջընթացի համար:

Որտե՞ղ ես հանդիպելու Քրիստոսին:

Ե՞րբ ես նրան հանդիպելու համար ժամանակ հատկացնելու:

ՋԵՐՄԵՌԱՆԴ ԱՂՈԹՔ

ԴԱՍ 3-ՐԴ

Հետևենք Հիսուսի օրինակին

Որդիս մի շապիկ ուներ, վրան գրված էր. «Հիսուսով ես սատանայի անձնական մղձավանջն եմ»: Ջերմեռանդ աղոթել նշանակում է դիտել, թե ինչպես է Հիսուսը մոտենում, նահանջի մատնում սատանայի խավար իշխանությունը և դրա փոխարեն հաստատում իր լուսո թագավորությունը: Իսկ երբ ջերմեռանդորեն չենք աղոթում, սատանան է դառնում մեր անձնական մղձավանջը: Խավարի իշխանությունը հսկայական թվով երեխաների է իր ճիրանների մեջ առել: Ջերմեռանդ աղոթքն այն միակ զենքն է, որ ազատ կարձակի Աստծո արքայությունը՝ մարդկանց անդունդից հանելու և նրանց Ժայռի վրա հաստատելու, նրանց խավարի իշխանությունից փրկելու և լուսու թագավորության մեջ ընդունելու համար: Առ Հիսուս Քրիստոս ջերմեռանդ աղոթքով են սատանայի երբեմնի գերիները դառնում նրա անձնական մղձավանջները:

Եբրայեցիս թղթի հեղինակը մի պատկեր է ներկայացնում, որ հասկանանք, թե ինչու պիտի ջերմեռանդ աղոթքը դառնա մեր պաշտպանության առաջին գիծը՝ թե՛ մեր անձնական կյանքի, թե՛ մեզ մոտ վերապատրաստվող սովորողների, թե՛ աշխարհա-սփյուռ բյուրավոր պատանիների համար:

> *«Լիովին կարող է փրկել նրանց, ովքեր իրենով մոտենում են Աստծուն, որովհետև միշտ կենդանի է, որպեսզի նրանց համար բարեխոսություն անի»:*
>
> *(Եբր. 7.25)*

Հիսուսը կարո՞ղ է: Այս փաստը չընկալելու պատճառով է մեր աղոթքն այդքան տկար: Իսկ Եբրայեցիս թղթի հեղինակն այդ բանն ընկալել էր: Վերադառնանք նույն թղթի առաջին երկու խոսքերին ու համոզվենք, որ Հիսուսն իրո՛ք կարող է, որովհետև.

- Նա ամեն բանի ժառանգ է՝ Հորից ստացել է շատ ավելի, քան աշխարհի ամենահարուստ մարդը, քան ողջ աշխարհի հարստությունն ընդհանրապես:
- Նրա միջոցով Աստված աշխարհը ստեղծեց. միայն պատկերացրո՛ւ, որ Ծիր կաթին համաստեղծության մի ծայրից մյուսը հասնելու համար մեզ հարկավոր է

100,000 լուսային տարի, իսկ լուսային մեկ տարին 5.88 տրիլիոն մղոն է և Ծիր կաթինն էլ բյուրավոր համաստեղություններից լոկ մեկն է. դե պատկերացրո՛ւ, թե նրա միջոցով Աստված ինչ է ստեղծել:

- Նա Աստծո փառքի լույսն է արտացոլում՝ Հիսուսին նայել նշանակում է Աստծո լուսանկարը տեսնել. ինչպիսին որ Աստված է, այնպիսին Հիսուսն է:
- Նա իր զորության խոսքով ամեն բան կրում է, պահպանում՝ նրա միայն մեկ խոսքը բավական է, որ միլիոնավոր կենդանի օրգանիզմներ՝ բջիջից մինչև փիղ, ապրեն, որ միլիարդավոր համակարգեր՝ համաստեղություններից մինչև էկոհամակարգեր, գործեն:
- Նա իրենով կատարեց մեր մեղքերի մաքրումը՝ իր արյունը թափելով՝ բացեց մեր մաքրության արահետը՝ մեր մեղքերի ներումն ու իրեն մոտենալու ճանապարհը:
- Նա նստած է Աստծո մեծության աջ կողմում. Խաչելությունից ու Հարությունից հետո Հիսուսն այժմ բազմած է Աստծո աջ կողմում և թագավորում է ողջ տիեզերքի վրա:

Հիսուսի կարողությունն անասելի է. անկասկած նա կարող է լիովին փրկել: Նա իր այդ կարողությունը գործի է դնում բոլոր նրանց համար, «ովքեր իրենով մոտենում են Աստծուն» (Եբր. 7.25):

Մենք կարող ենք մոտենալ, որովհետև «երկինքներով անցած մեծ քահանայապետ ունենք՝ Աստծո Որդուն՝ Հիսուսին... Ով ամեն բանով փորձված է մեզ նման, բայց առանց մեղքի» (Եբր. 4.14-16):

Եվ մոտենալիս էլ պետք է հիշենք, որ «միշտ կենդանի է, որպեսզի բարեխոսություն անի» (Եբր. 7.25): Երբ հաղորդակցվում ենք Հիսուսի հետ, նա էլ, Հոր աջ կողմից, հաղորդակցվում է մե՛զ հետ: Հովհաննես առաքյալն իր զարմանահրաշ տեսիլքով հայտնում է, թե ինչպիսին է մեր աղոթքը.

> *«Եվ խնկերի ծուխը սրբերի աղոթքների հետ հրեշտակի ձեռքից Աստծո առջև բարձրացավ: Հրեշտակն առավ խնկամանն ու նրա մեջ սեղանի կրակից լցրեց և երկրի վրա գցեց, և ձայներ, որոտումներ, փայլակներ ու երկրաշարժ եղավ»:*
>
> *Հայտն. 8.4-5*

Ուտելուց առաջ սեղանն օրհնելու, մեր ծրագրերի համար նրա օրհնությունը խնդրելու կամ մի անգիր արած աղոթք ասելու փոխարեն Աստված մեզ իրեն մոտենալու կոչ է անում: Իսկ երբ հնազանդվում ու մոտենում ենք նրա՝ նրա շնորհաց գահին, մեր առջև բացվում է այս կյանքն ապրելու ճիշտ ուղին, ստանում ենք դրա համար անհրաժեշտ իմաստությունը, զորությունն ու վստահությունը և այն ամենը, ինչի կարիքն ունենք: Եվ այդ ամենը՝ ջերմեռանդ աղոթքով:

Աղոթքն այն միջոցն է, որով ի կատար է ածվում դեպի իրեն մոտենալու Աստծո կոչը:

ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐ

Պատասխանի՛ր այս հարցերին՝ շրջանակի մեջ առնելով 1-10 թվանշաններից մեկը, որտեղ 1-ն ամենահեռուն է, 10-ը՝ ամենամոտը: Դրանից հետո գրի՛ր մի կարճ շարադրություն այն մասին, թե ջերմեռանդ աղոթելու համար ինչ որոշումներ ընդունելու կարիք ունես:

1. Որքա՞ն ես սիրում աղոթել:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

2. Որքա՞ն ես հավատարիմ մնում Աստծուն ամեն օր հանդիպելու որոշմանը:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

3. Պատանիների համար աղոթելու նպատակով որքա՞ն հաճախակի ես հանդիպում ծառայության մյուս անդամների հետ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

4. Որքա՞ն հաճախակի ես հանդիպում երիտասարդական ծառայության առաջնորդների հետ ուսումնական հաստատության համար կամ հենց ուսումնական հաստատությունում աղոթելու նպատակով:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

5. Քեզ մոտ վերապատրաստվող ուսանողների քանի՞ տոկոսն է ամեն օր Աստծո հետ առանձնանում:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

6. Քեզ մոտ վերապատրաստվող ուսանողների քանի՞ տոկոսն է հաճախում ամենշաբաթյա աղոթաժողովներին:

1 2 3 4 5 6 7 8 9 10

Իմ անկեղծ, կոնկրետ որոշումները ջերմեռանդորեն աղոթելու մասին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպե՞ս պետք է առավել ջերմեռանդորեն աղոթենք և մյուսների համար էլ ջերմեռանդ աղոթելու մթնոլորտ ստեղծենք:

Աղոթել սիրո՞ւմ ես

Դու իսկապե՞ս սիրում ես աղոթել, թե դա պարտականություն է քեզ համար:

«Սիրեցե՛ք աղոթել: Աղոթելու կարիք հաճախակի՛ զգացեք օրվա ընթացքում և մի՛ հապաղեք աղոթել: Աղոթքն այնպես է ընդլայնում մարդու սիրտը, որ այն ի վիճակի լինի ընդունելու Աստծո ներկայության պարգևը: Խնդրեցե՛ք և փնտրեցե՛ք, ու ձեր սիրտն այնքան կմեծանա, որ նրան կընդունի ու կպահի հարազատի պես»:

Մայր Թերեզա

Հիսուսը սիրում էր աղոթել

Եթե Հիսուսի կյանքը բեմադրության վերածենք, ապա նա կլինի աստղը, մյուսները՝ օժանդակ դերակատարներ, իսկ աղոթքը՝ ամբողջ բեմադրության ֆոնը: Կարդա՛ ու խորհի՛ր այս խոսքերի մասին, որ տեսնես, թե ինչպես է բեմադրությունը ծավալվում:

Հիսուսն սկսեց աղոթք անել (Ղուկ. 3.21-22),

Նա շարունակում էր աղոթք անել (Հովհ. 5.19):

- Ամեն օր շարունակաբար աղոթում էր (Մարկ. 1.35):
- Աղոթում էր մեծ որոշումներից ու իրադարձություններից առաջ.

Ղուկ. 6.12-13՝ աշակերտների ընտրությունից,

Ղուկ. 9.16՝ հինգ հազարին կերակրելուց,

Մատթ. 15.36՝ չորս հազարին կերակրելուց,

Մատթ. 14.22-23՝ ջրի վրայով քայլելուց,

Հովհ. 11.41-42՝ Ղազարոսին հարություն տալուց,

Մատթ. 26.26-29՝ Վերջին ընթրիքն ուտելուց առաջ:

- Նա իր ամբողջ կյանքն ապրեց աղոթքով (տե՛ս՝ Ղուկ. 5.16):

Իր մահն անգամ պսակեց աղոթքով (Ղուկ. 22.39-44, 23.46):

Նա շարունակում է աղոթել (Եբր. 7.25):

«Տեր Հիսուսը տակավին աղոթում է. երեսուն տարի ապրեց, երեսուն տարի էլ ծառայեց, տարավ մի ահասարսուռ մահ և ահա երկու հազար տարի շարունակ աղոթում է. տե՛ս, թե որքան է կարևորում աղոթքը»:

Ս.Դ. Գորդոն

Հիսուսն իր Հոր հետ շփվելու մեծ փափագ ուներ և ուզում է, որ մենք էլ նման փափագ ունենանք մեր Երկնային Հոր հետ մտերմանալու համար:

ԴՈՒ ԶԳՈ՞ՒՄ ԵՍ ԱՍՏՑՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Առավելագույն ջանքերն անգամ ուժ չունեն առանց աղոթքի

Ինչ-որ բանի հասնելու քո ցանկությունը վերագնահատի՛ր հետևյալ խոսքերից հետո.

«Աղոթքը ոչ միայն մեր բարձրագույն պատիվն է և մեր ամենաբաղձալի բերկրանքը, այլ նաև ձեռքբերումներ ու հաջողություններ ունենալու համար մեր ամենահուժկու զենքը: Բոլոր մյուս միջոցները մեզ ցեխից չեն հանի, ինքնավստահության հետևանքով առաջացած քաոսից դուրս չենք գա. այդ ամենը միայն դեպի փակուղի է տանում: Մյուս բոլոր միջոցները մեզ մի շյուղի պես փոթորկուն ծովի ալիքներից դուրս չեն հանի, մեր կյանքի նավակն այդ ծովում տեղ չի հասնի առանց ղեկի, առանց կողմնացույցի, առանց նավավարի: Ինչ էլ կառուցես, եթե գործես առանց ամենակալ Բարձրյալի, ով ամեն բան տանում է իր հավիտենական ծրագրի համեմատ, ապա բոլոր ջանքերդ, որքան էլ հանճարեղ լինեն, ի վերջո, հօդս են ցնդելու» (F. J. Huegel, “Prayer: Our Highest Privilege,” Decision, June, 1996):

Աստծո ամենափոքր գործի մեջ էլ առատ զորություն կա

Դժվար չէ հասկանալ զորություն/աշխատանք հարաբերակցությունը: Երեմիայի միջոցով Աստված ասում է.

«Կանչի՛ր ինձ, և ես քեզ պիտի պատասխանեմ, և ես քեզ պիտի մեծամեծ ու անհասանելի բաներ իմացնեմ, որ դու չգիտես»:

Երեմ. 33.3

Երբ **աղոթենք** («Կանչի՛ր ինձ»), Աստված մեզ **խոստում** կտա («պիտի պատասխանեմ քեզ»), որ նա իր **զորությունը** կտա մեզ («ես քեզ պիտի մեծամեծ ու անհասանելի բաներ իմացնեմ, որ դու չգիտես»):

Չարլզ Սպերջենը՝ XIX դարի հայտնի հովիվը, սիրում էր ժողովից առաջ մարդկանց եկեղեցով ման տալ: Հատկապես սիրում էր նրանց նկուղ տանել. «Ահա՛, - ասում էր նա, - սա էլ մեր եկեղեցու էներգիայի կայանն է»: Այս բանն ասելով՝ բացում էր դուռն ու ցույց տալիս այն սենյակը, որ զօր ու գիշեր լեփ-լեցուն էր աղոթող մարդկանցով. այս մարդիկ ծնկաչոք աղոթում էին անդադար:

Ի՞նչ կլինի, եթե քո կազմավորած երիտասարդական ծառայության թիմի անդամներն էլ այդպես աղոթեն:

ԻՆՉՊԵ՞Ս ՀԵՏԱՄՈՒՏ ԼԻՆԵՆՔ ՋԵՐՄԵՌԱՆԴ ԱՂՈԹՔԻՆ

Ամեն օր Աստծո հետ առանձնանալով.

Այսպես վարվելով՝ ավելի խորությամբ կճանաչենք Աստծուն և ավելի շատ կսիրենք նրան: Քրիստոնեական կյանքի կարևորագույն հատկանիշը հենց սա է՝ Աստծո հետ առանձնանալ ամեն օր. այդպես են վարվել Աբրահամն ու Մովսեսը, Պողոս առաքյալը. այդպես պիտի վարվենք ես և դու: Աստված ուզում է, որ այս հարցում լրջմիտ լինենք:

«ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ ՉԿԱՐԴԱՄ, ՉԵՄ ՆԱԽԱՃԱՇԻ»

Ուրիշների հետ աղոթելով.

Աստված պատրաստ է մեզ տալու իր երկնային բոլոր բարիքները: Մեր աղոթքներով է որոշվում, թե կստանանք այդ ամենը, թե ոչ: Ահա, թե որն է զորությունը:

> *«Ճշմարիտ եմ ասում ձեզ. ինչ որ երկրի վրա կապեք, երկնքում էլ կապված կլինի, և ինչ որ երկրի վրա արձակեք, երկնքում էլ արձակված կլինի: Դարձյալ ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե ձեզանից երկուսը երկրի վրա միաբանվեն, այն ամենը, ինչի համար որ խնդրեն, կլինի իմ Հորից, որ երկնքում է: Որովհետև ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունով հավաքված լինեն, ես այնտեղ, նրանց մեջ եմ»:*
>
> *Մատթեոս 18.18-20*

Զորություն է գալիս, երբ երկուսով կամ երեքով ենք աղոթում:

Ինչպե՞ս կազմենք աղոթախումբ:

Աղոթաժողովներ հրավիրե՛ք անհավատների համար աղոթելու նպատակով:

Այցելե՛ք

3

քրիստոնյաների

անգամ շաբաթական

ոչ քրիստոնյա ընկերների համար աղոթելու

Աղոթքը Հիսուսի զորությունը քո միջոցով տարածում է մարդկանց վրա:

Գործնական քայլեր

- Անգի՛ր սովորիր Հովհաննես 5.19 խոսքը:

- Որոշի՛ր օրն առնվազն 20 րոպե Տիրոջ հետ առանձնանալ, մինչև այն սովորություն դառնա:

- Հրավիրի՛ր երիտասարդական ծառայության այլ առաջնորդների՝ անգամ ուրիշ եկեղեցիներից ու միություններից, որպեսզի պատանիների ու երիտասարդների համար աղոթելու նպատակով միաբանվեն քեզ հետ: Կարող եք հետևել երեքի սկզբունքին. երեք աղոթող, հանդիպման երեք վայր, շաբաթական երեք անգամ և աղոթքն էլ լինի կոնկրետ երեք անձի համար:

Աղոթողների եռյակ

այցելել **3**

քրիստոնյաների

1_____ 2_____3_____

անգամ շաբաթական

Կիր. Երկ. Երք. Չրք. Հնգ. Ուրբ. Շբ.

ոչ քրիստոնյա ընկերների համար աղոթելու

1_____ 2_____3_____

- Ուսանողների հետ խոսի՛ր աղոթքի կարևորության մասին, հորդորի՛ր, որ նրանք նույնպես ամեն օր առանձնության պահեր անցկացնեն Տիրոջ հետ:

- Ուսանողներին խրախուսի՛ր, որ ջերմեռանդորեն աղոթեն: Դրա համար խորհո՛ւրդ տուր, որ նրանք ևս կազմեն երեք հոգուց բաղկացած խմբեր և հավատարմաբար հավաքվեն ու աղոթեն:

Աղոթքին նպաստող նյութեր



Առանձնության պահերի նոթատետր

Ի՞նչ ես անում, երբ Աստծո հետ առանձնանում ես:

Զրուցում ես Աստծո հետ և դադար առնում, որպեսզի լսե՞ս նրան: Եթե դժվարանում ես արդյունավետ անցկացնել ժամանակը, ապա այս նոթատետրը հենց քեզ համար է: Այն կնպաստի, որ դու.

- վաղ արթնանաս ու Աստծուն հանդիպես,
- լսես, թե Աստված այդ հանդիպումների վերաբերյալ ինչ գործնական խորհուրդներ կտա,
- Աստվածաշունչը խորաթափանցությամբ հասկանաս,
- Աստծո հետ հաղորդակցվելով՝ ազդեցիկ աղոթքների ծրագիր ստանաս:

Աղոթելու հրաշալի եղանակ

Ուսանողներն ավելի խանդավառված կապրեն, ավելի ջերմությամբ կսիրեն իրենց ընկերներին, ավելի սիրով անձնական վկայություն կտան, եթե ավելի շատ աղոթեն: Այս դասընթացի տևողությունն ութ շաբաթ է, որը կարող է ճակատագրական լինել թե՛ քեզ համար, թե՛ դասընթացին մասնակցողների, թե՛ այն մարդկանց համար, ում համար աղոթում եք: Համացանցային կայքից կարող եք ներբեռնել 80 էջից բաղկացած «Աշակերտական օրագիրը»: Կա նաև առաջնորդների համար նախատեսված ձեռնարկ, որտեղ կարող եք օգտակար խորհուրդներ և նյութեր գտնել:



Այս նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում ջերմեռանդորեն աղոթելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է ջերմեռանդ աղոթքը քեզ և քո ծառայության մեջ ընդգրկված մյուս մարդկանց համար կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու ջերմեռանդորեն աղոթելու համար:

Ո՞ւմ հետ պիտի կազմես աղոթողների եռյակ:

Որտե՞ղ եք աղոթողների եռյակով հանդիպելու:

Ե՞րբ եք աղոթողների եռյակով հանդիպելու:

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԴԱՍ 4-ՐԴ

Հետևենք Հիսուսի օրինակին

Առաջնորդ դառնալու մի հեշտ ճանապարհ կա՝ դասեր քաղել ուրիշների սխալներից: Սակայն այս մոտեցումը վտանգավոր է և երկար ճանապարհ չունի: Հիսուսն այսպես հաստատ չէր վարվի: Սակայն զարմանահրաշ է նաև Հիսուսի ընտրությունը: Սուրբ Հոգու առաջնորդությամբ նա ընտրեց Տասներկուսին, ովքեր առաջին հայացքից միաբանության որևէ հույս չէին ներշնչում: Պարզ է, որ Հիսուսն այդ մարդկանց մեջ մի բան էր տեսնում, որ սովորական մարդն անկարող էր տեսնել: Այլապես ո՞վ կընտրեր Հռոմի համար աշխատող հարկահավաքին (Մատթեոսին), Հռոմի դեմ պայքարող ազգայնականին (նախանձահույզ Սիմոնին), Թովմասին՝ կասկածամիտ, կամ էլ ինքնավստահ ու տաքարյուն Պետրոսին: Ի վերջո՝ Հուդային ո՞վ կընտրեր, եթե իմանար, որ դավաճան է... Պատմական տվյալների համաձայն՝ նրանք պատանիներ էին: Ո՞ր եկեղեցին թույլ կտա, որ պատանիները խորհրդի անդամներ դառնան: Իսկ Հիսուսն ի՞նչ էր կարծում: Իհարկե, շատ բան չգիտենք, բայց մի բան հաստատ գիտենք. երբ Հիսուսն ավարտեց այս անկատար ադամորդիների եռամյա վերապատրաստումը, նրանք աշխարհը տակնուվրա արեցին: Ի՞նչ պիտի սովորենք Հիսուսից, որպեսզի կարողանանք ընտրել ու վերապատրաստել այնպիսի առաջնորդների, որոնք կշարունակեն առաքյալների գործը:

Փշուրներ: Երբ Հիսուսն իր աշակերտների սրտին էր նայում, տեսնում էր մեծամտություն, գոռոզություն, ինքնավստահություն: Իսկ ինչպիսի՞ն էին նրանք երեք տարի անց. հուսախաբ մարդիկ, ովքեր նայում էին իրենց փշրված երազանքներին ու զարմանում. «Այս ի՞նչ արեցինք: Հիմա ի՞նչ պիտի անենք»: Վերնատանը նրանք թաքնված էին, վստահ, որ ոչինչ չէին կարող անել իրենց իրավիճակը փոխելու համար: Հիսուսը նրանց բերել-հասցրել էր մի կետի, որտեղ նրանք պիտի կարողանային հասկանալ, թե որտեղից է գալիս ճշմարիտ առաջնորդությունը: «Ոչ թե զորությունով է, ոչ թե ուժով, այլ իմ Հոգով, - ասում է Զորաց Տերը» (Զաք. 4.6): Միայն դրանից հետո Հիսուսը նրանց վստահեցրեց, որ «դուք զորություն կստանաք» (Գործք 1.8): Մեր մեջ առաջնորդի հատկանիշներ կձևավորվեն, երբ նախ ընդունենք Խաչը, թույլ տանք, որ Հիսուսը մեզ «կոտրի» և ապա այդ «փշուրներից» ստեղծի այն զավակին, ով նրա փառքը կարտացոլի: Մեր լծակից առաջնորդները նույնպես կաճեն, եթե նախ Խաչն ընդունեն, անձնազոհ լինեն և թույլ տան Աստ-

ծուն, որ իրենց վերափոխի: Առաջնորդները, ուրեմն, քաջ գիտակցում են, որ առաջնորդելուց առաջ պիտի հետևեն Քրիստոսին, գնան նրա անցած ճանապարհով, անձնատուր լինեն, որպեսզի Աստված նրանց առաջնորդության կոչի:

Ամբողջ գիշեր չէր քնել: Հիսուսը Տասներկուսի ընտրությունն անտարբերությամբ չարեց, այլ նրանց ընտրելուց առաջ «սար ելավ՝ աղոթք անելու, և ամբողջ գիշերն անցկացրեց առ Աստծված աղոթելով» (Ղուկ. 6.12): Մեկն ասել է. «Մարդուն գործից ազատելու լավագույն ժամանակը նրան գործի ընդունելուց առաջ է», այսինքն՝ «սխալ առաջնորդներից խուսափելու լավագույն եղանակը նրանց չընտրելն է»: Բայց ինչպե՞ս իմանանք, թե տվյալ մարդիկ ինչպիսին են: Պետք է նրանց ընտրության որոշումն Աստծո առջև բերել և աղոթքով ու աղաչանքով խնդրել, որ Աստված կատարի ընտրություն: Առաջնորդների խմբի հաջողությունն ուղղակիորեն կախված է Աստծո միջամտությունից՝ թե՛ նրանց ընտրության հարցում, թե՛ նրանց ընթացիկ գործերում:

Տեսլական: Հիսուսն ընտրեց Տասներկուսին: Սակայն, ինչ-որ տեղ, Տասներկուսն ընտրեցին Հիսուսին: Նա ասաց նրանց. «Իմ հետի՛ց եկեք, ու ես ձեզ մարդկա՛նց որսորդ կանեմ» (Մատթ. 4.19): Նկատենք, որ այս կանչն անհատական էր, ոչ թե ուղղված էր զույգ-զույգ կանգնած մարդկանց կամ նրանց խմբին: Որոշումն անհատական պիտի լիներ: Հիսուսի կանչը ներառում էր տեսլական. այն, թե ինչ են դառնալու նրանք: Նախ՝ պիտի իրեն հետևեին: Հոգևոր իրականության մեջ պաշտոններ զբաղեցնելու կարիք չկա, խնդիրը մեկմեկու քաջալերելն է, սատարելն ու օգնելը. առաջնորդելու համար անհրաժեշտ հատկանիշներն այսպես են ձևավորվում:

Հիսուսն իր աշակերտներին խոստացավ, որ «մարդկա՛նց որսորդներ» պիտի դառնան. նրանք չպիտի պահակներ դառնային, կամ ինչ-որ կազմակերպություն հիմնադրեին, նրանք կոչված էին աշխարհը փոխելու: Տեսլականը պարզ էր և հստակ: Մենք էլ կարող ենք առաջնորդների մեր խմբին այդ նույն տեսլականը տալ:

Կարևորը մարդկային հարաբերություններն են: Հիսուսը լա՛վ գիտեր հարաբերությունների արժեքը. չէ՞ որ մի ամբողջ հավիտենականություն կատարյալ ու ներդաշնակ հարաբերություն ուներ Հոր և Հոգու հետ: Ուստի գիտեր նաև, թե ինչու է կանչում Տասներկուսին: Առաջիկա երեք տարիների ընթացքում նրա հիմնական ուշադրությունն այս Տասներկուսի վրա էր լինելու: Մի՞թե ուրիշների հետ շփումներ չուներ: Դե, իհարկե՛ ուներ: Մի՞թե չէր ուսուցանում մեծ զանգվածների: Գիտենք, որ նրանց սովորեցնում էր Աստծո ճանապարհները, սակայն յուրաքանչյուր օրվա ավարտին, Հոր հետ իր հարաբերությունը նորոգելուց հետո, նրա համար կարևորը Տասներկուսն էին:

Երիտասարդական ու պատանեկան ծառայության առաջնորդները սիրում են երեխաներին: Մանուկների հետ շփվելու ունակության շնորհիվ է, որ ստանձնել են նրանց առաջնորդելու պատասխանատվությունը: Բայց քանիսի՞ հետ կարող են ունենալ առանձնահատուկ կապ: Տասներկուսից ոչ ավելիի: Եթե մեր ծառայության մեջ ընդօրինակում ենք Հիսուսին, եթե հավատում ենք, որ պատանիները փոխվում են հարաբերությունների մի-

ջոցով, ապա մենք ևս պիտի Հիսուսի պես առաջնորդների խումբ կազմավորենք, վերապատրաստենք և լիազորենք նրանց:

Հետաքրքիր փոխլրացումներ: Հիսուսն այնպիսի խումբ կազմեց, որում մարդիկ ոչ թե նման էին միմյանց, այլ ընդհակառակը, տարբեր: Նրանց անհատական տարբերություններից բախումներ էին լինում, և այդ բախումներից էլ կրակի կայծեր էին ելնում: Դա վատ չէր: Նրանք օժտված էին զանազան շնորհներով: Խմբում դա առողջ մրցակցություն էր ստեղծել: Հիսուսը գիտեր նաև, որ այս խումբն ունի այն, ինչ անհրաժեշտ պիտի լիներ իր համբարձումից հետո ստեղծված եկեղեցուն: Օրինակ՝ Պետրոսն առաքյալ էր («և այս վեմի վրա պիտի կառուցեմ իմ եկեղեցին»), իսկ Փիլիպպոսն ավետարանիչ էր և այլն: Ոչ մի առաջնորդ նման չէ մյուսին: Իսկ երիտասարդական ծառայությանն անհրաժեշտ են տարբեր շնորհներով օժտված մարդիկ: Այս բազմազանությամբ է հավասարակշռություն ստեղծվում: Իսկ հավասարակշռությունն էլ բերում է Հիսուսի ծառայությունն իրագործելու հոգևոր զորություն:

Ժամանակ էր հատկացնում: Աշակերտներին ընտրելուց հետո Հիսուսը գրեթե անընդհատ նրանց հետ էր: Սկզբում ավելի շատ էր բազմության մեջ գործում, սակայն հետզհետե սկսում է ավելի ու ավելի երկար ժամանակ անցկացնել աշակերտների հետ: Իհարկե, պատանիներին գրավում են մեծամասշտաբ միջոցառումները, սակայն ինչ-որ փոփոխություն պիտի տեղի ունենա մեր մոտեցման մեջ, եթե ուզում ենք Հիսուսին ընդօրինակել: Առանձին անհատներին ժամանակ տրամադրելն ու նրանց հետ մտերմանալն ամրապնդում է ամբողջ ծառայության հիմքը:

Բազմապատկվող աճ: Իր աշակերտների հետ շփվելիս Հիսուսի մտքում միշտ Մեծ պատգամն էր.

> *«Երկնքում ու երկրիս վրա ամբողջ իշխանությունն ինձ տրվեց: Ուրեմն գնացե՛ք, բոլոր ազգերին աշակե՛րտ դարձրեք՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, նրանց սովորեցրե՛ք, որ այն ամենը, ինչ ձեզ պատվիրեցի, պահեն: Եվ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը: Ամե՛ն»:*
>
> *(Մատթ. 28.18-20):*

Սա Մատթեոսի տարբերակն էր: Այս պատգամը գրառված է նաև մյուս 3 Ավետարաններում (Մարկ. 16.15-16, Ղուկ. 24.47-49, Հովհ. 20.21-22), գրված է նաև Գործքում (1.8): Հիսուսի իշխանության ներքո աշակերտներն իրենց հերթին պիտի աշակերտ դարձնեին ուրիշներին. սա շարունակվելու է, մինչև աշակերտներն աշակերտներ ունենան «բոլոր ազգերից»:

Այս պատգամը պետք է արդեն վաղուց ավարտած լինեինք՝ ձեռքի տակ ունենալով

ֆինանսական, տեխնոլոգիական, գրական, լրատվական, հրատարակչական բոլոր անհրաժեշտ հնարավորությունները: Բայց, ավա՜ղ, չենք ավարտել: Ինչո՞ւ. որովհետև մոռացել ենք Հիսուսի այն պատգամը, որ աշակերտների թիվը պետք է բազմապատկենք:

ՏԱՐԻ	Անդամներ Անդամների թվի աճ	Աշակերտներ Աշակերտների թվի աճ
1-ին	1	1
2-րդ	2	2
3-րդ	4	6
4-րդ	8	18
5-րդ	16	54
6-րդ	32	162
7-րդ	64	1,458
21-րդ	1,048,576	7,016,615,523

Հետևյալ աղյուսակը մեզ օգնում է տեսնելու, թե ինչ զգալի տարբերություն կա այս երկու մոտեցումների միջև: «Անդամների» սյունակում տե՛ս, որ եթե յուրաքանչյուր անդամ տարեկան մի նոր անդամ բերի, ապա 21 տարում անդամների թիվը կհասնի 1.048.576-ի: Մյուս՝ «Աշակերտների» սյունակում տե՛ս, որ եթե մեկը մեկին մեկ տարի շարունակ ուսուցանի, աշակերտ դարձնի, ապա հաջորդ տարի այս երկուսը աշակերտ կդարձնեն երկուական այլ մարդկանց, ապա այս վեց հոգուց յուրաքանչյուրը հաջորդ տարվա ընթացում աշակերտ կդարձնի երկու նորերի և այսպես շարունակ: Բազմապատկման պրոգրեսիայի միջոցով 21 տարում 7 միլիարդ աշակերտ կլինի (ողջ աշխարհի բնակչությունը), և այդ ամենը սկսվեց Հիսուսի մեկ աշակերտով: Իսկ ի՞նչ կլինի, եթե ձեր խումբն առնվազն չորս կամ տասներկու աշակերտների զարգացմամբ զբաղվի: Հիսուսը գիտեր, որ Մեծ պատվիրանը («Սիրի՛ր քո Տեր Աստծուն») և Մեծ պատգամը («Բոլոր ազգերին աշակե՛րտ դարձրեք») պիտի իրականանա առաջնորդների միջոցով: Ու թեև արժանի չենք, այնուամենայնիվ, մեզ այդ նույն՝ առաջնորդներ վերապատրաստելու և լիազորելու գործն է փոխանցել:

ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐ

Պատասխանի՛ր այս հարցերին՝ շրջանակի մեջ առնելով 1-10 թվանշաններից մեկը, որտեղ 1-ն ամենահեռուն է, 10-ը՝ ամենամոտը: Դրանից հետո գրի՛ր մի կարճ շարադրություն այն մասին, թե ինչ կարիքներ ունես անձնական զարգացման, առաջնորդների վերապատրաստման ու նրանց աշակերտ դարձնելու քո ծառայության մեջ:

1. Որքա՞ն է իմ ազդեցությունն կամավորների, ուսանողների, նրանց ծնողների վրա:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

2. Որքա՞ն են կամավորները պատրաստակամ նոր բաներ սովորելու:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

3. Որքա՞ն եմ ինքս պատրաստակամ կամավորներին նոր բաներ սովորեցնելու:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

4. Ինչպիսի՞ն է կամավորների ընդհանուր հոգևոր վիճակը:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

5. Որքա՞ն են կամավորները մտերիմ միմյանց հետ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

6. Որքա՞ն են կամավորները մտերիմ ուսանողների հետ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

«Իմ անձնական զարգացման, առաջնորդների վերապատրաստման և նրանց աշակերտ դարձնելու իմ ծառայության կարիքները»:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպե՞ս վերապատրաստել բանիմաց և լուրջ առաջնորդների՝ երկարաժամկետ ծառայության համար

Առաջնորդների խմբի նպատակը

Հովհաննես 17.20-26 հատվածում արձանագրված են այն խնդրանքները, որոնք Հիսուսն առ Աստված հղում է հանուն աշակերտների: Գտի՛ր, թե նրա որ խոսքն է վերաբերում հետևյալ երեք կետերից ամեն մեկին:

- Նվիրում Քրիստոսին
- Նվիրում միմյանց
- Նվիրում աշխարհին ծառայելուն

Հիսուսի այս խոսքերից ելնելով՝ ինչպե՞ս կձևակերպես առաջնորդների քո խմբի նպատակը:

Առաջնորդությունն ազդեցություն է:
Առաջնորդը՝

- *գիտե, թե ուր է գնում,*
- *իրեն հետևող մարդիկ ունի:*

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

Ուսումնասիրելով Հիսուսի ծառայության եռամյա շրջանը՝ տեսնում ենք, որ զարմանահրաշ կերպով նա աշակերտներին քառափուլ փորձառություն է տալիս: Տեսնում ենք նաև, որ բոլոր այս չորս փուլերում, որոնց սահմաններն այնքան էլ հստակ չէին, մի ընդհանուր բան կար: Կարո՞ղ ես գտնել այդ ընդհանրությունը:

Առաջնորդների վերապատրաստման չորս փուլերը

1. Նախ ես եմ անում (Ղուկ. 4.31-37 և 38-44):

2. Ապա այդ նույնն անում եմ նրանց ներկայությամբ (Ղուկ. 5.1-11):

3. Այժմ նրանք են անում իմ ներկայությամբ (Ղուկ. 10.1-17):

4. Ի վերջո՝ նրանք անում են, իսկ ես հեռվից եմ սատարում նրանց (Ղուկ. 24.44-49 և Գործքն ամբողջությամբ):

Ի՞նչ էր անում Հիսուսը: Առաջնորդության վերոհիշյալ չորս փուլերում նախ Հիսուսն էր գործում, ապա նրա աշակերտները: Բայց ի՞նչ էին անում նրանք: Համեմատի՛ր հետևյալ հատվածները նշված խոսքերի հետ ու հայտնաբերի՛ր այն ամենը, ինչ կատարեց նա, ում մասին գրված էին մարգարեական խոսքեր:

Ահա կգա Մեսիան ու կկատարի. ի՞նչ՝ տե՛ս Եսայիա 61.1-3 խոսքերը:

Տեր Եհովայի Հոգին ինձ վրա է, և Տերն օծել է ինձ.
նա ուղարկել է ինձ աղքատներին ավետիք տալու,
կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու,
գերիներին ազատություն հրատարակելու և
կապյալներին արձակում:
Տիրոջ համար հրատարակելու ընդունելության տարին
եվ վրիժառության օրը՝ մեր Աստծո համար:
Բոլոր սգավորներին մխիթարելու համար, Սիոնի
սգավորների համար որոշելու,
որ նրանց փառք տրվի մոխրի փոխարեն,
ուրախություն սգի փոխարեն,
գովության պատմուճան հանգած սրտի փոխարեն:
Եվ նրանց պիտի կոչեն «Արդարության բևեկնիներ»,
որ Տերը տնկել է իր փառավորության համար:

Եվ եկավ Հիսուսը՝ Մեսիան, ու կատարեց այս ամենը (տե՛ս Ղուկաս 4.18-19).

Տիրոջ Հոգին ինձ վրա է, որի համար էլ օծեց ինձ.
նա ինձ ուղարկել է աղքատներին ավետարանելու,
սրտով կոտրվածներին բժշկելու,

գերիներին ազատություն քարոզելու, կույրերին տեսողություն,

ճնշվածներին ազատ արձակելու,

Տիրոջ ընդունելի տարին քարոզելու:

Այդ նույնն անում էին աշակերտները (Մարկ. 6.12-13).

«Եվ նրանք դուրս ելան. քարոզում էին, որ մարդիկ ապաշխարեն: Շատ դևեր էին հանում, շատ հիվանդների յուղով օծում էին և բժշկում նրանց»:

Այժմ հերթը մերն է (Հովհ. 14.12).

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ինձ հավատացողն այն գործերն էլ կանի, որ ես եմ անում, և դրանցից էլ ավելի մեծ բաներ կկատարի, որովհետև ես իմ Հոր մոտ եմ գնում»:

Ի՞նչ է այդ կատարելիքը.

- Բարի Լուրը քարոզելը,
- հիվանդներին ու վիատվածներին բժշկելը,
- չարից ճնշվածներին ազատագրելը:

Հիսուսին ճանաչելուց հետո երիտասարդական ծառայության առաջնորդների մեծագույն արտոնությունն այն է, որ նրանք կարող են Հիսուսի ծառայության ձեռքը մեկնել քաղցած, վիրավոր ու հուսահատ երեխաներին ու պատանիներին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Պատկերացրո՛ւ, որ առաջնորդների խումբը գնալով ավելի լավ է ճանաչում Հիսուսին, ավելի հաճախ են հանդիպում միասին աղոթելու համար և ավելի շատ ժամանակ են անցկացնում ուսանողների հետ: Այժմ մի քայլ առաջ գնանք և պատկերացնենք, որ առաջնորդների խումբն ունի Հիսուսի կատարածն անելու՝ Բարի Լուրը հռչակելու, կոտրված սրտերն ամոքելու, գերիներին ազատություն տալու զորություն: Ահա թե ինչ. այս պատկերացումը, այս տեսլականը կարող է իրականանալ, եթե հավատարմաբար կատարես հետևյալ գործնական քայլերը:

1. **Աղոթք.** առանց առօրյա խնդիրներով շեղվելու աղոթի՛ր Աստծուն, որպեսզի իմանաս, թե ում է նա կանչում անդամակցելու առաջնորդների խմբին:
2. **Առաջնորդում.** շատ գործեր կարելի է հանձնարարել, բայց ոչ առաջնորդների խումբն առաջնորդելու գործը: Սկզբում առաջնորդների հիմնական առաջնորդը պետք է իր գործն ինքնուրույն կատարի, իսկ երբ մյուսները սովորեն և ունենան այն ամենը, ինչ անհրաժեշտ է առաջնորդելու համար, ապա նրանք էլ կարող են ուսանողներից առաջնորդներ ընտրել և վերապատրաստել:
3. **Ընտրություն.** առաջնորդների խմբի կազմը կարող ես տարբեր մարդկանցից ընտրել: Ուսանողներին ծառայելու մասին խոսի՛ր քո աշխատակիցների, պատանիների ծնողների և զանազան այլ մարդկանց հետ, և յուրաքանչյուրը թո՛ղ մտածի՝ անելիք ո՞ւնի սովորողների հետ, թե ոչ:
4. **Նվիրում.** երբ ինչ-որ մեկը հետաքրքրություն է ցուցաբերում այս ծառայության նկատմամբ, ապա լավ կլինի նախ անձամբ համոզվի դրանում, ապա ի վիճակի լինի գրավոր արտահայտելու իր որոշումը: Պետք է գրավոր ներկայացնել առաջնորդների խմբին անդամակցելու մանրամասները (տե՛ս «Հիսուս Քրիստոսի հետ անձնական ընթացք» ձեռնարկի 4-րդ էջը):
5. **Նախապատրաստում.** Առաջնորդների խմբով նախ պետք է անցնել «Առաջնորդների վերապատրաստում» դասընթացը՝ սկսելով «Հիսուս Քրիստոսի հետ անձնական ընթացքից»: Յուրաքանչյուրի համար պատվիրի՛ր ձեռնարկի մեկական օրինակ: Ամեն դասից առաջ ընթերցի՛ր այդ օրվա նյութը, ուշադրությո՛ւն դարձրու «Առաջնորդների վերապատրաստում» եռահատոր ձեռնարկի «Քննարկումների ուղեցույց» բաժիններին: Նախապատրաստվելը խիստ կարևոր է հաջողության համար:
6. **Հանդիպում.** հանդիպումը պետք է բոլորի համար հարմար ժամի նշանակել, լավ կլինի մեկի տանը, ամեն անգամ 1-1.5 ժամով հավաքվել: Հանդիպման ժամանակ թող առաջին 15 րոպեն նվիրված լինի աղոթքին, 45 րոպեն՝ քննարկումներին և 15 րոպեն՝ երիտասարդական ծառայության գործերին:

7. **Ներդրում.** շաբաթ առ շաբաթ հանդիպելով՝ այս մարդկանց պետք է օգնես, որ ավելի լավ ճանաչեն Հիսուսին, ի հայտ բերեն իրենց հոգևոր պարգևները և հասկանան, թե ինչպես կարող են գործածել այդ պարգևները՝ հօգուտ սովորողների:

8. **Գնահատում.** ամեն հանդիպումից հետո վերլուծություն արա՛, մտածի՛ր, թե ինչ կարելի է անել հանդիպումների բարելավման համար: Խնդիրներից մի՛ խուսափի՛ր, այլ լուծի՛ր դրանք և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ՛ կատարիր:

«Առաջնորդների վերապատրաստում» դասերի շարքը

Դասերի **«Առաջնորդների վերապատրաստում»** շարքը կամավոր առաջնորդներին ուղղված ձեռնարկ է, որում առկա են սուրբգրային, գործնական խորհուրդներ և հորդորներ: Հեշտ ընթերցվող այս ձեռնարկն ունի երեք հատոր, յուրաքանչյուր հատորում՝ 12 դաս, որոնք կարելի է հեշտությամբ հարմարեցնել եկեղեցու այլևայլ ծրագրերին:



«Հիսուս Քրիստոսի հետ անձնական ընթացք» (1-ին հատոր). առաջնորդներին օգնում է առավել մտերիմ հարաբերություններ հաստատելու Հիսուսի հետ:

«Կյանքի ու ծառայության տեսլական» (2-րդ հատոր). ընդլայնում է առաջնորդների անձնական կյանքի ու ծառայության տեսլականը:

«Ուսանողներին առաջնորդելու անհրաժեշտ միջոցները» (3-րդ հատոր). առաջնորդներին տալիս է այն հմտությունները, որոնք պետք են սովորողների վրա ազդեցություն ունենալու համար:

Աուդիո հավաքածուն ներառում է համացանցից ներբեռնելի 6 պատգամները՝ Բարրի Սանկտ Քլեյրի, Դեյվ Բասբիի և Լուի Գիգլիոյի ձայնագրությունները:

Այս նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

Վերապատրաստվելու միջոցներ՝ ծնողների համար

«Խթան ծնողների համար»-1

Այս գրքի 1-ին հատորն ուղղված է երիտասարդների թիվ 1 առաջնորդներին՝ նրանց ծնողներին: Ծնողները գիտեն՝ ինչպես վարվել և ինչպես ընկերանալ իրենց զավակների հետ: Այս գիրքը նրանց հորդորում է Աստծուն սիրել ամբողջ հոգով ու սրտով և այդ նույնն էլ փոխանցել զավակներին: Ծնողներն իրենց զավակների դաստիարակության հարցում ունեն վճռորոշ դեր:

«Խթան ծնողների համար»-2

Այս հատորն ուղղված է եկեղեցիներին՝ ինչպես կարող են եկեղեցիները նպաստել ծնողների գործին: Գիրքը բավականին պարզ է և գործնական միտվածություն ունի: Կարելի է ծնողների խումբ կազմել և օգտվել այս նյութերից, մասնավորապես՝

- դասագրքից, որում առկա են թարմ տեսակետներ և օգտակար խորհուրդներ,
- օրագրերից, որոնք նպաստում են յուրացրած նյութն օգտագործելուն և գնահատելուն,
- աուդիո CD-ներից, որոնցում կան ոգևորիչ և օգտակար պատգամներ,
- DVD-ներից, որոնցում առկա են 6 փոխներգործուն պատգամներ, յուրաքանչյուրը՝ 55-րոպե տևողությամբ, որտեղ տարբեր ծնողներ պատմում են այս հարցում իրենց ունեցած դժվարությունների և հաջողությունների մասին,
- առաջնորդի ուղեցույցից, որը նախատեսված է փոքր խումբ կազմելու և առաջնորդության հետ կապված խնդիրների լուսաբանման համար:

Ծնողների համար նախատեսված հավաքածուն ներառում է երեք տեսակ օժանդակ նյութեր, «Խթան ծնողների համար» գրքերը, խտասկավառակները և օրագիրը:

Այս նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում առաջնորդներին վերապատրաստելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է առաջնորդներին վերապատրաստելը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու առաջնորդներին վերապատրաստելու համար:

Ովքե՞ր են այն առաջնորդները, որոնց պիտի վերապատրաստես:

Որտե՞ղ եք հանդիպելու դասընթացն անցկացնելու համար:

Ե՞րբ եք սկսելու և որքա՞ն ժամանակ եք շարունակելու առաջնորդների վերապատրաստման դասընթացը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԴԱՍ 5-ՐԴ

Հետևենք Հիսուսի օրինակին

Ողջ պատմության ընթացքում Աստված իր կարևորագույն գործերն ի կատար է ածել ոչ թե բազմության ու մեծամասնության միջոցով, այլ քչերի, անհատների: Հիսուսի ներդրումն այդ մի քանի տարիների ընթացքում այդ մի քանի տղաներին այնպես փոխեց, որ նրանց միջոցով «աշխարհը տակնուվրա եղավ» (Գործք 17.6): Ուսումնասիրենք, թե ինչ արեց Հիսուսն այս մարդկանց կյանքում. հետևենք Հիսուսի օրինակին, որ մեր ջանքերն ու եռանդն իզուր չկորչեն:

Ընտրություն. Աշակերտ դարձնելու գործընթացը մեկնարկեց **ընտրությամբ**: «Եվ այն օրերին սար ելավ՝ աղոթք անելու, և ամբողջ գիշերն անցկացրեց Աստծուն աղոթելով» (Ղուկ. 6.12) և առավոտյան «իր աշակերտներին կանչեց, ընտրեց նրանցից տասներկուսին, որոնց էլ առաքյալ անվանեց» (6.13): Հիսուսը նրանց հնարավորություն տվեց իր մտերիմները լինելու, իրեն հետևելու և ընդօրինակելու: Նա նրանց «առաքյալներ» կոչեց (6.13): Ի սկզբանե նա պարզ ու հստակ ասաց, որ նրանք իր սուրհանդակները պիտի դառնան: Նա ընտրեց տասներկու մարդու և մի յուրահատուկ և բազմազան խումբ կազմեց: Իր ծառայության ապագան նա վստահեց սովորական մարդկանց՝ այն համոզմունքով, որ իրեն հետևելով՝ նրանք կդառնան աշխարհը վերափոխողներ: Դու էլ, շուրջդ հավաքելով սովորական, տակավին չկայացած ու շատ բաներից անտեղյակ ուսանողների՝ կփոխես, կբարելավես նրանց կյանքը, և նրանք էլ իրենց հերթին կփոխեն աշխարհը:

Շփումներ. Հիսուսն իր գործն առաքյալների հետ շարունակում էր՝ նրանց հետ հաճախակի և սերտորեն շփվելով: Նրանց վերապատրաստումը ոչ թե համաժողովներ հաճախելով կամ դասի գալով էր, այլ միմյանց հետ շփվելով, նրանց իր հետ լինելու հնարավորություն տալով (Մարկ. 3.14): Ուսումնական ծրագրում կար միայն մի կետ՝ ժամանակ անցկացնել Հիսուսի հետ: Հիսուսն իր աշակերտներին ասել էր. «Դեպի ի՛նձ եկեք» և «Ինձնի՛ց սովորեք» (Մատթ. 11.28-30): Նրանք էլ հնազանդվել էին այս կանչին ու չէին ձանձրացել: Նրանց տեսածը խիստ զարմանալի ու հրաշալի էր. Հիսուսը ջուրը գինի դարձրեց, 5,000 մարդու մի կտոր հացով կերակրեց, փոթորիկը մեղմեց: Հիսուսի հետ կողք կողքի՝ նրանք տեսան, թե ինչ է կենդանի, գործող հավատքը: Հիսուսի հետ շփվելով՝ սովորեցին վստահել Աստծուն:

Քեզ հետ էլ շփվելով՝ ուսանողներն Աստծուն վստահել կսովորեն, քեզ նայելով՝ կենդանի հավատք կտեսնեն:

Առանձնացում. Շատերն էին Հիսուսին հետևում: Ղուկասն ասում է, որ անգամ «մեծ բազմություններ էին նրա հետ գնում» (Ղուկ. 14.25). հրապուրված էին նրա հրաշագործ ձիրքով, հանրահայտ լինելու հանգամանքով: Հիսուսը, սակայն, «մաղում է» նրանց և մնում իսկական նվիրյալների հետ (տե՛ս Ղուկ. 14.25-34): Եվ աշակերտներին էլ հորդորում է, որ իրեն կարևորեն ամեն բանից ավելի՝ վեր բոլոր հարաբերություններից (14.26), վեր բոլոր ցանկություններից (14.27), և վճարեն իրեն հետևելու մեծ գինը (14.27): Մի բան պատմեց նրանց, որպեսզի լավ մտածեն, թե ինչ զոհաբերության պիտի գնան իրեն հետևելու համար՝ վերջում ասելով. «Արդ այդպես էլ ձեզանից ամեն մեկը, եթե իր ամբողջ ունեցվածքից չհրաժարվի, չի կարող իմ աշակերտը լինել» (14.33): Սրանից հետո շատերը հեռացան: Տասներկուսը մնացին: Այս առանձնացման շնորհիվ էր, որ Հիսուսի աշակերտները դարձան երկրի «աղը» (14.34), որ համ տան այս դառն ու փուչ աշխարհին: Ուսանողներին աշակերտ դարձնել նշանակում է նրանց սովորեցնել Հիսուսին կարևորել ամեն ինչից առավել՝ իրենց հարաբերություններից, գործերից, ցանկություններից, կյանքի՛ց առավել: Արդյունքում՝ նրանք կառանձնանան իրենց կյանքով ու խոսքով, ուրիշ ուսանողներ էլ կկամենան առնել այդ ախորժաբեր համը:

Նվիրում. Աշակերտների հետ շփվելիս Հիսուսը նրանց կյանք էր տալիս, իր կյանքով նրանց ապրելու օրինակ ծառայում: Ոչ թե ասում էր. «Այսօր աղոթքի մասին ենք սովորելու», այլ պարզապես աղոթում էր, աղոթում այնպես, որ նրանց մոտ ընդօրինակելու փափագ էր առաջանում, այնքան, որ մի օր, այլևս չհամբերելով, խնդրեցին, որ իրենց սովորեցնի աղոթել այնպես, ինչպես ինքն էր աղոթում (Ղուկ. 11.1-4): Աշակերտները մշտապես նրանից ինչ-որ բան էին ստանում՝ նրա վերաբերմունքը, կարծիքը կյանքի այս կամ այն հարցի մասին: Նրանից կյանք էին ստանում (Հովհ. 1.4, 6.35): Ուսանողներին աշակերտ դարձնելը նույնպես կարող է կյանքին համ տալ, երբ նրանք տեսնեն մեր ապրելակերպը, մեր լավ ու վատ կողմերը: Կարևորն այն է, որ մենք մշտապես ձգտենք, որ Հիսուսը դրսևորվի մեր միջոցով:

Սեր. Եթե Հիսուսի՝ աշակերտների հետ ունեցած հարաբերությունից հանենք սերը, ապա ինչ էլ որ մնա, ցիրուցան կլինի: Հիսուսը սիրում էր իր աշակերտներին: Ոչ միայն խոսքով, այլև գործով: Երբ Հովհաննեսը մտաբերում էր Հիսուսի հետ անցկացրած կյանքի ամենածանր պահերը, ի՞նչ հիշեց. թե ինչպես Հիսուսը «նրանց մինչև վերջ սիրեց» (Հովհ. 13.1): Հիսուսի աշակերտի գլխավոր չափանիշը սերն է. Հիսուսի և միմյանց հանդեպ տածած անշեջ սերը: Հիսուսն ինչպե՞ս էր դրսևորում իր սերն աշակերտների հանդեպ: Այդ ծանր ու տագնապալի պահին անգամ նա ստանձնեց ամենացածր ծառայի գործը՝ լվաց աշակերտների ոտքերը (Հովհ. 13): Իսկ ինչպե՞ս պիտի ուսանողները ճանաչեն Քրիստոսին: Նրանց հանդեպ քո ցուցաբերած սիրով: Ինչպե՞ս իմանան, որ քո սերն անկեղծ է: Իրենց համար կատարած քո գործերով:

Նախապատրաստում. Հիսուսն անտարակույս կարող էր կատարել ամեն բան, սակայն տեսնում ենք, որ նա նաև աշակերտներին էր տարբեր գործեր վստահում (տե՛ս Մատթ. 10): Այսպես վարվելով՝ նա աշակերտներին նախապատրաստում էր իր մահից հետո նրանց կատարելիք գործերի համար: Նա պատրաստվում էր հեռանալ, նա մոտենում էր իր կյանքը զոհաբերելու մեծագույն գործին: Իսկ աշակերտները դեռ պիտի

մնային և պիտի շարունակեին Բարի Լուրը տարածելու գործը: Ուստի Հիսուսը նրանց սովորեցրեց կարևոր բաները, սովորեցրեց սեփական օրինակով, տվեց նրանց անհրաժեշտ իշխանությունն ու կարողությունը: Նրանց նախապատրաստեց գալիք թշնամանքներին ու հալածանքներին, նաև խոստացավ, որ կստանան այն, ինչի կարիքն ունեն (10.19-20): Հորդորեց չվախենալ (10.26), կարևորել երկնայինը (10.32-39), ասաց, որ մարդիկ կարձագանքեն (10.40-42): Ուսանողներին ուսուցանելու ընթացքում կգա ժամանակ, երբ նրանց ինչ-ինչ գործեր տալու անհրաժեշտություն կզգանք և այդ պահին պետք է լավագույն կերպով հետևենք Մատթեոս 10-ի խոսքերին:

Բարեխոսություն. Հիսուսը հաճախ էր բարեխոսում իր աշակերտների համար: Տե՛ս, թե ինչպես է աղոթում նրանց համար Հովհաննես 17-ում: Այս աղոթքը Հիսուսն ասում է այն ժամանակ, երբ իր առջև խաչն էր, իսկ աշակերտները շփոթահար էին եղել: Այս աղոթքի շնորհիվ Աստված նրանց պահեց: Հիսուսը խնդրեց, որ Աստված նրանց պաշտպանի (17.11-12), ուրախություն տա (17.13), սրբացնի (17.17-19): Մենք նույնպես կարող ենք աղոթել մեր աշակերտների պաշտպանության, ուրախության ու սրբացման համար: Պետք է նրանցից ամեն մեկի համար առանձին-առանձին աղոթենք, պետք է նրանց համար հաճախակի աղոթենք:

Գնահատում. Հիսուսը հաճախ էր գնահատում աշակերտներին, և դա անում էր հանուն նրանց բարօրության ու հասունացման: Հանդիմանում էր, օրինակ, նրանց անխոհեմ խոսքերը (Ղուկ. 10.17-20), ոչ ճիշտ կարծիքները (Հովհ. 13.36-38) և սխալ նպատակները (Մարկ. 10.35-45): Հիսուսը նաև նախատում էր նրանց (Ղուկ. 9.51-56, Մարկ. 8.31-33), պատասխանում նրանց հարցերին (Մատթ. 18.21-35, 19.23.26 և այլն):

Ուսանողների համար արժեքավոր են ձեր անկողմնակալ գնահատականները: Բոլորս էլ հակված ենք սխալվելու, սակայն կարևորը դրանք հասկանալն ու ճիշտ ուղու վրա կանգնելն է, ճիշտ ճանապարհին վերադառնալը: Ձեր անաչառ գնահատականները կօգնեն, որ ուսանողներն ավելի ու ավելի նմանվեն Քրիստոսին:

«Վերարտադրում». Հիսուսը գիտեր, որ ծառայության նպատակը ոչ թե լոկ ուսուցանելն է, այլ աշակերտ դարձնելը: Դեռևս իր ծառայության սկզբում նա աշակերտներին ասաց, որ «մարդկանց որսորդներ» պիտի դառնան (Մարկ. 1.17), իսկ հետո պատվիրեց «աշակերտներ դարձնել» (Մատթ. 28.18-20): Այն, ինչ Հիսուսն արեց իր աշակերտների հետ, վաղ շրջանի եկեղեցին կատարեց իր անդամների հետ, և հենց այս «հոգևոր վերարտադրությունն էր», որ աշխարհը տակնուվրա արեց: Ավագները պիտի սովորեցնեն կրտսերներին և այսպես տարածեն ծառայության ազդեցությունը:* Հիսուսի արածն իր աշակերտների համար գործնական էր և իրական: Եթե ուսանողներին սովորեցնենք այնպես, ինչպես Հիսուսն էր սովորեցնում իր աշակերտներին, ապա ուսանողները եկեղեցու հասարակ անդամներից կդառնան լուրջ և հասուն աշակերտներ: Նրանք հանուն Հիսուսի արմատապես կփոխեն աշխարհը:

---

* Այս մտքերը քաղված են Ռոբերտ Քոլմանի «Ավետարանչության ծրագիր» աշխատությունից, իսկ որոշ գաղափարներ էլ՝ Քոլմանի մտքերն ամփոփող «Ապրելու խորհուրդներ» գրվածքից:

ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐ

Պատասխանի՛ր այս հարցերին՝ շրջանակի մեջ առնելով 1-10 թվանշաններից մեկը, որտեղ 1-ն ամենահեռուն է, 10-ը՝ ամենամոտը: Դրանից հետո գրի՛ր մի կարճ շարադրություն ուսանողներին ուսուցանելու և աշակերտ դարձնելու կարիքի և արժեքի մասին: Հետևյալ հարցերի ճիշտ պատասխանը տալու համար կատարի՛ր անհրաժեշտ ուսումնասիրությունները:

1. Ձեր ուսանողների քանի՞ տոկոսն է պարբերաբար հաճախում շաբաթական ժողովների:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

2. Ձեր ուսանողների քանի՞ տոկոսն է հեռանում պատանեկան ծառայությունից 9-12-րդ դասարաններում:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

3. Ձեր ուսանողների քանի՞ տոկոսն է ջերմեռանդորեն ջանում Քրիստոսին ավելի լավ ճանաչել:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

4. Ձեր ուսանողների քանի՞ տոկոսն է անդամակցում աշակերտության որևէ նպատակալաց խմբի:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

5. Ձեր ուսանողների քանի՞ տոկոսն է ուսուցանում և փորձում աշակերտ դարձնել առավել կրտսեր պատանիների:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

6. Ձեր ավարտական կուրսի ուսանողների քանի՞ տոկոսն է մտադիր ամբողջ սրտով հետևելու Հիսուսին և նրա հետ ապրելու (գրի՛ր ավարտական կուրսի բոլոր ուսանողների անունները և դրանցից նշի՛ր այն մարդկանց անունները, ովքեր Հիսուսին մոտենալու մտադրություն ունեն):

   1 2 3 4 5 6 7 8 9 10

«Ուսանողներին աշակերտ դարձնելու կարիքն ու արժեքը»

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպե՞ս վերապատրաստել և աշակերտ դարձնել ուսանողներին այնպես, որ փոխվի նրանց կյանքը, և նրանք էլ դառնան ուրիշների կյանքի փոփոխության միջոց:

Երբ ուսանողներն ավարտեն դասընթացը, ինչքանո՞վ փոխված կլինի նրանց կյանքը: Ինչպիսի՞ն է քո ծառայության արդյունքը:

Ուսուցման սկզբունքներ

Կարդա՛ Բ Տիմոթեոս 2.1-2 խոսքերը վեց անգամ և ամեն անգամ կարդալիս նշումնե՛ր արա ու փորձի՛ր գտնել աշակերտ դարձնելու սկզբունքներ:

> *«Արդ դու, իմ որդյա՛կ, զորացի՛ր այն շնորհով, որ Քրիստոս Հիսուսով է: Եվ այն բաները, որ ինձանից լսեցիր շատ վկաներով, հավատարիմ մարդկա՛նց հանձնիր, որ կարողանան ուրիշների սովորեցնել»:*
>
> *Բ Տիմոթեոս 2.1-2*

1.

2.

3.

4.

5.

6.

Մեկ նախադասությամբ մեկնաբանի՛ր յուրաքանչյուր սկզբունքը:

1. Ընդունում.

«Արդ դու, իմ որդյա՛կ, զորացի՛ր այն շնորհով, որ Քրիստոս Հիսուսով է»:

2. Հարաբերություն.

«...դու... ինձանից (լսեցիր) (Պողոսի և Տիմոթեոսի միջև):

3. Վստահում.

«...հանձնի՛ր»:

4. Իրատեսություն.

«...շատ վկաներով»:

5. Խմբի ձևավորում.

«...հավատարիմ մարդկանցով»

6. Վերարտադրություն.

«...ինձնից... քեզ... հավատարիմ մարդկանց... ուրիշներին»

Վերապատրաստելու և աշակերտ դարձնելու սահմանումը.

Փոքր խմբի շրջանակներում ուսանողներին միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորություն է ընձեռվում, որը պետք է ուղեկցվի կարգապահությամբ, միմյանց հաշվետու լինելով և իրար քաջալերելով. այս ամենի արդյունքում նրանք ճիշտ ապրելու որոշում են ընդունում, հասունանում են և ծառայության մեջ ընդգրկվում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Պատկերացրո՛ւ երիտասարդների մի փոքր խումբ, որն ուզում է հոգեպես հասունանալ և Քրիստոսին առավել լավ ճանաչել: Ի՞նչ քայլեր է հարկավոր ձեռնարկել այս խմբի համար:

1. Աղոթել

Տիրոջը խնդրի՛ր՝ քեզ ցույց տա, թե ում և ինչպես պետք է աշակերտ դարձնես: Աղոթի՛ր մյուս առաջնորդների համար: Աղոթի՛ր, որ ուսանողներն ընկալունակ լինեն, որ Աստված նրանց հետաքրքրություն և ուժ տա՝ հավատարմորեն հաճախելու դասընթացին:

2. Երազել

Պատկերացրո՛ւ, թե ինչպես կարող է այս ուսանողների կյանքը փոխվել, և ինչպես կարող են նրանք փոխել ուրիշների կյանքը: Այս հանգամանքն ի՞նչ ազդեցություն կունենա ձեր եկեղեցու և նրանց ուսման վայրի վրա:

3. Ընտրել

Մեկ առ մեկ զրուցի՛ր այն ուսանողների հետ, որոնց Աստված նախանշել է: Հայտնի՛ր նրանց քո տեսիլքի մասին: Նրանց բեր որոշում ընդունելու կետի: Կարևոր է, որ նրանք լավ հասկանան, թե ինչի են գնում՝ համաձայնելով մասնակցել ուսուցման քո ծառայությանը:

4. Նվիրվել

Դրական որոշում կայացրած ուսանողների հետ կազմակերպի՛ր հանդիպում և մանրամասնորեն բացատրի՛ր «Անձնական նվիրում» կետը («Հիսուսին ընդունելու մասին» գրքի 11-րդ էջում): Հասկացրո՛ւ, որ սա նշանակում է թե՛ ժամանակի տնօրինման, թե՛ ընդհանրապես կարևոր գործերի փոփոխություն: Ապա նաև օգնի՛ր հասկանան, թե դա որքան կնպաստի Քրիստոսին առավել խորությամբ ճանաչելուն, հոգեպես հասունանալուն, անհրաժեշտ հմտություններ զարգացնելուն և բուհում առավել ազդեցիկ դառնալուն:

5. Նախապատրաստվել

Ամեն շաբաթ լրացրո՛ւ քո գրքի համապատասխան հատվածը: «Դեպի հասունություն» շարքի «Առաջնորդների ուղեցույցը» օգտակար խորհուրդներ կտա այդ խումբն առաջնորդելու մասին: Այնտեղ կան նաև այնպիսի հարցեր, որոնք նախատեսված են ուսանողների համար. դրանք կարող եք արտագրել քարտերի վրա և քննարկելու համար տալ նրանց: Լավ կանեք «Առաջնորդների ուղեցույցը» չտանել, այլ ամեն անգամ հանդիպմանը գնալ նախապատրաստված:

6. Առաջնորդել

Դո՛ւ ես առաջնորդը, ուրեմն և ստեղծի՛ր առաջ ընթանալու մթնոլորտ: Տիրոջը խնդրի՛ր, որ քեզ Քրիստոսին արտացոլող առաջնորդ դարձնի: Եթե ուսանողները թերանում են, ուղղի՛ր, քաջալերի՛ր, օգնի՛ր և ամենակարևորը՝ աղոթի՛ր նրանց համար: Քո առաջնորդումը զգալի հետք կարող է թողնել նրանց կյանքում:

7. Ներդրում անել

Այդ ուսանողներին աշակերտ դարձնելն ավելին է, քան պարզապես ժողովներ անցկացնելը: Այն լուրջ ներդրում է միջանձնային հարաբերությունների մեջ: Սրանով դու դառնում ես նրանց ընկերն ու խորհրդականը, ուստի և մի՛ վարանիր նրանց ժամանակ տրամադրել ժողովներից առաջ կամ հետո:

8. Գնահատել

Ամեն շաբաթ՝ ժողովից հետո, գնահատի՛ր կատարվածը և ուղիներ փնտրի՛ր էլ ավելի բարելավելու այդ հանդիպումները: Լուծի՛ր ծագած խնդիրները, կատարի՛ր անհրաժեշտ փոփոխությունները: Օգտվի՛ր դասագրքերի խորհուրդներից:

Առաջնորդների քո խմբին մարտահրավե՛ր նետիր ու ասա՛, որ նրանք մտածեն ուսանողների մի նոր խումբ առաջնորդելու մասին:

Մեծ պատգամն իրագործելու լավագույն եղանակը միջոցառումներ կազմակերպելը չէ, պահանջվում է մի նպատակասլաց ընթացք՝ աշակերտ դարձնելու գործընթաց:

Ուսանողներին աշակերտ դարձնելու համար նախատեսված նյութեր

«Դեպի հասունություն» ձեռնարկների շարք. այս ութ հատորյակը հաստատ կնպաստի ուսանողների՝ Քրիստոսի մեջ աճելու որոշմանը. արդեն վաճառվել են այս շարքի 1 միլիոնից ավելի օրինակներ:

- **«Սկսել».** նվիրված է նորադարձներին:
- **«Հիսուսին հետևել».** ամուր հիմք է դնում Քրիստոսի հետ հարաբերություններ կառուցելու համար:
- **«Աստծո հետ առանձնանալ».** հատորն օգնում է ուսանողներին՝ իրենց առանձնության պահերին:
- **«Հիսուսը Տեր է»**. ամենօրյա հնազանդության մարտահրավեր է:
- **«Հավատ սերմանել»**. օգնում է հաղթահարել վկայություն տալուն խոչընդոտող երկչոտությունը:
- **«Աշխարհը փոխել».** հատորը հուշում է, թե որ ուսանողը կարող է ազդեցիկ լինել իր ծառայությամբ:
- **«Առանձնության պահ Աստծո հետ. օրագիր».** գործնական խոսքեր՝ Աստծո հետ մտերմանալու համար:
- **«Առաջնորդների ուղեցույց»**. ուսանողների խումբն առաջնորդելու նյութերն են:
- **«Դեպի հասունացում».** (8 հատորյակ). դարձի գալուց քայլ առ քայլ տանում է ծառայության:
- **«Աուդիո հավաքածու».** համացանցից ներբեռնելի 6 պատգամներ՝ Բարրի Քլեյրի, Դեյվ Բասբիի և Ջիմ Բերնսի ձայնագրությունները:

Այս նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

«ԿՅԱՆՔՈՒՄ ՊԱՏԱՀՈՒՄ Է»

Պատանիներին օգնի՛ր նախապատրաստվելու կյանքի կարևոր շրջադարձներին՝ բուհ ընդունվելուն, մասնագիտություն ընտրելուն, ընկերներ ձեռք բերելուն, կյանքի ընկեր գտնելուն և այլն: Առաջիկա 5 տարիների ընթացքում պատանին կարող է կայացնել իր կյանքի ամենավճռորոշ որոշումները: «Կյանքում պատահում է» գրքույկով Բարրի Քլեյրն օգնում է, որ պատանիները ճիշտ որոշումներ ընդունեն, մտածեն իրենց ինքնության և ճակատագրի մասին: Գրքում զետեղված են հարցեր, որոնց միջոցով կարող են բացահայտել իրենց անձնական յուրահատկությունները՝ անհատականության գծերը, հոգևոր պարգևները, ընդունակություններն ու արժեքները:

«ՀԻՍՈՒՍԻՆ ՀԱՎԱՍԱՐԸ ՉԿԱ»



Բարրի Քլեյրն առանձնահատուկ կերպով է ներկայացնում Աստծո Որդուն. այնպես, որ անտարակույս կուզես ընկերանալ նրա հետ. 40 օր շարունակ քեզ տանում է նրա կյանքի ուղիով՝ նրա ծննդյան ու մահվան, հարության ու համբարձման, ինչպես նաև երկրորդ գալուստի իրադարձություններով: Հարցականի տակ է դնում քո բոլոր պատկերացումները Հիսուսի մասին, և արդյունքում կյանքդ զգալիորեն բարեփոխվում է:

Այս նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում ուսանողներին վերապատրաստելու և աշակերտ դարձնելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է ուսանողներին վերապատրաստելը և աշակերտ դարձնելը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու ուսանողներին վերապատրաստելու համար:

Ովքե՞ր են այն ուսանողները, որոնց պիտի վերապատրաստես և այն առաջնորդները, ովքեր պիտի վերապատրաստեն նրանց:

Որտե՞ղ եք հանդիպելու դասընթացն անցկացնելու համար:

Ե՞րբ եք սկսելու և որքա՞ն ժամանակ եք շարունակելու առաջնորդների վերապատրաստման դասընթացը:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐ

ԴԱՍ 6-ՐԴ

Հետևենք Հիսուսի օրինակին

Հիսուսն էր միշտ մթնոլորտ ստեղծում, հատկապես երբ գործ ուներ «մեղավորների» հետ: Մի առիթով նա իր մասին ասում է. «Մարդու Որդին եկել է, որ կորածին փնտրի ու փրկի» (Ղուկ. 19.10):

Մեր և մեր ուսանողների առնչությունն անհավատների հետ լավ հասկանալու համար պատկերացրո՛ւ մի նիզակ: Հիսուսն այդ նիզակի ծայրն էր, աշակերտները՝ մյուս ծայրը պահող փայտը: «Իմ հետևի՛ց եկեք, - ասում էր Հիսուսը, - ու ես ձեզ մարդկա՛նց որսորդ կանեմ» (Մատթ. 4.19): Մեր ծառայության մեջ էլ Աստված մեզ և մեր ուսանողներին Հիսուսին հետևելու և անհավատ պատանիներին Հիսուսին բերելու կոչ է անում: Մեր ուսանողները կհետևեն մեր օրինակին այնպես, ինչպես աշակերտներն էին հետևում Հիսուսի օրինակին:

Մարկոս 1-10-րդ գլուխներում ունենք առնվազն տասնյոթ օրինակ այն մասին, թե ինչպես էր Հիսուսը թափանցում անհավատների միջավայր:

- 1.14-ում՝ *գնաց Գալիլեա՝ Աստծո Բարի Լուրը հռչակելով,*
- 1.21-ում՝ *գնաց ժողովարան ու սկսեց սովորեցնել նրանց,*
- 1.38-ում՝ *պատասխանեց. «Մոտակա գյուղերն ու քաղաքները գնանք, որ այնտեղ էլ քարոզեմ»:*
- 2.1-2-ում՝ *«Եվ նա Աստծո խոսքն էր նրանց ասում»:*
- 2.13-ում՝ *«Եվ դարձյալ դուրս գնաց դեպի ծովեզրը. ամբողջ ժողովուրդն էլ նրա մոտ էր գալիս, և նա սովորեցնում էր նրանց»:*
- 3.1-ում՝ *«Դարձյալ ժողովարան մտավ: Այնտեղ ձեռքը չորացած մի մարդ կար»:*
- 4.35-ում՝ *«Այդ օրը՝ իրիկնադեմին, նրանց ասաց. «Եկե՛ք մյուս կողմն անցնենք»:*

- 6.6-ում՝ *«Գնում էր չորս կողմի գյուղերն ու սովորեցնում»:*
- 6.56-ում՝ *«Եվ ուր որ մտնում էր, գյուղեր, քաղաքներ, թե ագարակներ, հիվանդներին փողոցներում էին դնում... և ովքեր որ նրան դիպան, բժշկվեցին»:*
- 7.24-ում՝ *«Եվ այնտեղից վեր կացավ ու գնաց Տյուրոսի և Սիդոնի կողմերը»:*
- 7.31-ում *«Եվ դարձյալ Տյուրոսի և Սիդոնի կողմերից դուրս գնաց, Դեկապոլիսի կողմով Գալիլեայի ծովի մոտ եկավ»:*
- 8.22-ում՝ *«Բեթսայիդա եկավ. նրա առաջ մի կույրի բերեցին ու նրան աղաչում էին, որ դիպչեր նրան»:*
- 8.27-ում՝ *«Հիսուսն իր աշակերտների հետ Փիլիպպյան Կեսարիայի գյուղերը գնաց»:*
- 10.1-ում՝ *«Այնտեղից վեր կացավ, Հորդանանի մյուս կողմը՝ Հրեաստանի սահմանները եկավ»:*
- 10.17-ում՝ *«Այնտեղից ճանապարհ ընկնելիս մեկը վազելով մոտեցավ, ծնկի գալով նրան հարցրեց...»:*
- 10.32-ում՝ *«Երբ ճանապարհով Երուսաղեմ էին գնում. Հիսուսը նրանց առաջից էր գնում»:*
- 10.46-ում՝ *«Եկան Երիքով, ու երբ նա և իր աշակերտներն ու շատ ժողովուրդ Երիքովից դուրս էին գալիս... կույր Բարտիմեոսը, ճանապարհին նստած, մուրացկանություն էր անում»:*

Հիսուսի ծառայությունից շատ բան կարող ենք սովորել այն մասին, թե ինչպես պետք է մուտք գործել ուսանողական միջավայր: Պարզ է, թե ինչ է ուզում, որ անենք. դա արձանագրված է բոլոր չորս Ավետարաններում (Մատթ. 28.18-20, Մարկ. 16.15, Ղուկ. 24.46-47, Հովհ. 20.21), նաև՝ Գործքում (1.8): Կարծես թե առաջնորդներին ասում է. «Գնացե՛ք, որտեղ ուսանողներն են», իսկ ուսանողներին էլ. «Դե եթե դասի եք գնում, ապա պետք է ձեզ հետ սովորողներին հայտնեք Բարի Լուրը»:

Հիսուսի պատգամը պարզ ու հստակ է.

«Ուր որ գնում ես՝ Բարի Լուրն ավետի՛ր»:

ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐ

Պատասխանի՛ր այս հարցերին՝ շրջանակի մեջ առնելով 1-10 թվանշաններից մեկը, որտեղ 1-ն ամենահեռուն է, 10-ը՝ ամենամոտը: Դրանից հետո գրի՛ր մի կարճ շարադրություն ուսանողական միջավայր մուտք գործելու մասին:

1. Եթե այսօր բուհ գնաս, քեզ ինչքա՞ն ազատ կզգաս:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

2. Քո ժամանակի ո՞ր մասն ես անցկացնում բուհում:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

3. Բուհում քեզ ծանոթ բոլոր ուսանողների քանի՞ տոկոսն են անհավատ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

4. Քո կամավորների քանի՞ տոկոսն են ավետարանչության նպատակով բուհ գնում:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

5. Որքանո՞վ ես լավ վերապատրաստում ուսանողներին Հիսուսի պես ապրելու և նրա անունը հռչակելու համար:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

6. Քո ուսանողների քանի՞ տոկոսն է իրեն ակտիվ վկայող համարում բուհում:

1 2 3 4 5 6 7 8 9 10

«Սովորողների միջավայր թափանցելու կարիքը»

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կամավորներին, ծնողներին և ուսանողներին ինչպե՞ս դարձնել այնպիսի աշակերտ, որ Բարի Լուրը հասցնեն սովորողների (ուսանողների և դպրոցականների) միջավայր:

Տրամաբանական է, որ դրա համար պետք է գնալ այնտեղ, որտեղ սովորողներն են հավաքվում: Ամերիկաբնակ ուսանողների ութսունութ տոկոսը Հիսուսին չի ճանաչում, իսկ եկեղեցում քչերն են զբաղվում այդ հիմնախնդրով: Մեզ այդ գործին կարող է մղել միայն Հիսուսը, երբ գա ու մեր ներաշխարհն այնպես փոխի, որ այլևս չկարողանանք ինքներս մեզ հույս տալով ապրել, այլ վեր կենանք ու գնանք նրանց միջավայր:

Իսկ ի՞նչ ենք մենք տեսնում Հիսուսի մեջ, որը մեզ մղում է այդ գործին.

ԱՍՏՈՇ ՍԵՐԸ (Մարկոս 6.34)

Հիսուսը կարեկցում է մարդուն: Մարկոս 6.34-ում տեսնում ենք, որ Հիսուսը «գթաց նրանց, որովհետև հովիվ չունեցող ոչխարների պես էին»: Ինչպես Հիսուսի գութը նրան մարդկանց ընդառաջ տարավ, այնպես էլ մեր գութը մեզ ուսանողներին ընդառաջ պիտի տանի: Հիսուսը մեզ հորդորում է անտարբեր չլինել այս անտարբեր աշխարհում:

ՀԻՍՈՒՍԻ ԿՈՉԸ (Հովհաննես 20.21)

Հիսուսը Հայր Աստծո աջ կողմում էր, սակայն հոժարակամ թողեց այդ ամենը և աշխարհ եկավ, որպեսզի սեփական տառապալից կյանքով ու մահով փրկություն ապահովի մարդկության համար: Միայն պատկերացրու, թե ինչ մեծ տարբերություն կա իր հավիտենական փառաց վիճակի ու այն կարգավիճակի միջև, որին նա գնաց՝ մսուր, մարդկային մարմնի ծանրություն ու տկարություն, ցավ ու մահ... Նա այդ ամենին գնաց հանուն մեզ և մեզ կոչ է անում հետևել իր օրինակին:

Մեր գթասրտությունը վկայում է, որ այս անտարբեր աշխարհում մենք անտարբեր չենք:

ՀԻՍՈՒՍԻ ՕՐԻՆԱԿԸ (Հովհաննես 1.14)

Հիսուսը մեր՝ մարդկանց մեջ բնակվեց. նա իր վրանը կանգնեցրեց, իջևանեց մարդկանց մեջ: Նա եկավ մեզ հետ լինելու, որպեսզի մենք էլ ի վիճակի լինենք իր հետ լինելու: Ինչո՞ւ: Որպեսզի մենք էլ, մեր հերթին, գնանք այն մարդկանց մոտ, ովքեր Աստծուն չեն ճանաչում, նրանց հետ լինենք այնպես, ինչպես Հիսուսն էր մեզ հետ, որպեսզի ճանաչեն Աստծուն այնպես, ինչպես Աստծուն ճանաչեցին բոլոր այն մարդիկ, ովքեր Հիսուսի հետ էին:

ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՏԱԼԻ ՑԱՎԵՐԸ (Ղուկ. 5.12-16)

Հիսուսը լավ գիտեր, թե ինչ է ցավը: Նա լրիվ հաղորդակից էր բորոտի ցավին և նրանից երես չթեքեց. ընդհակառակը՝ ընդառաջ գնաց ու բժշկեց: Այսօրվա սերունդն ավելի շատ խնդիրներ ունի, ավելի շատ ցավ ու անհանգստություն, քան նախորդ որևէ սերունդ: Այսօրվա սերունդն էլ բորոտի պես բժշկարար հպումի կարիք ունի ու սիրալիր գթասրտության պակաս: Տառապյալ ծառայի, վերքերն իր վրա վերցնող բժշկի կարիքն ունի (տե՛ս Ես. 53.4-6). Նա է վերջին ու միակ հույսը: Հիսուսը նրանց կարող է հասնել մեր միջոցով՝ մեր հնազանդությամբ, մեր խոնարհությամբ, մեր կարեկցանքով:

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ (Ղուկ. 15.1-2)

Հիսուսը մեղավորներին ընդառաջ գնալու որոշում ընդունեց՝ իմանալով, որ դրանով կհեռանա կրոնական հեղինակություններից: Բայց այս հանգամանքը նրան այդ քայլից հետ չպահեց, քանզի կարևորում էր կարևորը: Նրա համար ավելի կարևոր էր, որ մեղավորներն իմանային նրա սերն իրենց հանդեպ, քան թե եկեղեցականներին հաճելի երևար: Երիտասարդները նեղության մեջ են՝ շփոթված, հարստահարված, և նրանց համար հույժ կարևոր է իմանալ, որ մեկը կա իրենց կողքին, որ հասկանում է, սիրում ու հոգ է տանում իրենց համար: Իսկ կրոնավորները այդ բանն անտեսում են, չեն հասկանում և չեն էլ ուզում, որ իրենց կողքին նման մարդիկ լինեն: Բայց պիտի իմանանք, որ Հիսուսին նմանվել նշանակում է նաև խնդիրներ ունենալ կրոնավոր մարդկանց հետ:

ԿՅԱՆՔԻ ԿԱՐԻՔ (Հովհ. 17.3)

Սովորողները կյանքի կարիք ունեն, բայց չգիտեն՝ որտեղ գտնեն այն: Իսկ մենք գիտենք: Հիսուսի մեջ և ուրիշ ոչ մի տեղ: Հիսուսն ասել է. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ՝ միայն ճշմարիտ Աստված, և նրան, որին ուղարկել ես՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհ. 17.3): Մեր միջոցով նրանք կարող են գտնել Հիսուսին, կարող են գտնել կյանք:

Սովորողները կարող են Հիսուսի մեջ կյանք գտնել՝ քո միջոցով:

ՀԻՍՈՒՍԻ ՊԱՏԳԱՄԸ (Մատթ. 28.7, 10)

Հիսուս հարյավ ի մեռելոց, և ինչպես հրեշատակն ասաց. «Ահա նա ձեզանից առաջ Գալիլեա կգա»: Հարուցյալ Քրիստոսը մեզ մենակ չի ուղարկում: Նա մեզ հետ է, մեզնից առաջ է գնացել այնտեղ: Արդեն իսկ նա սկսել է իր գործն սովորողներից յուրաքանչյուրի կյանքում: Այժմ մեզ է սպասում, որպեսզի գործն իր ավարտին հասցնի: Նոր Կտակարանում «ժամանակ» նշանակող երկու բառ կա՝ «խրոնոս» և «կայրոս»: Առաջինն ամենօրյա, անցնող ժամանակն է՝ րոպե առ րոպե, ժամ առ ժամ: Իսկ «կայրոսը» հատուկ շրջանն է, մի բան անելու ճիշտ ժամանակը: Հիսուսն էլ այս աշխարհ եկավ դրա համար նախատեսված ճիշտ ժամանակին. «երբ ժամանակի լրումը եկավ» (Գաղ. 4.4): Մենք էլ, մեր մեջ բնակվող Հոգու միջոցով, ապրում ենք մեզ համար նախատեսված ճիշտ ժամանակներում. մեր շրջապատում կան մարդիկ, ովքեր հենց մե՛ր գթասրտության կարիքն ունեն, ում Հիսուսը կսփոփի մե՛ր միջոցով: Աստված մեզ հետ է և առաջնորդում է սովորողների կյանքն իմաստավորելու: Հիմա է ճիշտ պահը՝ «կայրոսը»:*

Հավանաբար եկեղեցու մեծագույն խնդիրն այսօր իր չորս պատերից դուրս գալն ու այսօրվա մատաղ սերնդին Հիսուսին հետևելու կոչ անելն է:

* Այս պարբերության միտքը հղացավ, երբ լսում էի ընկերոջս՝ Ռիչարդ Ռոսի սրտաբուխ պատգամն ուսանողներին ավետարանելու մասին: Ռիչարդը երիտասարդական ծառայության մասին դասախոսություններ է կարդում Տեխասի նահանգի Ֆորտ Ուորտի «Հարավարևմտյան ճեմարանում»:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Մի օր գնա՛ ինստիտուտի կամ դպրոցի մերձակայքը և փորձի՛ր ուսումնասիրել ուսանողների կամ դպրոցականների վարքագիծը, նրանց պահվածքն ու խոսելաձևը: Ու ինքդ քեզ հա՛րց տուր. «Այս մարդիկ ճանաչո՞ւմ են Հիսուսին»: Այս քայլը աչքերդ կբացի, ու ավելի լավ կճանաչես նրանց և որքան ավելի լավ ճանաչես, ավելի շատ կմտահոգվես նրանց համար, ավելի շատ կծանրանա սրտիդ բեռը: Իսկ այժմ, երբ արդեն գիտես ողբալի վիճակը.

1. Աղոթի՛ր նրանց համար (Գործք 2.47):

Հիշի՛ր նախկինում ստեղծված աղոթողների եռյակին. կրկին միաբանվելով՝ աղոթե՛ք այս երիտասարդների ու պատանիների համար:

2. Տեղեկացի՛ր դպրոցի մասին (Գործք 17.16):

Դրա համար հարկավոր է կա՛մ ձեռք բերել տվյալ դպրոցի պարբերականը, կա՛մ զրուցել այդ դպրոցի աշակերտների հետ, կա՛մ մասնակցել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, կա՛մ էլ մի ուրիշ միջոցի դիմել՝ ըստ տվյալ դպրոցի պայմանների:

3. Կա՛պ հաստատիր դպրոցի տնօրենի հետ (Եփես. 6.7):

Նախ որոշի՛ր՝ պատրա՞ստ ես արդյոք ծառայելու տվյալ դպրոցում: Հիսուսի պես ծառայելով՝ կարող ես ամեն դուռ էլ թակել, և այն կբացվի քո առջև: Դպրոցի տնօրենի հետ ծանոթանալու համար կարելի է խնդրել ծնողներից մեկին, որ ծանոթացնի ինչ-որ միջոցառման ժամանակ: Տնօրենի հետ ծանոթանալիս այնպե՛ս արա, որ նրան ինչ-որ բան անելու խոստում տաս, որպեսզի կարողանաս հատուկ գործով դպրոց այցելել, տնօրենի հետ խոսելու առիթ ունենալ և այդպես շարունակ. կարևորը՝ նրա հետ պարբերաբար հաղորդակցվելն է:

4. Դպրոցի համար մի բարեգործությո՛ւն արա (Կող. 3.23-24):

Որպեսզի կողմնորոշվես, թե Աստված որտեղ է ուզում կատարես ծառայությունդ, գտի՛ր քեզ հետաքրքրող մի բան որևէ դպրոցում կամ հետաքրքրվիր, թե ինչի կարիք ունի այդ դպրոցը, որը մտահոգում է նաև քեզ: Դրա համար կարող ես զրուցել ուսուցիչների, աշակերտների, նրանց ծնողների կամ դպրոցի հետ առնչություն ունեցող այլ մարդկանց հետ: Պետք է հաճախակի դպրոց այցելել և ուշադի՛ր լինել թե՛ ասված խոսքերին, թե՛ տիրող իրավիճակին, թե՛ քո ներքին ձայնին:

5. Ընկերացի՛ր դպրոցականների հետ (Հովհ. 4.1-42):

Տե՛ս, թե ինչպես Հիսուսն ընկերացավ մի անծանոթի հետ (Հովհ. 4-րդ գլխում), հարցեր տվեց և ուշադիր լսեց, ուշադրություն դարձրեց կարիքների վրա, ապա դրանք հոգալու և քաջալերելու քայլ արեց:

6. Ընդգրկի՛ր կամավորներին և ծնողներին (Կող. 4.7-15):

Ինչպես Հիսուսը, այնպես էլ Պողոսը շատ բան արեց իր աշակերտների համար: Նշված հատվածում հիշատակվում են նրանցից մի քանիսի անունները և նրանց դերն իր ծառայության ընթացքում: Այս գործում կամավորներին և ծնողներին ընդգրկելով՝ նրանց իրենց տեղն ու ծառայությունը գտնելու հնարավորություն և իրենց պարգևներն ու ունակությունները դրսևորելու առիթ ես ընձեռում:

- Կարող ես դպրոցականների հետ խոսելու համար դպրոց գնալ առաջնորդների խմբի հետ:
- Տեսնել, թե աշակերտներն ինչ կարիքներ ունեն և առաջնորդներից ով ունի այդ կարիքը հոգալու համար համապատասխան ունակություն:
- Ծնողները կարող են իրենց զավակի համադասարանցիներին տուն հրավիրել և հյուրասիրություն կազմակերպել:
- Այս գործում կարող են օգտակար լինել նաև ուսանողները: Կարող ես նաև կապ հաստատել տարածքում գործող քրիստոնեական ուրիշ ծառայությունների հետ և այլն:

7. Ընդգրկի՛ր ուսանողներին (Գործք 5.41-42)

Հիշի՛ր՝ դու նիզակի սուր ծայրն ես, ուսանողները՝ մյուս ծայրի փայտը:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



Այսօր հույժ կարևոր է դպրոցականներին և ուսանողներին ավետարանել այնտեղ, որտեղ նրանց հարմար է՝ իրենց ուսումնական հաստատությունում: Երիտասարդներին բնորոշ են հուզական, սոցիալական և հոգևոր լուրջ խնդիրները, ուստի մենք պարտավոր ենք լինել նրանց հետ իրենց կարիքի պահին: «Մուտք գործել ուսումնական հաստատություն» ձեռնարկն այս խնդրին է նվիրված, այն երիտասարդական ծառայության առաջնորդներին կարևոր մտքեր և գործնական քայլեր է հուշում՝ ի նպաստ երիտասարդներին ավետարանելու փափագն իրագործելու: Ձեռնարկում կան բազմաթիվ խորհուրդներ այն մասին, թե ինչպես պետք է հաղորդակցվել երիտասարդների հետ, որպեսզի նրանց համար հասկանալի լինի, և ծառայությունը կատարվի արդյունավետ:

«ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ԳՐԱՎԵԼՈՒ» ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»



Տե՛ս, թե ինչ արմատական գաղափար է՝ «գրավել» ուսումնական հաստատությունը. դա հնարավոր է: Միայն պետք են հաստատակամ մարդիկ: Անհավատները հաստատակամ մարդկանց հաստատակամ սիրո կարիքն ունեն: Այս ձեռնարկում ուսանողները կարող են գտնել հաստատակամ դառնալու և հաստատակամ սեր ունենալու ճանապարհը: Այո՛, Աստված ուզում է, որ ուսանողները վստահ լինեն, իրեն հուսան և այս կարևոր գործն Աստծո առաջնորդությամբ կատարեն: «Ուսումնական հաստատությունը «գրավելու» հնարավորությունը» ձեռնարկը գործնական խորհուրդներ է տալիս և կատարում ուսումնական հաստատությունը եկեղեցու հետ կամրջելու դեր, ինչը, գուցե, երկրի կարևորագույն միսիոներական հիմնախնդիրն է:

Այս նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում սովորողների միջավայր մուտք գործելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է սովորողների միջավայր մուտք գործելը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու սովորողների միջավայր մուտք գործելու համար:

Ովքե՞ր են այն երիտասարդները և պատանիները, որոնց հետ պիտի ընկերանաս իրենց ուսումնական հաստատությունում:

Որտե՞ղ եք կատարելու դա՝ ո՞ր հաստատությունն եք գնալու:

Ե՞րբ եք սկսելու կատարել այս գործնական քայլերը:

ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԱՍ 7-ՐԴ

Հետևենք Հիսուսի օրինակին

Հիսուսն իրեն ներկայացնել գիտեր: Ինչպես ասում է Հովհաննես առաքյալը.

> *«Տոնի վերջին մեծ օրը Հիսուսը կանգնած էր. բացա-կանչեց ու ասաց. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի: Ինչպես Գիրքն է ասում «Ինձ հավատացողի փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»:*
>
> *(Հովհ. 7.37-38):*

Գլխավոր ուսուցիչը՝ Հիսուսը մեզ ցույց է տալիս, թե ինչպես է հարկավոր ներկայացնել Իրեն:

Անհրաժեշտ է մշակութային ընդունված եղանակներով ավետարանչություն անել,

որին կմասնակցեն նաև ուսանողների անհավատ ընկերները...

Եկե՛ք առավել ուշադրությամբ քննենք այս հարցը:

Նախ՝ «Հիսուսին ներկայացնելու մասին». Տաղավարների տոնը ծիսական արարողություն էր, որով Իսրայելի զավակները մտաբերում էին, թե ինչպես էին իրենց նախնիներն ապրել տաղավարներում (վրանատիպ կացարաններում) անապատային դեգերումների ժամանակ, որտեղ ջուրը հազվագյուտ էր և թանկարժեք: Արարողակարգն այսպես էր. քահանան վերցնում էր մի ոսկեզօծ ջրաման, գնում Սիլոամի ավազանից ջուր լցնում: Վերադառնալիս բացում էր հատուկ այս տոնի համար կառուցված դարպասը, որ այդպես էլ կոչվում էր՝ «Ջրի դարպաս», և անցնում, իսկ թափորն արտասանում էր. «Ուրախությամբ ջուր կքաշեք փրկության աղբյուրներից» (Եսայիա 12.3): Քահանան ջուրը բերում էր Տաճար և լցնում զոհասեղանի վրա՝ որպես պատարագ: Հավանաբար հենց այդ պահին Հիսուսի խոսքերը ղողանջեցին ամենուր. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի»: Ոչ ոք չկասկածեց, թե ով էր այդ աղաղակողը, և թե ինչ էին նշանակում նրա խոսքերը. Հիսուսը հայտարարում էր, որ հենց ինքն էր

ծիսակարգով խորհրդանշվող Կենդանի (անմահական) Ջուրը: Ապա նաև խոստացավ, որ իրեն հավատացող ամեն մեկից անմահական ջրի գետեր կհոսեն: Երիտասարդական ծառայության առաջնորդների խնդիրն այն է, որ Հիսուսին այնպես համարձակ ու միանշանակ ներկայացնեն, որ պատանիները գան դեպի Հիսուսը՝ գիտակցելով, որ իրենք դրա կարիքն ունեն: Այս գործին հարկ է ստեղծագործաբար մոտենալ, որպեսզի ունկնդիրները ծարավեն ու գան:

Իսկ այժմ՝ «Ավետարանչության ընդունված եղանակների» մասին. սովորենք Ղևիից, որ հենց նոր էր ծանոթացել Հիսուսի հետ: Նա լավ գիտեր, թե ինչպես է պետք այդ իրադարձության մասին հայտնել իր ընկերներին (Ղուկ. 5.27-28): Աշխարհի մոլորվածներին մոտենալու լավագույն արահետն իրենց շարքերում եղած մարդն է: Եթե մեկը Ղևիի նման «ամեն բան թողեց, վեր կացավ ու նրա հետևից գնաց», ապա նա ամենալավ վկայությունը կլինի իր նախկին ընկերների համար: Ղևին, օրինակ, շատ էր ուզում, որ իր հարազատներն ու գործընկերները նույնպես ծանոթանային Հիսուսի հետ: Ղուկասը բացատրում է, որ այդ նպատակով «... մի մեծ խնջույք կազմակերպեց, որին հրավիրել էր...» (Ղուկ. 5.29): Իրոք Ղևին մի խնջույք էր կազմակերպել, որպեսզի բոլորը գան: Եվ այդ եղանակով նա լավ հնարավորություն ուներ բոլորին պատմելու իր նոր կյանքի մասին: Անհարմար չէին զգում ո՛չ Ղևին, ո՛չ էլ նրա ընկերները: Երիտասարդական միջոցառումներն էլ պիտի այդպիսի անկաշկանդ մթնոլորտում ընթանան: Նորադարձ քրիստոնյաները պիտի վստահ լինեն, որ հրավիրյալներն իրենց վատ չեն զգա ավետարանչական միջոցառման ընթացքում:

Եվ վերջապես «անհավատ ընկերներին հրավիրելու» մասին. միամիտ աշակերտները լավ չէին հասկացել, թե իրենց Տիրոջը ներկայացնելու համար ինչ լավ առիթներ են ընձեռվում կյանքում: Մարդիկ ինքնակամ գալիս էին Հիսուսի մոտ, ցանկանում, որ նա օրհնի իրենց զավակներին, իսկ աշակերտներն արգելում էին՝ թույլ չէին տալիս, որ չարաճճի երեխաները մոտենան Հիսուսին (Մարկ. 10.13): Եկեղեցու անդամները հաճախ են այսպես վարվում, անհավատներին ակամա հեռու են պահում Հիսուսից:

«Իսկ երբ Հիսուսը տեսավ, բարկացավ ու նրանց ասաց.
«Երեխաներին թո՛ւյլ տվեք, որ ինձ մոտ գան»

(Մարկ. 10.14-16):

Աշակերտների պես մենք էլ կարող ենք դասակարգել մարդկանց՝ ասելով, թե այս մեկի տարիքն այն չէ, մյուսի՝ կենսակերպը, երրորդի «մակարդակը» և այլն: Մեր այս վերաբերմունքը կարող է խոչընդոտել Ավետարանի տարածմանը: Հետո էլ ասում ենք, թե անհավատներն ինչու չեն գալիս կամ ինչու չեն դրական արձագանքում մեր կանչին և այլն: Բայց չէ՞ որ Հիսուսի դեսպաններն ենք, չէ՞ որ նրա Հոգին է բնակվում մեր մեջ, և այդ Հոգով է, որ պիտի ճանապարհից հեռացնենք բոլոր տեսակի արգելքները, որպեսզի մարդիկ գան ու ճանաչեն Հիսուսին:

«Մի բան եմ նկատել եկեղեցի չհաճախող մեր երեխաների մոտ. նրանք մոլի կրոնավորի ջերմեռանդությամբ ձգտում են արկածային, վտանգաշատ կենսակերպի, իսկ մեր եկեղեցի հաճախող երեխաները պարփակված, կողպված են եկեղեցու անվտանգ տանիքի ներքո: Ուստի և բոլոր հավատացյալ երիտասարդներին կոչ եմ անում թողնել իրենց փափուկ բազմոցներն ու գնալ իրենց հասակակիցների մոտ, հանուն Քրիստոսի դիմել իրենց առջև ծառացած ամեն տեսակ վտանգի:

Շատերը պարզապես սպասում են, որ եկեղեցին իրենց մի մեծ, իմաստալից, վտանգավոր քայլ անելու կոչ կանի»:

Փոլ Բորթվիկ

ԲԱՐԴ ՀԱՐՑԵՐ

Պատասխանի՛ր այս հարցերին՝ շրջանակի մեջ առնելով 1-10 թվանշաններից մեկը, որտեղ 1-ն ամենահեռուն է, 10-ը՝ ամենամոտը: Դրանից հետո գրի՛ր մի կարճ շարադրություն ավետարանչության խելամիտ եղանակներ ստեղծելու մասին:

1. Որքա՞ն ես մտահոգված քո համայնքի պատանիների ճակատագրով:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

2. Որքա՞ն է արդյունավետ ավետարանելու քո ձիրքը:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

3. Քեզ հետ ծառայողների քանի՞ տոկոսն ունի ավետարանչության հակում:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

4. Որքանո՞վ են «հեթանոսամետ»՝ ձեր մշակույթում ընդունված ձևով անցկացրած ավետարանչական ծառայությունները:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

5. Ձեր ավետարանչական ծառայություններին հաճախողների քանի՞ տոկոսն է անհավատ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

6. Քո ակտիվ ուսանողների քանի՞ տոկոսն է Քրիստոսին դարձել վերջին տարվա մեջ:

   1 2 3 4 5 6 7 8 9 10

«Մշակութային ընդունված եղանակով ավետարանչություն անելու կարիքը»

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպե՞ս Հիսուսին ներկայացնել ավետարանչության ընդունված եղանակներով, որոնց մասնակից կլինեն ուսանողների անհավատ ընկերները:

Եթե ուզում ենք երիտասարդներին հրավիրել Հիսուսի հետ ծանոթանալու և նորովի ապրելու, ապա պիտի նախ ընդունենք, որ հաճախ մենք Հիսուսին լավ չենք ներկայացնում՝ մեր կազմակերպած միջոցառումներն արտասովոր են, երբեմն վանող: Գրավիչ, հետաքրքիր բան չի ներկայացվում և այլն: Վերը նշված հարցին պատասխանելիս պետք է հաշվի առնել նաև եկեղեցու մեջ փոփոխություններ անելու անհրաժեշտությունը: Այս նպատակով առաջարկում եմ որդեգրել հետևյալ «4-2-5» մոտեցումը, որը ներառում է 4 հատկանիշ, 2 հայեցակետ և 5 տարբերակ:

4 հատկանիշ.

Բարի Լուրը տարածելու Հիսուսի մոտեցմանը բնորոշ էր չորս հատկանիշ.

1) **Հիսուսն ուշադրության կենտրոնում էր (Մարկ. 1.40-45):** Թեև բորոտը մաքրվում, և զանազան հրաշքներ էին տեղի ունենում, Հիսուսը մնում էր իր առանցքային, հերոսական դիրքում՝ այնպես, որ մարդիկ ամեն տեղերից ուզում էին գալ ու նրան տեսնել:
2) **Բազմությունը խանդավառված էր (Մարկ. 4.1):** Մի առիթով այնքան մեծ բազմություն էր հավաքվել Հիսուսի շուրջը, որ նա ստիպված էր ծովեզերքից էլ այն կողմ անցնել, մի նավակի մեջ մտնել, որպեսզի իրեն շատ չհրմշտեն:
3) **Հավատացյալներն իրենց ընկերներին բերում էին Հիսուսի հետ ծանոթացնելու (Ղուկ. 5.27-29):** Ղևին, որ մի ազգուրաց հարկահանի անուն էր վաստակել, մի օր Հիսուսին հանդիպեց: Նա այնքան շատ էր ոգևորվել Հիսուսով և այնքան շատ էր ուզում, որ իր ընկերներն էլ նրան հանդիպեին, որ մի խնջույք կազմակերպեց ու բոլորին հրավիրեց:
4) **Մարդկանց կյանքը փոխվում էր մեկընդմիշտ (Մատթ. 20.29-34):** Երբ երկու կույրերը ողորմության աղաղակ էին բարձրացնում, Հիսուսն իր կարեկցանքով նրանց տեսողություն պարգևեց, որից հետո նրանք Հիսուսի հետևից գնացին՝ հավիտյան փոխված:

2 Հայեցակետ

Արդյունավետ և երկարաժամկետ ծառայություն ծավալելու համար հարկ է հեռատես լինել, պետք է կարողանալ չխճճվել առօրեական խնդիրների մեջ և տեսնել ապագան: Սա նման է հեռադիտակով նայելուն: Մեր այս «հեռադիտակը» երկու ոսպնյակ ունի.

1) **Պետք է ուշադրությունը բևեռել Հիսուսի վրա.** պետք է ամեն խոսք, ամեն պատգամ ուղղված լինի դեպի Հիսուսը: Տանուլ կտանք ամբողջ միջոցառումը, եթե ուշադրություն դարձնենք ներկաների քանակի վրա: Հաջողությունը ոչ թե թվերի, այլ Հիսուսին հանդիպելու մեջ է:

2) **Պետք է չշեղվել բուն նպատակից.** որպեսզի ընթացքում չմոլորվենք, թե ինչ պետք է անենք, և որպեսզի ներկաները չձանձրանան ու վատ տպավորությունով չհեռանան, միշտ պետք է հիշենք ավետարանչության մեր նպատակը. «Հիսուսին ներկայացնել ավետարանչության ընդունված եղանակներով, որոնց մասնակից կլինեն ուսանողների անհավատ ընկերները»:

5 տարբերակ

Ավետարանչական միջոցառում կազմակերպելը բավականին աշխատատար, հոգնեցուցիչ գործ է: Դրա համար պետք է նախօրոք որոշել՝ ինչը, երբ և ինչպես պետք է անել, պարզել, թե ինչ հնարավոր տարբերակներ կան առավել արդյունավետ գործելու, սակավ միջոցները խնայելու համար: Պետք է համագործակցել ավետարանչական խմբի բոլոր ծառայողների հետ: Հիշենք, որ իրենց սիրած գործն անելու համար երիտասարդներն ունեն անհրաժեշտ տրամադրությունն ու եռանդը, կարող են պատասխանատվություն կրել նախապատրաստական և կազմակերպչական տարաբնույթ գործերի համար:

1) **Ընդօրինակի՛ր.** սկզբունքն այստեղ այն է, որ «արևի տակ ոչ մի նոր բան չկա» (Ժող. 1.9): Ուստի կարելի է ընդօրինակել մեր տեսած ինչ-որ միջոցառումից:

2) **Ստեղծագործի՛ր.** սակայն կա մեկ այլ սկզբունք, ըստ որի՝ «մարդիկ տեր են կանգնում իրենց ստեղծածին»: Սա, իհարկե, ավելի բարդ և ժամանակատար ճանապարհ է, բայց մյուս կողմից նպաստում է աշխատանքային մթնոլորտում ընկերական հարաբերությունների ձևավորմանը, որն իսկապես ուրախալի և արժեքավոր արդյունք է:

3) Գնի՛ր. գոյություն ունեն ժամանցային, համերգային, թատերական տարբեր ծրագրեր, ճարտասաններ, երգիծաբաններ, ասմունքողներ, որոնց կարելի է պայմանագրային հիմունքներով գործի հրավիրել: Որևէ պայմանագիր ստորագրելուց առաջ, պետք է լավ իմանալ, թե ինչի համար ես գումարներ տալիս:

4) Վարձակալի՛ր. շատ դեպքերում եկեղեցու ավանդական շինություններից ավելի գրավիչ են թատրոնների բեմերը, զբոսայգիների բացօթյա տարածքները, երբեմն նույնիսկ մարզասրահները, հատուկ միջոցառումների համար նախատեսված դահլիճները և այլն: Ուրեմն նաև հաշվի առ, թե երիտասարդներն ավելի հաճույքով ուր կգան:

5) Համագործակցի՛ր. կարելի է պարզել, թե ուրիշներն ինչ միջոցառումներ են կազմակերպում և միանալ նրանց՝ սեփական ծրագրով: Գուցե ձեր համայնքում պիտի ինչ-որ մի համերգ լինի, ֆիլմի դիտում, համաժողով կամ մեկ ուրիշի կողմից կազմակերպվող ավետարանչություն: Այս միջոցառումներին մասնակից լինելը ձեզ զերծ կպահի կազմակերպչական շատ խնդիրներից և ժամանակ կտա ավելի շատ ուշադրություն դարձնելու սեփական ծրագիրը կատարելագործելուն, գործընկերների հետ մտերմանալուն. այդ ամենը դրականորեն կազդի ձեր ծառայության վրա:

Եթե **«4-2-5»** մոտեցման համար աղոթել եք ու լավագույն կերպով նախապատրաստվել, ապա կարող եք վստահ լինել, որ կհասնեք ավետարանչության ընդունված եղանակներով Հիսուսին ներկայացնելու ձեր նպատակին, որին մասնակից կլինեն ուսանողների անհավատ ընկերները:

«Երիտասարդներին քո Ավետարանով երբեք մի՛ ձանձրացրու»:

Ջիմ Ռեյբերն

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Ամեն ինչը՝ տեղը տեղին

Ավետարանչական ծառայությունն իրականացնելու համար պետք է հավաքվել թիմի բոլոր ակտիվ ու նվիրյալ անդամներով (ծնողներ, ուսանողներ և այլն): Կարևոր է, որ քննարկումները նպատակասլաց ընթանան, որ յուրաքանչյուրն արտահայտվելու հնարավորություն ունենա, և ոչ մի կարևոր միտք չկորչի կարծիքների տարափի մեջ: Դրա համար կարելի է մասնակիցներին փոքրիկ թերթիկներ տալ (օրինակ՝ սոսնձվող թերթիկներ), որոնց վրա կարող են գրառել քննարկման ընթացքում իրենց մոտ առաջացած կարևոր մտքերը: Քննարկումների ամփոփման ժամանակ հնարավոր կլինի արտահայտել այդ մտքերը և ապա ընդգրկել վերջնական արդյունքի մեջ:

Ավետարանչական միջոցառում կազմակերպելու հետ կապված թեմաների քննարկում.

Ա. Նպատակը. ի՞նչ կոնկրետ նպատակ եք հետապնդում՝ մասնավորապես այս միջոցառումը կազմակերպելով:

Բ. Թիրախային խումբը. Ո՞ր հաստատությունից և ի՞նչ տարիքի մարդկանց եք հրավիրելու այս միջոցառմանը:

Գ. Թեմա. ի՞նչն է լինելու միջոցառման ընդհանուր թեման:

Դ. Խնդիրներ. ի՞նչ խնդիրներ կան լուծելու, որպեսզի միջոցառումն ընթանա անարգել ու բովանդակալից:

Ե. Գաղափարներ. Ի՞նչ հատուկ ստեղծագործական մտահղացումներ եք իրագործելու:

Զ. Ռեսուրսներ. մարդկային ի՞նչ ունակություններ, նյութական ի՞նչ միջոցներ են հարկավոր:

Է. Պատասխանատուներ. ո՞վ է լինելու այս կամ այն գործողության, ծրագրի այս կամ այն հատվածի պատասխանատուն: Երբ է այս կամ այն բանն անելու ճիշտ ժամանակը:

Ամեն ինչը՝ մի ուղղությամբ

Քննարկումների համար կարող է պահանջվել մի քանի հանդիպում: Ժամանակը ճիշտ օգտագործելու համար պետք է մասնակիցներին տեղեկացնել, թե ինչ հարցերի մասին են վերջնական որոշումներ ընդունվել, ինչ խնդիրների մասին են բոլորը մտածում և այլն: Միմյանց հարգելը և բոլորին արտահայտվելու հնարավորություն ընձեռելը միջոցառման բարեհաջող կազմակերպման և ընթացքի գրավականներից են: Կարևորագույն գործոններից է նաև աղոթքը: Ե՛վ սկզբում, և՛ ընթացքում, և՛ վերջում լավ կլինի չանտեսել աղոթքն ու այսպիսի խոսքերով դիմել Աստծուն.

«Տե՛ր, մենք ցանկանում ենք Հիսուսին ներկայացնել ավետարանչության ընդունված եղանակներով, որոնց մասնակից կլինեն ուսանողների անհավատ ընկերները: Ամեն »:

Նման կերպով կազմակերպված միջոցառման ընթացքում մարդիկ հեշտորեն կգտնեն Հիսուսին :

Հիշենք Աստծո նպատակը՝ ամեն դպրոցի ամեն աշակերտի կյանքը բարելավել՝ նրան Հիսուսի հետ ծանոթացնելով:

Ավետարանչության միջոցներ

«Մագնիսական ուժը» գրքում Բարրի Քլեյրը ներկայացնում է ավետարանչության պարզ ու մատչելի մոտեցումներ: Երիտասարդական ծառայության առաջնորդներին տրվում են տարբեր տեսակի խորհուրդներ ավետարանչության մեջ իրենց խմբի ուսանողներին ընդգրկելու արդյունավետ մոտեցումների մասին: Այստեղ քայլ առ քայլ բացատրություններ կան կամավորներին ընտրելու, գովազդային ծրագիր նախապատրաստելու, նախահաշիվ կազմելու, ավետարանչությունն անցկացնելու և դրան հաջորդող քայլերն անելու մասին:



Այս նյութերը կարող ես պատվիրել www.reach-out.org կայքից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում ավետարանչական գործողություններ կատարելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է ավետարանչական գործողություններ կատարելը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու ավետարանչական գործողություններ կատարելու համար:

Ովքե՞ր են այն անհավատները, որոնց կարող են աշակերտները հրավիրել հերթական ծառայությանը:

Որտե՞ղ եք կատարելու ավետարանչական գործողություններ:

Ե՞րբ եք սկսելու կատարել այս գործնական քայլերը:

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս ի մի բերել «Քրիստոսակենտրոն երիտասարդական ծառայության» ծրագիրը:

Սույն ձեռնարկում ներկայացված նյութի մասին խորհելով՝ կարող ես նշմարել այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է կատարել կյանքդ ու ծառայությունդ Հիսուսի կյանքին ու ծառայությանը առավել նմանեցնելու համար: Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկել, որպեսզի տեսական փուլից հնարավոր լինի անցնել իրականացման փուլին: Նախ՝ պետք է հատուկ ժամանակ տրամադրել անցած նյութը կրկնելու և առավել իրատեսական հայացքով առաջարկված գործողությունների պլանները քննելու համար: Առանձնացի՛ր, հեռո՛ւ մնա ուշադրությունդ շեղող ամեն պարագայից ու ամբողջ սրտով ու մտքով ընկղմվի՛ր Աստծո մեջ: Նշումնե՛ր արա «Գործողությունների պլանի ամփոփագիր» և յուրաքանչյուր դասի «Գործողությունների պլան» բաժիններում:

Գործողությունների պլանի ամփոփագիր

Նախորդ դասերում տրված «Գործողությունների պլան»-ների պատասխանները պետք է ի մի բերել այստեղ: Դրա համար պետք է վերանայել յուրաքանչյուր դասի գործողությունների պլանը, մտապահել մի քանի կարևոր գործողություններ և այդ ամենը տրամաբանական հերթականությամբ դասավորել: Խորհուրդ է տրվում.

- «Գործողությունների պլանի ամփոփագիրը» ներառել ամենօրյա աղոթքներում,
- «Գործողությունների պլանի ամփոփագրի» օգնությամբ ծառայությունը ներկայացնել եկեղեցու հովվին և մյուս առաջնորդներին:

«Գործողությունների պլանի ամփոփագրում» երկու էջ է ներառված:

Գործողությունների պլանի ամփոփագրի էջեր

Այս էջերում կարող ես գրի առնել անելիքներդ, փոփոխություններ կատարել դրանցում: Այստեղ գրվածը օգտակար կլինի հատկապես հաջորդ տարվա ծառայության նպատակներդ դնելու ժամանակ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մտերմություն Քրիստոսի հետ	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Ջերմեռանդ աղոթք	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Առաջնորդների վերապատրաստում	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Ուսանողների վերապատրաստում	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Մուտք գործել սովորողների միջավայր	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Ավետարանչական ծրագրերի մշակում	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մտերմություն Քրիստոսի հետ	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Ջերմեռանդ աղոթք	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Առաջնորդների վերապատրաստում	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Ուսանողների վերապատրաստում	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Մուտք գործել սովորողների միջավայր	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.
Ավետարանչական ծրագրերի մշակում	
Կարևոր միտք	Գործնական քայլեր. 1. 2. 3.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ ՄՏԵՐՄԱՆԱԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում Քրիստոսի հետ առավել խորությամբ մտերմանալու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է քեզ համար Քրիստոսի հետ մտերմանալը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու նրան առավել լավ ճանաչելու համար:

Ո՞ւմ առջև պատասխանատու կլինես քո առաջընթացի համար:

Որտե՞ղ ես պատրաստվում հանդիպել Քրիստոսին:

Ե՞րբ ես նրան հանդիպելու համար ժամանակ հատկացնելու:

ՋԵՐՄԵՌԱՆԴՈՐԵՆ ԱՂՈԹԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում ջերմեռանդորեն աղոթելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է ջերմեռանդ աղոթքը քեզ և քո ծառայության մեջ ընդգրկված մյուս մարդկանց համար կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու ջերմեռանդորեն աղոթելու համար:

Ո՞ւմ հետ պիտի կազմես աղոթողների եռյակ:

Որտե՞ղ եք աղոթողների եռյակով հանդիպելու:

Ե՞րբ եք աղոթողների եռյակով հանդիպելու:

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում առաջնորդներին վերապատրաստելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է առաջնորդներին վերապատրաստելը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու առաջնորդներին վերապատրաստելու համար:

Ովքե՞ր են այն առաջնորդները, որոնց պիտի վերապատրաստես:

Որտե՞ղ եք հանդիպելու դասընթացն անցկացնելու համար:

Ե՞րբ եք սկսելու և որքա՞ն ժամանակ եք շարունակելու առաջնորդների վերապատրաստման դասընթացը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում ուսանողներին վերապատրաստելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է ուսանողներին վերապատրաստելը և աշակերտ դարձնելը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու ուսանողներին վերապատրաստելու համար:

Ովքե՞ր են այն ուսանողները, որոնց պիտի վերապատրաստես և այն առաջնորդները, ովքեր պիտի վերապատրաստեն նրանց:

Որտե՞ղ եք հանդիպելու դասընթացն անցկացնելու համար:

Ե՞րբ եք սկսելու և որքա՞ն ժամանակ եք շարունակելու ուսանողների վերապատրաստման դասընթացը:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում սովորողների միջավայրը մուտք գործելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է սովորողների միջավայր թափանցելը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու սովորողների միջավայր թափանցելու համար:

Ովքե՞ր են այն սովորողները, որոնց հետ պիտի ընկերանաս իրենց ուսումնական հաստատությունում:

Որտե՞ղ եք կատարելու դա՝ ո՞ր հաստատությունն եք գնալու:

Ե՞րբ եք սկսելու կատարել այս գործնական քայլերը:

ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այժմ ի՞նչ ես անում ավետարանչական գործողություններ կատարելու համար:

Առաջիկայում այստեղ սովորած նյութը վերհիշելով՝ մշակի՛ր քեզ հատուկ «Գործողությունների պլան»:

Ինչո՞ւ է ավետարանչական գործողություններ կատարելը կարևոր:

Ի՞նչ նպատակներ ես դնելու ավետարանչական գործողություններ կատարելու համար:

Ովքե՞ր են այն անհավատները, որոնց կարող են աշակերտները հրավիրել հերթական ծառայությանը:

Որտե՞ղ եք կատարելու ծառայությունը:

Ե՞րբ եք սկսելու կատարել այս գործնական քայլերը:

ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Քրիստոսի հետ մտերմանալու և ջերմեռանդ աղոթելու կապակցությամբ

Ա. Ինչպե՞ս իմանամ, որ ներված եմ:

Ներումն Աստծո կյանքով ու սիրով լցվելու նախապայմանն է: Մարդը հաճախ դժվարանում է ընդունել, որ Աստված ներել է իրեն: Սակայն դա փաստ է. Աստված արդեն ներել է մեզ: Անդամալույծ մարդուն Հիսուսը համարձակորեն ասաց, որ նրա մեղքերը ներված են և, որպեսզի ապացուցի ներելու իր լիազորությունը, բժշկեց նրան (Մարկ. 2.1-13): Աստված այսպիսի խոստում է տվել. «Եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար, որ մեր մեղքերը ների և մաքրի մեզ ամեն անիրավությունից» (Ա Հովհ. 1.9): Ուրեմն եթե ներման կարիք ունենք, ապա նախ պիտի խոստովանենք մեր մեղքերը, որից հետո Աստված կների ու կմաքրի մեզ Հիսուսի կատարած մեծագույն և անփոխարինելի գործի հիման վրա: Խնդիրն այն է, որ հաճախ մենք դժվարանում ենք ներել ինքներս մեզ: Մեղքը խոստովանում ենք, սակայն չենք կարողանում ձերբազատվել մեղավորության զգացումից: Քրիստոսը վճարեց մեր մեղքերի համար, որպեսզի մեզ ոչ միայն մեղքից, այլ նաև մեղավորության զգացումից ազատի: Պետք է որ ազատվենք մեղքից, թոթափենք մեզնից մեղավորության զգացումը, որովհետև «որքան որ արևելքը հեռու է արևմուտքից, այնքան հեռացրեց [Աստված] մեզնից մեր հանցանքները» (Սաղմ. 103.12):

Բ. Ինչպե՞ս խնդրեմ, որ ինձ ներեն և ինչպե՞ս ինքս ներեմ մարդկանց:

Ներում խնդրելու մասին. Սուրբ գրքում մերձավորին ներելու մասին գրված է այնքան, որքան Աստծո կողմից ներված լինելու մասին: Առանց մերձավորին ներելու և նրա ներումն ընդունելու, ոչ միայն խափանում ենք մեր հարաբերությունն Աստծո, այլև շրջապատի մարդկանց հետ: Մեկից ներում խնդրելիս հետևի՛ր Հիսուսի խոսքին, որ գրված է Մատթեոս 5.23-24-ում.

- Հիշի՛ր. եղբայրդ ինչ-որ բա՞ն ունի քո դեմ: Տիրոջը խնդրի՛ր և նա քեզ ցույց կտա, թե ումից պետք է ներողություն խնդրես:
- Հաշտվի՛ր. ամենայն խոնարհությամբ ու զղջումով գնա՛ նրա մոտ ու ներողությո՛ւն խնդրիր: Փորձը ցույց է տվել, որ ներում խնդրելիս պետք է խոսել պարզ ու հստակ՝ առանց որևէ երկիմաստ խոսքերի: Ոչ թե ասա. «Եթե սխալ եմ եղել...», այլ պարզապես անկեղծորեն ասա. «Ների՛ր ինձ, խնդրում եմ»: Քայլն արդեն նրանն է, նա պիտի որոշի՝ ընդունակ է քեզ ներելու, թե ոչ:

Ներելու մասին. Մերձավորին ներելու համար հետևի՛ր Հիսուսի խոսքերին, որ գրված են Մատթեոս 7.3-5-ում և 18.15-18-ում: Երբ քեզ վիրավորել են, նախ հաղթահարի՛ր քո հիասթափությունը, բարկությունն ու դառնությունը: Աստծուն խնդրի՛ր, որ օգնի քեզ «աչքիդ գերանը հանելու», որպեսզի կարողանաս մյուսին էլ ինքդ ներել: Տե՛ս, թե ինչ կարող ես անել. առանձնացի՛ր ու պատկերացրո՛ւ, որ այդ անձնավորությունն է միայն քեզ հետ. ասա՛ այն ամենը, ինչ մտածում ես նրա մասին, թեթևացի՛ր և վերջում ամփոփի՛ր այսպես. «Ես քեզ ներում եմ»: Սրանից հետո միայն կարող ես գնալ տվյալ մարդու մոտ, ու դա կլինի Քրիստոսի սիրով, որովհետև քո սրտում արդեն ներել ես նրան:

Ներելն ու մյուսներից ներում խնդրելը փոքր խնդիր չէ: Որոշ մարդկանց համար դա իրենց կյանքի ծանրագույն քայլերից մեկն է: Բայց և այնպես, Աստված ներել է մեզ Հիսուսով: Եվ քանի որ Աստծո ներումն ունենք, պետք է որ ինքներս էլ անվերապահորեն ներենք և ներում հայցենք բոլորից, ում կամա, թե ակամա վիրավորել ենք:

Գ. Ինչպե՞ս փոխվեմ կյանքում:

Մենք ի զորու չենք ինքներս մեզ փոխելու. Աստված է, որ իր Հոգով փոխում է մեզ. մի՞թե այքան դժվար է սա հասկանալը: Գաղատացիս 2.20-21 խոսքերը մեզ հուշում են, թե ինչպես է դա լինում, և թե ինչ չպետք է անենք. 21-րդ խոսքն ասում է, որ հակված ենք «Աստծո շնորհն անարգելու»՝ թյուրիմացաբար կարծելով, թե ինքներս կարող ենք իրավիճակը փոխել: Սակայն, այդպես վարվելով, կարծես թե ասում ենք, թե Քրիստոսի մահն իզուր էր: Ուստի փոխվելու գրավականն Աստծո շնորհն է՝ «Խաչի և Հարության միջոցով քո մեջ գործելու է Աստծո գերբնական կարողությունը»:

Վարքագիծ փոխելու համար նախ հարկ է ընդունել երկու ճշմարտություն.

- Քրիստոս մեռավ, ես էլ մեռա՝ «ես Քրիստոսի հետ խաչվեցի»:
- Քրիստոս հարեավ ի մեռելոց, ես էլ հարեա ի մեռելոց՝ Քրիստոսի հարությամբ ու նրա Հոգով, «Քրիստոսն է այժմ բնակվում իմ մեջ»:

Ուրեմն, եթե Քրիստոսն է իմ մեջ բնակվում, ապա ինչպե՞ս ապրեմ. պետք է ապրեմ «Աստծո Որդու հավատով»: Վստահում ենք Աստծուն, հավատում նրա խոստումներին: Մեռած եմ ես, ոչինչ չեմ կարող փոխել, սակայն Քրիստոսն է բնակվում իմ մեջ, իսկ նա ի զորու է փոխելու ամեն ինչ: Նա մեզ «արդարացնում է», իր հետ ճշմարիտ հարաբերության մեջ է հաստատում, որպեսզի արդար կյանքով ապրենք՝ մեր հարաբերություններն իր և մարդկանց հետ լինեն շիտակ:

Դ. Ի՞նչ անեմ, եթե անկարող եմ լուծելու կարևոր մի խնդիր իմ կյանքում:

Երբեմն մարդիկ ի ծնե ծանր խնդիրներ են ունենում: Կան մեղքեր, որոնք խորն են արմատավորված, և հարկավոր է մեկը, ով կօգնի Քրիստոսին դառնալ և նրա զորությամբ այդ ամենից ձերբազատվել: Այդ մեկին փնտրելիս.

- Հիշի՛ր, որ Սուրբ Հոգին է Գերագույն Մխիթարիչն ու Խորհրդականը (Հովհ. 14.15-18):
- Խնդրի՛ր Տիրոջը, որ քեզ ամենահամապատասխան մարդն օգնության հասնի:
- Տե՛ս, որ այդ մարդու մոտեցման առանցքը Քրիստոսը լինի, այլ ոչ թե ուղղակի մարդասիրական հոգեբանությունը:
- Աղաչի՛ր ամենայն լրջությամբ, որ Տերը մաքրի քեզ լիովին, բժշկի և ազատագրի (Հովհ. 8.32, 36):

Ե. Գործնական ի՞նչ քայլերի դիմեմ Աստծուն ավելի լավ ճանաչելու համար:

Քրիստոսի հետ մտերմանալը մեր բարձրագույն նպատակն է: Մեր ներաշխարհը կենսական ուժ է ստանում նրա Կենդանի (անմահական) Ջրից (Հովհ. 4.13): Մեր յուրաքանչյուր արարք որոշվում է մեր ինքնությամբ: Ուստի պետք է Քրիստոսին նայենք, ամեն օր լցվենք նրա Հոգով: Օրեցօր Աստծո ներկայությանը պիտի ձգտենք: Օդի պես կարևոր է դա. ինչպես արտաշնչում ենք և ապա ներշնչում, այնպես էլ՝ հոգևոր իրականության մեջ, կարող ենք արտաշնչել՝ մեղքերը խոստովանել (ըստ Հովհ. 1.9-ի),

ապա նաև ներշնչել՝ Սուրբ Հոգով լցվել (ըստ Եփես. 5.18-ի): Օրվա ընթացքում այսպիսի հոգևոր շնչառությունը մեզ միշտ կհիշեցնի, որ Աստծո ներկայության մեջ ենք:

Հետևյալ գործողությունները կօգնեն փոքր-ինչ ավելի լավ ճանաչելու Քրիստոսին և կնպաստեն, որ նրա կյանքը լցվի մեր մեջ և մեզնից դուրս հորդա:

- Առանձնացի՛ր Աստծո հետ՝ ամեն օր, առնվազն կես ժամով:
- Աղոթի՛ր. աղոթի՛ր եռյակով, ինչպես որոշել ես:
- Անգի՛ր սովորիր սուրբգրային խոսքերը. կամաց-կամաց կսկսես Աստծո միտքն ունենալ:
- Աղոթի՛ր քո անգիր արած խոսքերով:
- Ժամանակ առ ժամանակ, կես օրով կամ մեկ օրով, ծոմապահությամբ աղոթքի՛ նվիրվիր:
- Կարդա՛ Սուրբ Գիրքը, կարդա՛ լավ գրքեր Աստծո հետ մտերմանալու և աղոթքի մասին:

Առաջնորդների վերապատրաստման կապակցությամբ

Ա. Ի՞նչ սկզբունքներով առաջնորդվեմ առաջնորդներ հավաքագրելիս:

Շատերը անհարմարություն են զգում երիտասարդական ծառայության մեջ նման պատասխանատվություն կրելուց: Ուստի նախ պետք է փարատել նրանց անհանգստությունը: Պետք է ասել, որ հմուտ և երիտասարդների հետ աշխատելու փորձառություն ունեցող մարդկանց չեք փնտրելու, այլ այնպիսի մարդկանց, ովքեր կարևորում են այս ծառայությունը, ունեն առաջնորդության պոտենցիալ հնարավորություններ և պատրաստ են սովորելու: Ասա՛, որ փնտրում ես հավատարիմ, պատրաստակամ ու համեստ մարդու, որին կփոխանցես այն, ինչ գիտես ծառայության մասին, և ինքդ էլ շատ բան ունես սովորելու:

Պետք է անհատական մոտեցում ցուցաբերել: Պարզապես հայտնի՛ր ամեն մեկին, որ առաջնորդներ ես փնտրում, որ մտադիր ես պարբերաբար հանդիպել նրանց հետ՝ մոտիկից ծանոթանալու թե՛ նրանց հետ, թե՛ Քրիստոսի, և խնդիր ունես պարզելու պատանիներին ու երիտասարդներին հուզող հարցերն ու դրանց այնպիսի լուծումներ տալու, ինչպիսին Քրիստոսը կտար: Մի՛ ստիպիր, որ այդ մարդն անմիջապես

պատասխան տա քեզ, այլ խնդրի՛ր, որ աղոթի ու առանց որևէ ճնշումի որոշում ընդունի այդ խմբում ընդգրկվելու վերաբերյալ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Այս դեպքում լավագույն թեկնածուները ծնողներն են, քանի որ հարցը վերաբերում է անմիջապես իրենց զավակներին:

Բ. Բոլորի՞ց պահանջեմ, որ առաջնորդների ժողովներին հաճախեն:

Ո՛չ բոլորից, հատկապես, եթե տեսնում ես, որ տվյալ մարդը առանձնապես ոգևորված չէ այդ հարցով. ավելի լավ կլինի նրան ժամանակ տաս կողմնորոշելու: Իսկ եթե պահանջես, որ ներքին մղում չունեցող մարդը մասնակցի առաջնորդների ժողովներին, ապա նա կարող է բացասական ազդեցություն ունենալ մյուսների վրա՝ իր անտարբեր վերաբերմունքը փոխանցելով մյուսներին: Պարբերաբար պետք է հավաքվեք այս հարցով մտահոգված մարդկանցով, որպեսզի դրական, գործնական մթնոլորտում Աստծուց անելիքների հրահանգ ստանաք: Ժամանակի ընթացքում մարդիկ կհամոզվեն, որ այս ծառայությունն իրենց պատիվ է բերում, որ նրանք իսկապես կարևոր գործ են անում:

Գ. Կարո՞ղ են հետագայում նոր մարդիկ միանալ առաջնորդների խմբին:

Եթե երիտասարդական ծառայություն սկսելու և առաջնորդների խումբ կազմելու համար հայտարարություն ես տվել եկեղեցում, եթե կամավորների հետ հատուկ հանդիպումներ ես ունեցել, ապա դժվար թե ուրիշները սկզբնական փուլում միանալու առաջարկ անեն: Հնարավոր է, սակայն, որ ժամանակի ընթացքում, տեսնելով առաջնորդների խմբի ոգևորությունն ու ծառայության պտուղները, որոշ մարդիկ դիմեն անդամագրվելու: Նրանց պետք է խնդրեք սպասել 12 շաբաթ, երբ հնարավոր կլինի առաջնորդների նոր խումբ ձևավորել: Նոր խումբ կազմելիս օգտակար կլինի «Առաջնորդների վերապատրաստում» դասերի շարքի առաջին հատորը, որ կոչվում է «Հիսուս Քրիստոսի հետ անձնական ընթացք»: Այսպիսով՝ նորանոր խմբեր կարող ես ձևավորել:

Առաջնորդների խումբը պետք է պարբերաբար հանդիպի, քննարկի բոլորին հուզող հարցեր, ապա կազմի ավելի փոքր խմբեր, որոնք կքննարկեն մասնավոր հարցեր այս կամ այն տարածքի սովորողների այս կամ այն խմբի վերաբերյալ:

Դ. Ի՞նչ անեմ, երբ մեկը թերանում է իր ծառայության մեջ:

Նախ պետք է ի սկզբանե տեսլականը պարզ ու հստակ կերպով ներկայացնել և պարբերաբար վերադառնալ դրան: Տեսլականի փոխանցումն առավել արդյունավետ է լինում, երբ առանձին-առանձին ես հանդիպում ապագա առաջնորդների հետ: Ամեն մեկին պետք է մանրամասն բացատրել «Անձնական որոշման» դրույթները (տե՛ս «Առաջնորդների վերապատրաստման» շարքի յուրաքանչյուր հատորյակում):

Երբ նկատում ես, որ ինչ-որ մեկը թերանում է, լավ կլինի նրա հետ առանձին զրուցես և պարզես պատճառը: Մարդիկ սովորաբար ունենում են զանազան խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում տվյալ մարդու ծառայության վրա: Փորձի՛ր օգնել նրան: Թերանալու հնարավոր պատճառներից մեկն էլ այն է, որ տվյալ մարդը հասկացել է, որ դա իր ծառայությունը չէ: Այս դեպքում պետք է նրան ազատես իր վրա վերցրած պատասխանատվությունից՝ հուսալով, որ նա կգտնի իրեն հարիր ծառայություն:

Ե. Ինչպե՞ս վարվեմ, երբ կամավորը լավ չի վերաբերվում երիտասարդներին:

Եթե մարդը զգում է, որ կանչված է երիտասարդական ծառայության և փորձում է ընդգրկվել առաջնորդների խմբի մեջ, ապա պետք է նրան համապատասխան ծառայության հնարավորություն տալ: Այդ մարդուն դիտելով, նրա մասին հետաքրքրվելով՝ ներքուստ կիմանաս, թե որն է նրա ուժեղ կողմը, որ բնագավառում նա առավել արդյունավետորեն կկիրառի իր տաղանդը: Շատ հնարավոր է, որ նա իր ճիշտ տեղում չէ, և այդ պատճառով էլ իր ծառայությունը լավ չի ստացվում: Մարդը կարող է բարեհաջող աշխատել զանազան սարքերով, համակարգիչներով, սակայն թերանալ անմիջապես երիտասարդների հետ շփվելիս: Իսկ եթե հարցը վերաբերում է նրա վերաբերմունքին, ապա պետք է եկեղեցու առաջնորդներին հայտնել այդ մասին և սուրբգրային եղանակով որոշել նրա հետագա առնչությունը երիտասարդական ծառայության մեջ:

Միով բանիվ՝ քո գործն է օգնել, որ մարդիկ իրենց ճիշտ տեղը գտնեն Քրիստոսի մարմնի մեջ:

Սովորողներին վերապատրաստելու կապակցությամբ

Ա. Ո՞վ պետք է առաջնորդի երիտասարդական խումբը:

Այս հարցին տված քո պատասխանը լուրջ ազդեցություն կունենա ծառայության վրա: Այն պետք է համահունչ լինի քո միջավայրի առանձնահատկություններին: Ահա մի քանի

ուղղորդիչ մտքեր: Հաշվի առնենք, որ առաջնորդական խմբի անդամներն են վարելու երիտասարդական ժողովները, քանի որ նրանք իրենց հերթին անցնում են աշակերտության ժողովներով, երբ հավաքվում են առաջնորդների կազմում քննարկելու զանազան հարցեր: Մյուս կողմից, սակայն, պետք չէ պնդել, որ առաջնորդների կազմի յուրաքանչյուր անդամ պետք է առաջնորդի երիտասարդական ժողով: Բանն այն է, որ բոլորը չեն կանչված երիտասարդական ծառայություն՝ լոկ ժողովներ առաջնորդելու համար: Իհարկե, պետք է բոլորին էլ խրախուսել կազմակերպելու և առաջնորդելու երիտասարդական ժողովներ ու դասընթացներ, սակայն գիտակցել նաև, որ երիտասարդական ծառայությունն ավելին է, քան դա:

Պետք է փոքրից սկսել. այս դեպքում՝ կազմել մեկ կամ երկու խումբ միայն: Գուցե մեկը տղաների, մյուսն աղջիկների խմբեր լինեն: Սրանցից մեկի առաջնորդը պիտի լինես դու՝ համապատասխան մթնոլորտ ստեղծելու, ընդօրինակելի կերպար լինելու համար: Քո այս փորձառությունը կօգնի նաև հասկանալու, թե որքանով կարելի է ընդլայնել յուրաքանչյուր խումբ:

Հիշի՛ր՝ ծնողներն այսպիսի խմբերի լավագույն առաջնորդներն են: Ծնողներին պիտի տրամադրել այն բոլոր միջոցները, որոնք ունես ձեռքի տակ, որպեսզի նրանք իրենց ծառայությունը հաճույքով անեն: Տե՛ս, օրինակ, «Խթան ծնողների համար» դասագրքերը:

Բ. Ինչպե՞ս խրախուսեմ պատանիներին, որպեսզի մասնակցեն խմբի ժողովներին:

Խմբի ժողովներին հավատարմաբար կմասնակցեն բոլոր այն երիտասարդները, ովքեր հատուկ քաղց ունեն Հիսուսի հանդեպ: Երբեմն նման երիտասարդներն ի հայտ են գալիս անակնկալ կերպով: Բայց հաճախ նրանց այդ քաղցը ծածկվում է անհամապատասխան վարքագծով: Ինչևէ, այս մարդիկ պետք է մասնակցելու հնարավորություն ունենան: Ճիշտ է շատերը հասուն չեն, սակայն հենց դա էլ այդ ժողովների նպատակն է՝ հասունանալ Քրիստոսի մեջ: Պիտի ընդունենք նրանց, ինչպես որ կան և առաջնորդենք այնտեղ, որտեղ պիտի գնան: Ահա թե ինչու նրանց պիտի հրավիրել մասնակցելու այս ժողովներին: Հաշվի առնենք.

- Օգտակար կլինի հայտարարություն անել բոլորի ներկայությամբ, ապա մոտենալ երիտասարդներին առանձին-առանձին և հարցնել, թե ինչ ակնկալիքներ ունեն այդ ժողովներից: Շատերը գուցե լավ պատկերացում չեն ստանում ընդհանուր հայտարարությունից և հարկ է նրանց առավել մանրամասն բացատրություններ տալ, որից հետո նա ի վիճակի կլինի կողմնորոշվել և դրական պատասխան տալ:

- Առանձին հանդիպումները կարևոր են: Մարդը պետք է նախօրոք իմանա, թե իրենից ինչ է ակնկալվում: Պետք է ներկայացնել «Անձնական նվիրում» կետը (որ գրված է «Հիսուսին ընդունելու մասին» գրքի 11-րդ էջում): Այս կետին պետք է անդրադառնալ նաև առաջին կամ նախնական ժողովների ընթացքում. լավագույն դեպքում մասնակիցները պիտի պատրաստ լինեն ստորագրելու համապատասխան ձևը:
- Հարկ է նաև նրանց ցույց տալ իրենց մասնակցության դրական արդյունքները: Այս դեպքում պետք է օրինակներ բերել՝ սեփական կյանքից, ուրիշների կյանքից, որպեսզի ասվածն առավել պատկերավոր և տպավորիչ լինի:

Գ. Ինչպե՞ս վարվեմ, եթե մասնակիցները չեն կատարում հանձնարարությունները:

Եթե երիտասարդներին «մեծ պատկերը» ճիշտ ներկայացնես և ճիշտ ընտրություն կատարես, ապա նման խնդիր կարող է և չառաջանալ (տե՛ս նախորդ հարցը): Շատ բան կախված է նաև խմբի առաջնորդի ազդեցությունից, ընդունված լինելուց: Ժողովի ժամերից դուրս որքան շատ ժամանակ անցկացնի նա երիտասարդների հետ, այնքան ավելի կմտերմանան նրա հետ և ավելի շատ կհարգեն նրան, հետևաբար՝ ավելի պատրաստակամորեն կկատարեն իրենց հանձնարարությունները: Ահա մի քանի կողմնորոշիչ մտքեր.

- Զանգահարի՛ր նրանց ժողովից մի քանի օր առաջ, հիշեցրո՛ւ հանձնարարությունը՝ ցույց տալով դրա կարևորությունը, հայտնի՛ր, թե ինչ թեմա պիտի լինի առաջիկա ժողովին: Կարող ես անգամ հեռախոսով աղոթել նրանց համար. այս քայլը դրական ազդեցություն կունենա ձեր հարաբերության վրա:
- Առաջարկի՛ր կազմել գործընկերային կապեր այնպես, որ երկու երիտասարդ պատասխանատվություն կրեն միմյանց հանդեպ. հանձնարարությունը կատարելու համար մեկն օգնի մյուսին:
- Եթե կա հատկապես շատ հետ մնացող երիտասարդ, ապա ի՛նքդ սկսիր աշխատել նրա հետ. նախ պարզի՛ր հետ մնալու պատճառները, ապա համբերատարությամբ օգնի՛ր նրան:
- Իսկ եթե թերանում է ամբողջ խումբը, ապա հարկ է բոլորի հետ բացեիբաց խոսել ժողովի ընթացքում: Ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ բոլորն անկեղծորեն խոսեն, միմյանց հետ պարզեն թերանալու պատճառները և միմյանց հետ լուրջ վերաբերվելու որոշում ընդունեն: Առաջնորդը պետք է պարզորոշ կերպով ցույց տա, որ ինչքան էլ թերանան, ինքը երբեք չի հրաժարվելու նրանցից:

- Սովորած նյութը կիրառելու հնարավորությո՛ւն ստեղծիր: Բանն այն է, որ գրեթե ամենուր շեշտը դնում են տեսականի, ոչ թե գործնականի վրա: Իսկ իմացածը չկիրառելով՝ մարդը կամաց-կամաց մոռանում է այն. կարծես նրա գիտելիքը հօդս է ցնդում: Նրանք պետք է ինքնուրույն կարողանան Հիսուսի մասին վկայել իրենց հասակակիցներին: Եվ ինչ էլ որ անեք, մի՛շտ հիշեք, որ Հիսուսին հետևելը երբե՛ք ձանձրալի չէ:

Դ. Կարելի՞ է արդյոք միևնույն խմբում ընդունել և՛ տղաների, և՛ աղջիկների:

Եթե ակնհայտ անհրաժեշտություն չկա, ավելի լավ է առանձնացնել: Դա է պահանջում մեր բազմամյա փորձը: Սա կրոնավորություն չէ: Աստվածաշնչում գրված է, որ հասուն տղամարդիկ պիտի տղաներին ուսուցանեն, կանայք էլ՝ աղջիկներին (Տիտոս 2.1-8): Երկու բան էլ կա՝ ի նպաստ այս դիրքորոշման:

- Երիտասարդները կարող են խմբում ընդգրկվել ոչ թե Հիսուսին ավելի լավ ճանաչելու ցանկությունից դրդված, այլ սխալ շարժառիթով՝ մի տղայի կամ աղջկա մոտ լինելու նպատակով:
- Կան հարցեր, օրինակ՝ սեռական կյանքի վերաբերյալ, որոնք ավելի անկաշկանդ և արդյունավետ կքննարկվեն միևնույն սեռի մարդկանց միջավայրում:

Ե. Հիմնականն անցնելուց հետո պե՞տք է, որ բոլոր գրքերին էլ անդրադառնանք:

Երիտասարդական ծառայության առաջնորդները հաճախ կարծում են, թե իրենց դասընթացն անցած երիտասարդներն ավելին գիտեն կամ ավելի հասուն են: Կամ եթե անգամ անցել եք հիմնական նյութը, դա դեռ չի նշանակում, որ ունկնդիրները բավարար կերպով կիրառում են այդ ամենն իրենց կյանքում: Պետք չէ անտեսել որևէ դասագիրք, քանի որ ժամանակը կգա, երբ այդ երիտասարդներից ոմանք կցանկանան շարունակել ծառայությունը և չեն իմանա՝ ինչպես դասավանդել անտեսված դասագրքի այս կամ այն դասը:

Ճիշտ կլինի նաև, որ դասագրքերին անդրադառնաք հերթով, քանի որ դրանք հենց այդպես էլ կազմվել են: Տրամաբանական հերթականության գիծն անցնում է փրկության վերաբերյալ «Հիսուսին հետևել» դասագրքից մինչև «Աշխարհը փոխել» դասագիրքը: Որոշ դեպքերում, իհարե, կարելի է հերթականությունը փոխել: Ասենք շուտով

միսիոներական ծառայության հնարավորություն է լինելու. այս դեպքում կարևոր է լավ սերտել «Հավատ սերմանել» դասագիրքը:

Սովորողների միջավայր մուտք գործելու կապակցությամբ

Ա. Ի՞նչ անեմ, եթե հանրակրթական դպրոցներ մուտք գործելու իրավունք չունեմ :

Իրավիճակը, իհարկե, դյուրին չէ: Սակայն նաև նահանջելու առիթ չպետք է դառնա: Ի՞նչ խոսք, պարիսպներ կան, բայց պարիսպները տապալվում են:

- Աղոթի՛ր, աղոթի՛ր, էլի՛ աղոթի՛ր... Սա քո կարևորագույն քայլն է: Դպրոցի շուրջը պտտվելով՝ աղոթի՛ր, աղոթքիդ ընկերների՝ եռյակիդ անդամների հետ միաբանվի՛ր ու աղոթի՛ր:
- Տվյալ դպրոցի աշակերտների և աշխատակիցների հետ ծանոթությունն՝ե՛ր հաստատիր: Ծառայի՛ր նրանց տարբեր եղանակներով, իմացի՛ր նրանց կարիքն ու օգնության ձե՛ռք մեկնիր՝ անշահախնդիր:
- Այս հարցով կարող ես միաբանվել նաև ուրիշ եկեղեցիների համապատասխան ծառայությունների հետ, կարող եք միասին խորհրդակցել և աղոթել:

Բ. Ի՞նչ անեմ, որ առաջնորդներն ակտիվորեն մասնակցեն ծառայություններին:

Առաջնորդների խմբում կլինեն մարդիկ, ովքեր ամեն ինչ կանեն ոգևորված և եռանդով, կլինեն նաև մարդիկ, ովքեր անհարմար կզգան անմիջական շփումներից: Առաջիններին պետք է հնարավորություն տալ շփվելու պատանիների հետ, մյուսներին՝ կատարելու այլ տեսակի ծառայություն՝ ի նպաստ պատանիների: Այս հարցում օգտակար կլինեն նաև ուսանողները, ովքեր, տարիքով մոտ լինելով աշակերտներին, ավելի լավ են հասկանում նրանց, մոտեցման ավելի հաջող ձևեր գիտեն:

Գ. Ի՞նչ իրավունքներ ունեմ դպրոցում:

Ոչ մի իրավունք էլ չունես: Մենք պետք է ծառայության դռնով դպրոց թափանցենք, ոչ թե իրավունքներ պաշտպանելով: Տվյալ թաղամասի եկեղեցու երիտասարդական ծառայողի համեմատ ծնողներն ինչ-որ տեղ առավելություն ունեն դպրոցում: Ուստի ծնողները կարող են առավել ակտիվորեն ընդգրկվել դպրոցական կյանքում, առավել լավ պատկերացում ունենալ դպրոցի կարիքների մասին և ամեն ինչ անել, որպեսզի օգնելով, անկեղծ սեր ցուցաբերելով վաստակեն տնօրենի և ուսուցչական կազմի հարգանքն ու վստահությունը: Այս հարգանքի ու վստահության հիման վրա դպրոցականները նույնպես առիթ կունենան տեսնելու քրիստոնեական ճշմարիտ հոգատարություն, սեր ու քաղցրություն: Մի՞թե սա ավելի լավ չէ, քան գնալ ու «Աստվածաշնչի սերտողության» ժամեր պահանջել, արտադասարանական խմբակներ կազմել ու քարոզել: Որքա՞ն կտևի այդպիսի նախաձեռնությունը:

Դ. Ի՞նչ անեմ, եթե մեր թաղամասում մեկից ավելի դպրոցներ կան:

Որքան շատ, այնքան լավ: Սա դրական երևույթ է, ցույց է տալիս քո ծառայության ընդլայնման հնարավորությունները: Տե՛ս, թե ինչեր կարող ես անել.

- Սկսի՛ր մի դպրոցում անձնվիրաբար ծառայելով: Սա մյուս առաջնորդների համար կարող է վերապատրաստման արդյունավետ միջոց լինել: Եվ երբ առաջնորդներից ոմանք պատրաստ լինեն անցնելու մյուս դպրոց, ապա թող գնան:
- Օգտվի՛ր քրիստոնյա աշակերտների կարողություններից: Նրանք դպրոցի մեջ են, նրանք իրենց անհավատ համադասարանցիների հետ շփվելու, նրանց վրա ազդեցություն ունենալու ավելի շատ հնարավորություն ունեն: Այս թեմայով նույնպես լավ գրքեր կան:
- Համագործակցի՛ր դպրոցական ծառայություն ունեցող տարբեր կազմակերպությունների և եկեղեցիների հետ: Կարևորն աշակերտների դարձի գալն է, ոչ թե այն, թե ո՛ր խումբը կամ եկեղեցին ավելի շատ դպրոց այցելած կլինի: Համեստությո՛ւն ունեցիր համագործակցելու նրանց հետ:

Ե. Ի՞նչ անեմ, եթե եկեղեցին ինձ թույլ չի տալիս դպրոց գնալ:

Շատ բարդ հարց է: Մարդկային հարաբերությունները կարող են այնքան խճողված լինել, որ հնարավոր չէ միանշանակ պատասխան տալ: Եթե քեզ արգելողները պարզապես իրենց «ես»-ը հաստատելու խնդիր չունեն, և եթե նրանց հետ դու անախորժությունների մեջ չես, ապա պետք է լրջորեն մտածել, թե ինչու պիտի նրանք համոզեն քեզ այդ քայլից հրաժարվել: Գուցե մի բան գիտեն, որ դո՞ւ չգիտես: Գուցե Աստված իրենց միջոցով քեզ ցույց է տալիս, որ դեռևս ժամանակը չէ՞:

Բայց եթե հասկանում ես, որ պատճառը նրանց անտարբերությունն է, որ տեսլականդ չի համապատասխանում նրանց տեսլականին կամ որ չեն ուզում «այդպիսի երեխաներ ընդունել» եկեղեցում, ապա պարզ է, որ լուրջ խոչընդոտի ես բախվել: Պետք է.

- Աղոթել, որ Աստված իմաստություն տա այս հարցում ճիշտ վարվելու համար:
- Պարզ ու հստակ կերպով (եթե անհրաժեշտ է՝ գրավոր) նրանց հայտնի՛ր տեսլականիդ մասին: Համաձայն են դրան, թե ոչ՝ կարևոր չէ, կարևորն այստեղ այն է, որ լավ հասկանան, թե ուր է տանում քո տեսլականը:
- Խնդրել եկեղեցու առաջնորդներին, որ մեկ անգամ ևս քննարկեն քո ծառայության հարցը:
- Գիտակցել, որ եթե չհամաձայնեն, ապա երկար ճանապարհ անցնել չեն կարող (Ամովս 3.3): Այս քայլերից ավելին չես կարող անել, եթե չեն ուզում, որ շարունակես ծառայությունդ: Միգուցե անհրաժեշտ է, որ ուրիշ ծառայության անցնես: Ժամանակի ընթացքում, եթե տեսլականդ հօդս չցնդի, գուցե ավելի լավ հնարավորություն կունենաս եկեղեցու առաջնորդներին դիմելու այս նույն խնդրով: Տերը քեզ ազատություն կտա գնալու ամեն դպրոցի ամեն երեխայի հետևից, որպեսզի նրանց շահես՝ հանուն Հիսուս Քրիստոսի:

Ավետարանչության հնարավորություններ ստեղծելու կապակցությամբ

Ա. Ի՞նչ անենք, եթե չունենք ավետարանչություն կազմակերպելու ո՛չ տաղանդ, ո՛չ գումար:

Ինչպես Հիսուսը հինգ հացն ու երկու ձուկը բազմացրեց, այնպես էլ դու, եթե ունեցածդ

հավատով Աստծուն ընծայես, նա կբազմապատկի այն ու կտա քեզ ավելին, քան կարող էիր ակնկալել: Որպեսզի Աստված բազմապատկի քո միջոցները, կատարի՛ր հետևյալ քայլերը:

- Անհրաժեշտ միջոցների համար հաճախակի աղոթի՛ր և ջերմեռա՛նդ եղիր:
- Նախապատրաստվի՛ր ավետարանչության (տե՛ս հաջորդ կետը):
- Շուրջդ հավաքի՛ր ավետարանելու պատրաստ մարդկանց:
- Քո փափագի մասին հայտնի՛ր եկեղեցում, քեզ օգնության եկող մարդիկ կգտնվեն:
- Ծախսերը չպետք է սահմանափակեն ծառայությունդ. համագործակցի՛ր մյուս խմբերի հետ, ով ինչ կարող է, թող ներդնի՛ այս գործի համար:

Բ. Ի՞նչ է անհրաժեշտ արդյունավետ ավետարանչության պատրաստվելու համար:

Այս հարցն այնքան կարևոր է, որ դրա պատասխանի համար պահանջվեցին «Մագնիսական ուժը» գրքի առաջին 76 էջերը: Գիրքն օգնում է ձևակերպելու տվյալ ծառայության առաքելությունը, մշակելու ազդեցիկ ռազմավարություն, աղոթքի միջոցով «կոտրելու» պատանիների անտարբերությունն ու ընդդիմությունն Ավետարանի հանդեպ, ձեռք բերելու եկեղեցու, առաջնորդների խմբի և պատանիների աջակցությունը: Այստեղ ներկայացված է երկար, բայց և արդյունավետ ճանապարհը, քանզի հիշենք, որ մեզ ոչ թե հետաքրքրում են անարմատ ծիլերն ու կարճատև օգուտները, այլ մնայուն պտուղներն ու հեռահար արդյունքները:

Գ. Ի՞նչ անեմ, որ ոչ քրիստոնյա պատանիները հաճախեն ավետարանչական միջոցառումների:

Իմաստուն է այն եկեղեցին, որն ուշադրություն է դարձնում ոչ քրիստոնյաների դարձի գալուն: Իսկ այն եկեղեցին, որն իրենով պարփակված է, հետ կմնա: Ոչ քրիստոնյա պատանիներին հրավիրելուց առաջ նախ պետք է նրանց հետ ինչ-որ կապ ունենալ, առնվազն ծանոթանալ նրանց հետ: Ուստի դպրոց թափանցելն այս իմաստով վճռորոշ գործոն է: Երիտասարդներին չես հրապուրի վառվռուն լույսերով ու շնորհանդեսներով. նրանք կգնան, եթե հրավիրողն իրենց ընկերն է: Ուստի թե՛ խմբի ժողովներին հաճախող երիտասարդները, թե՛ առաջնորդներից ամեն մեկը պետք է շատ փափագի ծանոթ պատանիներին հրավիրել տվյալ միջոցառմանը: Միայն այսպիսի անկեղծ ցանկությունը կարող է ոչ քրիստոնյաներին բերել քրիստոնեական միջավայր:

Եթե ուզում ես, որ ոչ քրիստոնյաները ոչ թե մեկ անգամ այցելեն, այլ շարունակաբար հաճախեն ձեր կազմակերպած միջոցառումներին, ապա պետք է փոխես «կրոնավոր» մթնոլորտը, երիտասարդների համար ջերմ ու սիրալիր միջավայր ստեղծես: Այս հարցում ևս քեզ օգնության կգա «Մագնիսական ուժը» ձեռնարկը:

Դ. Կարիք կա՞, որ միջոցառումներ կազմակերպենք ամեն շաբաթ:

Քչի՛ց սկսիր: Առաջին միջոցառումը կազմակերպելու համար շատ աշխատանք է պահանջվում: Արա՛ հնարավոր ամեն բան, որպեսզի լավ տպավորություն թողնես առաջին անգամ այցելողների վրա. ամեն ինչը պիտի լինի պատշաճորեն նախապատրաստված: Ժամանակի ընթացքում, երբ հասունանան առաջնորդների խմբի անդամները, և երիտասարդներն էլ առավել ընդգրկված լինեն ծառայության մեջ, կարող ես նախաձեռնել ևս մեկ միջոցառում: Կարևորն այստեղ որակն է, ոչ թե հաճախականությունը: Կամաց-կամաց փորձ ձեռք բերելով՝ կարող ես նման բաներ կազմակերպել ամեն ամիս, գուցե նաև ամեն շաբաթ՝ հիշելով, սակայն, որ երիտասարդների փրկության հարցն է կարևոր, ոչ թե ձեր խմբի ընդունակությունների գովազդը: Կարևոր է Ավետարանը պարզ ու մատչելի կերպով ներկայացնելը: Այս հարցին կարող ես ստեղծագործաբար մոտենալ: Պարզի՛ր, թե պատանիներն ինչ կարիքներ ունեն և այդ կարիքների բավարարումը կապի՛ր Ավետարանի ուղերձների հետ: Օգտվի՛ր «Մագնիսական ուժը» ձեռնարկի խորհուրդներից:

Ե. Ավելի լավ է միջոցառումը եկեղեցո՞ւմ կազմակերպել, թե՞ մի չեզոք տեղ:

Կողմնորոշվելու համար մտաբերենք, որ պիտի անենք ամեն ինչ, որպեսզի կարողանանք քանդել երիտասարդներին Քրիստոսից զատող ամեն մի պատ, հաղթահարել ամեն խոչընդոտ: Այս բանը հիշելով՝ ե՛կ համեմատենք եկեղեցում կազմակերպելու առավելությունները մեկ ուրիշ տեղ անցկացնելու հնարավորությունների հետ: Հաշվի առնենք միջոցառումը կազմակերպելու ծախսերը, դահլիճը նախապատրաստելու և վերջում հավաքելու աշխատանքները, տեղանքն ու հեռավորությունը, տվյալ վայրի մասին ձևավորված հանրային կարծիքը: Պետք է հարցնել նաև երիտասարդների և պատանիների կարծիքն այն մասին, թե որտե՞ղ ավելի հարմար կլինի նրանց համար: